

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ, ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՌԸՆՉՈՒԹԻՒՆԸ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԸԵՏ

ՓՈԽԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

Մարդու հոգիին եւ միտքին առընչուող ստեղծագործութիւններուն միջեւ տարբերութիւններ կան, բայց արուեստական պատմէշներ չկան: Չկան նաեւ գիտական համարուած պարզացումներ: Այսպէս, երբեմն պէտք է յիշել Փասքալի խօսքը, որ «ոչինչ պարզ է ինչ որ կը տրուի հոգիին, եւ հոգին երբեք պարզօրէն չի տրուիր ոչ մէկ հարցի»:


Այսպէս է գրական երկը: Ան կրնայ պատկերացնել պատմական, ընկերային եւ հոգեբանական կացութիւններ, արծարծել գաղափարներ, առանց ճշգրիտ գիտութիւն ըլլալու: Ան կրնայ



Եզնիկ Կողբացի (380-450)

Դաւիթ Անյաղթ (470-450)
թուականները ճշգրիտ չեն

իմաստասիրական ենթահողի վրայ կեանքի տեսիլքներ, ապրումներ եւ բաբախումներ բերել, առանց տեսաբանական կառուցումներու կամ վիճակագրական տուեալներու: Նեղ իմաստով իրականութեան գերանցում կատարելով: Լուսանկարչութեան եւ գեղանկարիչի կտաւին տարբերութեան մասին մտածել, երկուքն ալ պատկեր ըլլալով հանդերձ նոյն բաները չեն: Բանաստեղծութեան մէջ միսթիքը կրնայ ճառագայթել, բայց ան սուրբերու աստուածաբանական զարգացումներուն բնմը չէ: Պատմութիւնը միշտ առատ նիւթ հայթայթած է գրականութեան, այդ նիւթը հաւատարմութեամբ գրական մշակման առարկայ ըլլալով հանդերձ, կը սաւառնի պատմութեան վրայ: Ո՞ր



Պլատոն Ն. Ք. 428(7) - 348(7)

այդքան էջեր գրուած են Վարդանանց կամ Պապ թագաւորի մասին, զորս մեզի կը հրամցեն Դերենիկ Դեմիրջեան եւ Րաֆֆի: Պատմագրութիւնը փոխանցած է տեղեկութիւնը, գրական երկը վերստեղծած է ըսուած եւ չըսուած կեանքը: Վիպագիրը ժամանակը եւ տարածքը կը բնակեցնէ տիպարներով եւ կեանքով, առանց բանտարկուելու չոր տուեալներու մէջ: Այդ ձեւով կը ծնի գրական երկը, որ տեղեկատուութենէ (եւ քարոզչութենէ) տարբեր մակարդակ եւ որակ կ'ենթադրէ, եւ երբ այդ ծուղակը կ'իյնայ, գրականութիւնը կը դառնայ այլ բան:

Ծանօթ է «յանձնառու» գրականութիւնը: Հրապարակագրութիւնը էապէս արտայայտութիւնն է յանձնառութիւններու, անոնց դրսեւորման, ժողովրդականացման եւ պարզաբանման: Երբ ան գիտնայ անմիջականի կապանքներէն ձերբազատուիլ, սաւառնիլ, տուեալներէն անդին սեւեռել կեանքը, մարդը՝ իր բարդութիւններով, ունենալ ոճային նուաճում, ուստում կը կատարէ գրականութեան մէջ: Օրինակ, Արփիար Արփիարեանի «Կարմիր Ժամուց»ը, առանց ինքնահիացման փառասիրութեան եւ տպաւորելու ճիգի, հրապարակախօսական ըլլալով հանդերձ, յանձնառու գրականութեան ինքնատիպ օրինակ մըն է, այժմէականութեամբ դրոշմուած եւ հզօր, բայց երեւակայութեան հրամցուող տիպարներով եւ բարախող կեանքով: Նոյնը կրնանք ըսել յուշագրութիւններու համար, որոնց ստուար մասը կը մնայ ընթացիկ ինքնապատումի մակարդակին, անձին մէջ բանտարկուած, իսկ լաւագոյններու պարագային կը հանդիպինք գրական նուաճումներու (Ռութեն Տէր Սինասեան, Վազգէն Շուշանեան): Մեծ գրողներու օրագիրները գրականութիւն են, ինչպէս Անտրէ Ժիտի: Բայց միայն պատմական դրուագներու թուումով յատկանշուող օրագրութիւնը գրականութիւն չէ, նոյնիսկ երբ օրագիր պահողը գրող է, ինչպէս որ է պարագան Աւետիս Ահարոնեանի այլապէս հետաքրքրական եւ կարեւոր օրագիրին, Մերի դաշնագրին բանակցութիւններու մասին: Հանրի Թրուայա իր պատմական կոթողական վէպերով կը կենդանացնէ ցարի դէմ դաւադրութիւն կազմակերպածներու աք-

Մարկոս Աւրելիոս
(Իմաստասէր եւ կայսր)
Ն. Ք. 121-180

սորը, ծանօթ «Տեսամպրիսդներ» անունով, բայց ստեղծելով կացութիւններ, տիպարներ, վերլուծելով հոգեբանական եւ ենթակայական կացութիւններ, մոռցնելով որ մեկնակէտը պատմական դրուագ է: Պատմական բովանդակութեամբ գիրք մը, նոյնիսկ երբ հաճելի կը թուի, ամբոխավարական տրամադրութիւն ստեղծելով, գրական երկ չ'ըլլար անպայման:

Նոյնն է պարագան իմաստասիրութեան: Ան ըլլալով պատմութիւնը, ընկերութիւնը, արժէքները, մեծ հարցականներու պատասխան փնտռող իմացական փորձ, բնականօրէն կ'առնչուի գրականութեան, բայց ան տարբեր ընթացք է: Իմաստասէրներ կան որոնք գրող են միաժամանակ: Բայց անոնց իմաստասիրական երկերը կ'անջատուին գրական երկերէն:

Յատկանշական է Ժան-Փոլ Սարթրի պարագան: Անոր իմաստասիրական երկերը, օրինակ, «Գոյը եւ Ոչինչը» (*L'être et le néant*) կամ «Երեւակայութիւնը» (*L'imagination*), իմաստասիրական երկեր են: Բայց իր տեսակէտները գրականացնող երկերը, ինչպէս «Կեղտոտ ձեռքերը» (*Les mains sales*) եւ ընդհանարպէս իր թատերական երկերը, գրականութիւն են: Այլ խօսքով, պատմութեան, իմաստասիրութեան, ընկերային գիտութիւններու եւ գրականութեան միջեւ կամուրջներ կան, բայց իւրաքանչիւրը ունի իր հունը: Երբ իւրաքանչիւրը իր հունէն դուրս կու գայ եւ կ'ուզէ նաեւ միւսը ըլլալ, կը դադրի եւ մէկը եւ միւսը ըլլալէ, կը դառնայ շփոթ:

Այս շփոթներուն դիմաց կը գտնուինք ամէն անգամ երբ գրական-ստեղծագործական աւիշը կ'աղքատանայ եւ կը փորձէ ճոխանալ իմաստասիրական ուսումնաքաղուած գաղափարներով, կամ իմաստասիրական փորձը գաղափարներու աղքատութեան պատճառով կը դառնայ դէպի գրականութիւն՝ տպաւորելու եւ յուզելու համար:

Սակայն այս սահմանագծումները արգելք չեն յանձնառու իրաւ գրականութեան կամ քաղաքականութիւնը հարստացնող մեծ գաղափարներու ծնունդին:

Գրական քննադատը,- ոչ գրախօսողը եւ ոչ գրադատը,- դժուար առաքելութիւն ունի ջոկելու եւ ջոկուածը հրապարակելու, որպէսզի եւ գրականութիւնը եւ իմաստասիրութիւնը ընթանան եւ հարստանան իւրաքանչիւրը իր ինքնուրոյնութեամբ, այլապէս երկուքի պարագային ալ կը յանգինք ճապաղութեան:

Լուսաբանուած ընթերցողը, որ վերջին հաշիւով դատաւոր է, ինք պիտի գիտնայ նախասիրութիւններով եւ թիւր ըմբռնումներով չառաջնորդուիլ: Իսկ ընթերցողը երբ կը դառնայ հազուագիւտ, լուսաբանուած ընթերցող փնտռել կը դառնայ պերճանք:

3. ՊԱՆԵԱՆ, 13 Ապրիլ 2013, Նուազի-լը-Կրան



Ժան-Փոլ Սարթր 1905-1980

ԻՇԽԱՆ ՉԻՖԹՈՒՆ

ԱՐՏԱՇՈՒՆ ԼԵԶՈՒՆ

ԿՈՉԱԿ

- Արտա՛շ, ուշադիր. Արտա՛շ, կամա՛ց...

Կ'երեւի Արտաշին գերմանացի ուսուցչուհին է, Համպուրկի կայարան դիմող մեր գնացքին մէջ, որ բերանացի կ'ուղղէ անոր շարժումները, զգուշութեան կը հրաւիրէ, որպէսզի չըլլայ թէ յեղակարծ սխալ բան պատահի, տղեկը սայթաքելով ինքզինք վիրաւորէ կամ նոյնիսկ սխալմամբ անձամօթ ճամբորդի մը հայի, ոտքին վրայ կոխէ, խանգարիչ դառնայ:

Ուսուցչուհին եւ երեք փոքրիկները մէջտեղ ոտքի կեցած են: Արտաշը կրճատուած Արտաշէս մըն է յայտնապէս: Ուշադրութեամբ մտիկ կ'ընեն, անունը, այո, անգամ մը եւս, ճիշդ կը լսեն արդեօք: Մեր ականջները շատ հայկականաց(ու)ած են, յղկուած հայութիւն կը յորդին: Եւ կը մեկնին նոյնիսկ ի տարածամու դէպի հայա... Տաս տարեկանի չափ ըլլալու է. ճիշդ չենք կրնար գուշակել՝ ո՞ր մէկն է երեքէն: Մասնագէտ ալ չկայ, որ ըսէ, հա, սա՛ մէկն է՝ աչքերո՛ւն նայէ: Կաթկթող հայութեան վազող ջուրերը թերեւս ուրիշ տեղեր կը հոսին: Հունիս չեն հասած: Ամեն պարագայի, Արտաշը, ահա, մեր առջեւ, հայու զաւակ, ըսենք, կանգնած է ճիշդ մեր Դորպատի ճամբուն վրայ: Հրապարակի մը դարձումը: Հիմնարկ մը ինքնին: Հաւանաբար ինքն ալ անուան մէջ նստած հայութիւն մը

միայն կը պտտցնէ: Իրեն ալ ըսած է ներքին իմաստութիւն մը՝ «Տաս լեզու սորվէ՛, բայց մայրենիիդ կրցածիդ չափ զօրաւոր հարուած մը տո՛ւր, հոգ չէ՛ կրաւորական»: Արովեանի Գերմանիոյ մէջ հաստատուած դասարանին բովը այս աւարտին հասած է արդարեւ: Արովեանէն շրջանաւարտ է Արտաշը: Ա՛խ, այդ լեզուն, լեզուն որ չըլլի, լսեր է ու ըսեր՝ Արտաշը, կ'ուզէիր գիտնա՞լ, թէ մարդ ընչի՞ նման կ'ըլլի, հէյ ջան Արովեան: Մենք գտած ենք հարցնող հանելուկիդ մեր պատասխանը: Ահաւասիկ՝ Տիարպաքրի ծոցէն ծնած ճերմակ վարդի նման շատախօսուն ճարտարութիւն կ'ըլլի, հայերէնէն զատ ամեն լեզուով կատարելի: Լեզուին այսքան հայաբոյր բացակայութիւնը, սիրելի Արովեան, հրամմէ՛ եւ վայելէ՛. դեռ հրամայէ՛: Դուն քանաքեռցի ես, Արեւմտեան Հայաստանը չես ճանչնար: Սովետականէն ալ առաջ ծնար: Այս վերջինը կրնայ լեզուագէտներ տրամադրել, ոչ միայն Գերմանիոյ, որոնք ախր ընտիր հայագէտ են, հայագիտութիւն եւ հայերէն կոչուած օտար մայրենին կը դասաւանդեն... միայն համալսարանը, ոչ տունը: Տաս լեզու ալ իրարու խաչենք, չենք հասնիր մայրենիին ծոցոտրութեան: Չայն գործածութեան կը տրամադրենք: Թող գերմանացիները դառնան անոր վայելքին կողմը: Ի վերջոյ պաւարհացիներ

խորովածահայկական ծագում ունին եղեր՝ հազար ձեռով փաստուած կայ մեր ուղեղին արխիւներուն մէջ: Օգնենք, որ խեղճերը վերադառնան իրենց արմատներուն: Մինչեւ Նոյ ու անկէ անդին: Արմատներու փնտռութիւնը խորովածի չափ կենսական է մեզի համար: Քարինային ականջը խօսի: Գիտցած հայերէն միակ նախադասութիւնը՝ «Ես հայ եմ»: Սկսուած հայութիւն մը իբրեւ մնայուն սկիզբ: Չերոյին վրայ կանգ առած: Ժամացոյցներ կ'ըլլան, կանգնեցուած, յատուկ պատգամ հաղորդող ժամու մը վրայ սլաքուած: Տասներկուքէն հինգ պակաս: Տասներկուքը, ըսենք, քսաներկու անց: Չեռքերը լուացած ու սրբած է Քարինան սուրբ: Մայրն ալ մեկնումի պահուն, քիչ մը անվստահ ու դժուար յիշելէն՝ «Յետութիւն, ցետութիւն» կ'ըսէ ինծի դառնալով. կը հասկնամ՝ «Յետութիւն»ի կը քարգմանեմ ծէսը: Ինքն ալ Արովեանի դպրոցէն անցած է. գերմաներէնով ֆրանսերէն եւ անգլերէն կը դասաւանդէ դպրոցի մը մէջ: Արտաշին ուսուցչուհիին պէս ուսուցչուհի մը ըլլալու է: Պաքու ծնած ըլլալով անշուշտ մայրենիի մը պէս ռուսերէն ալ գիտէ: Ահա քեզի՝ չորս լեզու: Ամուսինը Պուլկարիա ծնած գերմանացի ըլլալուն, թերեւս զքօսաշրջիկային մակարդակի պուլկարերէն մըն ալ գիտնայ: Թերեւս էշը ցեխէն կարենայ հանել ատրպէյճաներէնով, նոյնիսկ մոնկոլերէնի քանի մը բառերուն տիրապետէ, թէն այս վերջինին վստահ չեմ, բայց Արովեանի իմաստութեան չէ հասած: Անհա՛ս Արովեան: Կորուստիդ առեղծուածին պէս: Թերեւս չէիր գիտեր որ լեզուն ալ



Ա. Աղեւեան, Մոլորակ, 2006, իւղաներկ

քեզի պէս պիտի կլլուի առանց բաղութելու: Անթաղ այս ճակատագիրը: Միշտ յուղարկաւոր: Մինչեւ Արարատի գագաթ բարձրանալը ատելի դիրքին գտար, քան այդ մէկ իմաստութեանդ բանաձեւումին հանգրուանելդ: ... Բայց միշտ կ'ապրես մեր սրտերում... կարելորը այդ է արդէն: Կարելին այդ է միայն: Դուն բարձրացար, գոնէ մեզ ալ դէպի լեզու բարձրացուր: Իմաստութեանդ գաղտնիքին լեզուին: Տասին դիմաց կեցած, միս-միմակ, բութ ու բորանին, այդ մէկուն: «Հայի բախտ» կոչուածը կ'երեւի այս է: Գէթ մեր խելքը հասուննայ, ի հեճուկս մեր տտիպ բախտին, ցուրտին արթննալով կակուղնայ, բայց ո՞ր ցուրտին, ո՞ր տեսակին զօրութեան, ըմբռնել կարենալու համար, որ լեզու մը, ինչ ծանօթ ցամաքամասի վրայ ալ խօսուի ու գործածուի, սովորելի է՝ սո-

վորական: Արձակել է տաք անկյե սրբա-
դասման քարոզներու խորձերը մեկիկ-
մեկիկ: Մեր լեզուն տարբեր է: Այս է
պատճառը արդեն, որ կը պահպանենք
զայն միայն: Կը պաշտենք ու կը
պաշտպանենք: Յանկարծ եթէ կապու-
տիկ սուր քաշող ըլլայ վրան, աջէն կամ
ձախէն, ի՞նչ գիտնանք, շատ թուրքեր
կան այս երկրին մէջ, կը պաշտպա-
նենք զայն վերջնականօրէն, գերեզմա-
նաքարի մը շուրթին, ամէնէն ապահով
է, երբեմն ալ՝ գերեզմանաքարը մեր
գլուխը քաշած: Եթէ բան մը պիտի պա-
տահի անոր, զոնէ մեր ձեռքով թող պա-
տահի: Եթէ մենք ենք ոճրագործը, վնա-
սը դադար կ'առնէ, կը դառնայ հրաշք:
Հայու ձեռքը կամ խորոված կը սարքէ
կամ ալ պարզապէս՝ հրաշք: Մենք ենք
մեր քածերը: Մենք «մերոնցով» ենք.
ինչ ալ պատահի՝ հարց չէ: Հարցը միշտ
դուրսն է: Դո՞ւրսը: Ահաւասիկ սրի-լան-
քացի սպասուիին, որ լիբանանահայու
մը տան մէջ ծառայելով սորված է հոն
խօսուած երեք լեզուները, հայերէնին
կողքին արաբերէն ու թրքերէն: Ան-
շուշտ խօսակցական մակարդակ մը կը
փնտռենք հոն միայն: Կամ Գատան՝
մաս-մաքուր արաբ լիբանանցի, գրեթէ
մաս-մաքուր հայերէնով, նշանածը հայ
ըլլալուն: Ասոնք բացառութիւններ են
միայն: Օրէնք չեն սահմաներ: Հազա-
րէն՝ մէկ: Դիզ թափած ու սորված են,
անձնական միջոցներով:

Թէեւ ներսն ալ շատ տաք է: Նայած
թէ ո՞ր կը փնտռենք, ուրկէ՞ կը մեկնինք
եւ ո՞ր յանգիլ կ'ուզենք: Ներսն ալ
խնդիր չի պակսիր: «Հրանդը պիզ էօլ-
տիւրտիւք»: Մենք ենք յանցաւորը այդ
ոճիրին, ինչպէս կ'ըսէր այդ թրքախօս

կնքահայրը, ցայտուն խոշոր աչքերը
ներս դարձուցած, միայն կէս ճամբան
զացած ինքնաքննադատութեամբ մը,
խորհուրդին բանալիներուն ձգուած
միւս կիսով, Պոլսէն Գերմանիա հա-
սած, խաչը հարս ու փեսային գլուխնե-
րուն միացման վրայ բռնելու համար:
Ներքին, հայկական սխալի մը վրայ է
որ մատը կը դնէ լայնաբաց աչքերով,
բացարձակ ճշմարտութեան մը գաւիթը
կեցած պատգամախօսի հովերուն
վրայ, խելացի Դաւիթ, թրքական սխա-
լի մը հաւանականութեան քողերը ծած-
կելո՞ւ նպատակով, թէ՞ ուշադրութիւնը
ուրիշ տեղ հրաւիրելու թրքաբիծ ճկու-
նութեամբ: Ինք ներսն ու դուրսն է իբր
թէ ու կը խօսի ներսը սայթաքած հայ-
կականութենէ: Երանի հաւասարակշ-
ռուած ըլլար, զոնէ դուրսին համն ալ ու-
նենար իր հայեացքը: Ներսէն դուրս ու
դուրսէն ներս հայեացք մը:

... Ի հարկէ կը պաշտպանենք մեր լե-
զուն: Ներս կամ դուրս: Չտեսա՞ք ինչ-
պէս այդ նախագահը մէկ օրուան մէջ
ամբողջ աշխարհին շրջանը ըրաւ,
ամէն տեղ ծաղկեպսակ մը գտաւ զետե-
ղելու, բերի՞ն ու ձեռքը տուին, ոչ թէ իր
գլխուն իբրեւ դափնեպսակ, այլ յուշար-
ձաններուն գլխուն խաղցուած խաղի
պէս թափանցիկ, պարտքը վճարեց ու
վաճառեց, պաշտպանեց իր լեզուն:
Ահա այդքանն էր կրցած լեզուն: Ի՞նչ
կը սպասէք աւելի: Տա՞ս լեզու պէտք էր
գործածել, որ աշխարհացրիւ բեկորնե-
րը, իր, հա, իր ժողովուրդին, հասկնա-
լին իր ըրածը կամ ըսել ուզածը: Տաս
կտոր պէտք էր ըլլար կամ տաս մատ-
ները մոմ ընէր: Խնդիրը հոն է, որ բան
մը պէտք էր ընէր: Պակտողը բան մըն էր

միայն: Չինացի ուսանողը բերանը Սա-
յաթ-Նովա առած կ'երգէ: Աչք ու
ականջով կրնաս վկայել. Քանի վուր
ջան իմ, եար քի դուրպան իմ... քա՜նի
վուր ջան իմ... տողին կրկնութիւնն իսկ
չի մոռնար, չի մեռնիր. դեռ ջան իմ,
ջան, դեռջան: «Հայերէն գիտե՞ս»՝ ի՞նչ
անբաղաբավարի հարցում: «Քիչ մը կը
հասկնամ»՝ քաղաքավարի անպա-
տասխան: Քսան տարուան մէջ քիչը
քիչ մը շատի ալ չէ կրցած վերածուիլ:
Լեզուն միայն լիզելու համար է: Չէ՛, չէ՛.
մեղադրելու չէ երբեք: Արդար պէտք է
ըլլայ: Գոնէ՛՜ ձեւանալ: Հարկ է հասկը-
նալ: Եղեռն տեսած ժողովուրդ ենք ի
վերջոյ: Կը դառնանք ու կը դառնանք
այդ ծակուծուղակին շուրջ: Հասկնալ
ի՞նչ: Որ աւագներուն սերունդէ սերունդ
դասաւանդուող ծրագրաւոր ծուլու-
թիւնը սրբազան ու անբռնաբարելի է:
Պաշտելի ու յաւերժական: Անհպելի
ապականութիւն: Մենք բոլորս պիտի
երթանք, սառի պէս պիտի հալինք կամ
հող դառնանք. ան պիտի մնայ: Այս
անգործութիւնը այնքան կայուն ներշնչ-
ում կ'առքէ: Քարի պէս առանձին կը
մնայ: Պարզապէս որովհետեւ՝ վերջէն
ետք սկի՞զբ մը կու գայ: Կ'անակնկալ-
ի:

Արտաշը՝ ուղեկից ու նոյնիսկ առաջ-
նորդ: Ներքին տեսակէն: Իրմէ պէտք է
անցնինք: Դորպատի անցագիրը քովն
է: Վկայ մը անգիտակից ու բեղուն, ինչ-
պէս բոլորը անոնց: Պէտք է սակայն,
սովորութեան մը համաձայն՝ հարցնել,
հայերէն խօսիլ, քանի մը հայաբառ
լսելի դարձնել, սանկ փոքրիկ լեզուա-
կան քննութիւն մը բանալ, «Բարեւ, ինչ-
պէ՞ս ես»ի պէս բան մը, քիչ մը խորո-

ված բուրել, խաչքար ծամել եւ ծնողքին
բարեւ դրկել: Մթնոլորտին մէջ որոշ
ջերմութիւն կը փնտռեն յիշեալ պէտքին
հասնելու համար: Աճապարանքը միշտ
օգտակար չէ: Արտաշին ալ համար.
եթէ անհանդարտ ըլլայ կամ աճապա-
րէ, կրնայ սայթաքիլ կամ անծանօթի
մը քսուելով անոր հանգիստը խանգա-
րել. պէտք է զգուշ ըլլայ, զգուշութեան
կը հրաւիրուի արդէն ինք քանիցս իր ու-
սուցչուհիին կողմէ: Եթէ յանկարծ իր
փոխարէն հայութիւնը իր անունէն սայ-
թաքի ու դառնայ, ի՞նչ գիտնամ, Աթա-
նաս, բայց ի՞նչ Աթանաս, Ալեքս կամ
Ալէն, անունէն ալ վերնայ ազգային իբր
թէ գոյն կամ ջերմութիւն, աւելի ուշ նա-
եւ եթէ զինք զգուշացնող ալ չըլլայ,
«սանկ մի ըներ, նանկ մի ըներ» ըսող
չըլլայ. եթէները ժամանակավրէպ են:
Քանիերորդ եթէին ետեւէն խմած ենք
քանի մը գաւաթ: ...Չար բախտէս, սա-
կայն, Արտաշ եւ իր առաջնորդուիին,
ինչպէս նաեւ դասընկերները, անուն-
ներն ալ յստակ լսուեցան հոն, ուրեմն
երեւակայութեան (մանաւանդ այսպի-
սի պարագաներուն՝ զորի հայաթիչ,
գերիրապաշտ տրամաբանութեան մը
շուրջառին տակ իբր թէ թաքնուած,
իրականութեան մէջ՝ բաց պատարագ
երեւակայութեան մը, որ անուններ
(պ)արտադրելով իրարու կը բերէ, կը
մօտեցնէ, սանկ կառոյցի մը կ'ազուցէ
նոյնիսկ, պայքարի կը սրէ, հակադրու-
թեան մը այնքան բնական ներդաշնա-
կութիւնը կը կազմակերպէ, այսպէս,
որովհետեւ զիրար հասկնալը մեծ
պատրաստութիւն կ'ենթադրէ) հարկ
չկայ՝ այդ անգապելի երեւակայութիւն
կոչուածին: Անունները իրենք զիրենք

գտած ու գրած են, քով-քովի յայտնուած, անակնկալ բնականութեամբ: Գիտերու ժամանակը անցած է: Անցած ըլլայ՝ անգամ մը եւս: Շարադրութիւն գրելու պահն ալ շատոնց՝ աւարտած, սիրելի փոքրիկներ, քանի հայերէնի ուսուցիչը դասապահուն աւարտող աւետող զանգէն ետք քիչ մը խստացած է, ըսելով. «Ալ ի՞նչ պէտք ունիք անուն-մանուն փնտռելու. ձեր աչքերուն առջեւ նայեցէք»: Անունները արդէն գրուած են փնտռտութիւն առիթներէն առաջ: Նման առիթներու մի՛ սպասէք: Դասապահի զանգը շատոնց հնչած է, բայց դեռ խուլ ձեւացողներ կան, որովհետեւ թերեւս ձայնը իսկապէս չի հասնիր իրենց ականջին: Արտաշը դասապահէն դուրս կանգնած է, արտադասարանային ձեռնարկ մըն է, սա հազիւ տասնամեակ մը բոլորած տղան, շարադրութիւնը գրած-լմնացուցած, մաքուրի անցուցած, հոս, մեր առջեւ, եւ մեզի դէպի Դորպատ ճամբան ցոյց կու տայ, իր եւ ընկերներուն անուններուն մէջ կազմագիր.-

- Արտաշ, Մեհմէթ, Իսմայէլ:

Համատեղ ու իրարու կից իրականութիւն: Ի՞նչ Դորպատ: Անուններու ափ մը կրօնակցութիւն: Կ'ուզես հետոյ շալկել դէպի Դորպատ: Չօրով: Մենք պէտք է օդանաւակայան երթանք: Միայն թոյլ տալէ կարելի կը դարձնէ Դորպատը: Իրենք սակայն կը շարունակեն ճամբան անուանաշար, որովհետեւ զօրով մեկնումներու եւ առաքումներու ժամանակը անցած է: Եւ Դորպատի ճամբան ցոյց տուող Արտաշը արդէն ուղին փոխած է հիմա: Յոյց տալ եւ երթալ նոյն բաները չեն՝ կը բացատրէ ան:

Պէտք է իջնենք: Իջանք արդէն: Ուղղութիւնները փոխուեցան: Գոնէ իջած ատեն սանկ բարեւ մը ձեւի բերել, ժպտալ կամ հայրենի ժպիտի մօտեցող գիծեր պտտցնել դէմքին վրայ: Ատ ալ չեղաւ: Կ'երեւի կարելո՞ր էր զիրենք թողուլ այդպէս առանձին, լքուն, առանց արտաքին միջամտութեան: Խմբուածքը միասին պիտի աճի. իրենց նոր պատմութիւնը միասնաբար պիտի գրեն անոնք ու յետոյ երբ մեծնան, հաւաքական ու ժողովող պատմութեան մը ծանօթանան, պիտի գիտնան որ կախուած են անհատականէն անդին նաեւ հաւաքական տուեալի մը պոչէն, երկար ու բարդ ոլորտն պոչէ մը, որ բոլորը իրարու միացուցած է շատոնց: Յետոյ պիտի գայ կարգը գծագրութեան դասապահուն, երբ հաւաքական ու անհատական սահմանները պիտի որոշուին, անձնական ու անանձնական փորձառութիւններ բեմին վրայ տեղ առնելով պիտի զարգանան: Թերեւս ընդմիջուելով ու խորանալով: Հոս է որ երեւակայութիւնը կրնայ արարել, թափ կ'առնէ՝ կ'ըսեն, չէ՞, անուններու ազուցումը արդէն ետին նետած: Ի՞նչ կերպարանք տալ հիմակուրնէ այդ ապագային: Չայն քարանցեալի վերածող միասեռ հերոսութիւնը կը պսպղայ դեռ, ամէն անկիւնէ սպաստող: Արտաշին զայթումն է անագան ապագան:

- Արտաշ ուշադիր: Արտաշ կաղաց:

Գերմանիա, 2013

ԱՐՄԻՆԷ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՔԵՌԻ ՄԱՍԻՍԸ

ԿԱՄ

ԶՄՏԱՑԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

- Նարին, վաղը մեր գերմանացի բարեկամները գալու են մեր տուն:
- Լոֆը, Դա՛ւ: Հաստա՞տ ես իմացել: Ո՞վ ասաց:
- Պապան ասաց:

Նարինի սիրտը գոհունակ ճնշուեց, ժպիտը ճառագեց դեմքին: Ամեն անգամ, երբ դասարանցիները պատմում էին ամրանը Ռուսաստանից կամ Ամերիկայից իրենց հիւր եկած հարազատների մասին, ինքը տխրում էր, որ իր կեանքում նման թարմ հոսանքներ չկան: Նարինն էն բնոյթով հետաքրքրասէր, օղից գիտելիքներ կլանող աղջիկ էր, ամեն մի նորը, որ կապուած էր արտասահմանեան երկրների, ժողովրդի, նոր յարաբերութիւնների հետ, նրան գրաւում էր:

Եւ ահա վերջապէս ինքն էլ բախտ կ'ունենայ որոշ ժամանակ շփուելու այլ մշակոյթն իրենց հետ բերած բարեկամների հետ, որոնց հինգ տարեկան հասակում էր տեսել ու շատ աղօտ էր յիշում:

Մի ժամ յետոյ հարեւանի տանն էր:

- Անուշիկ, վաղը ես երեւի չկարողանամ խաղալու դուրս գալ, վաղը մեր գերմանացի բարեկամները մեր տուն են գալու:

- Գերմանացի՞ բարեկամ,- զարմացաւ Անուշիկի տատիկը,- բայց դուք ի՞նչ գերմանացի բարեկամ ունէք:

- Պապայի քեռու տղան է՝ իր ընտանիքով: Իրենք ինը տարի է՝ Գերմանիայում են ապրում:

- Ա՛, պարզ է, Մասիսենց նկատի ունես: Բայց դա չեղաւ գերմանացի բարեկամ: Իրենք էլի հայ են, ուղղակի Գերմանիայում են ապրում,- ժպտալով ասեւացրեց Անուշիկի տատիկը:

Նարինն մեղաւոր ժպտում էր, բայց ներսում ջղայնացած էր հարեւանուհու վրայ. մի՞թէ տեղին էր իր առաջին պարծենկոտ լուրը այդպէս ընդունելը:

* * *

Առաւօտեան վաղ արթնացան, նախաճաշեցին, կարգի բերեցին սենեակներն ու սպասում էին հիւրերի ժամանելուն. նրանք ամեն րոպէ էլ կարող էին գալ:

Մասիսենք արդէն շատ հրաւերներ ունէին ու խոստացել էին օրուայ ընթացքում մի քանիսին այցելել:

Նարինն ու Դաւիթը առաւօտից խօսում էին բարեկամների, նրանց երեխաների (որ իրենց տարեկիցն էին) ու նուէրների մասին, որ իրենց կը բերէին:

- Դա՛ւ, ինձ թուում է՝ իրենք գոռոզ կը լինեն, գուցէ չուզեն շատ շփուել: Չգիտե՞ս հարուստներին:

- Բայց իրենք շա՛տ հարուստ են:

- Բա ո՛նց, ախր Գերմանիայում են ապրում, չէ՞: Դու չե՞ս լսել, որ մամայենք պատմում էին՝ ամէն ամիս քեռի Մասիսը ահագին փող է ուղարկում քոյրերին ու եղբայրներին:

- Հա՛, յիշում եմ: Ախր, այդ խեղճ քոյրերն ու եղբայրներն էլ այնքան տարբեր հիւանդութիւններ ու գումարային խնդիրներ ունեն, որ ինչքան ուղարկում է, էլի պրծում չկայ:

- Հա՛, բա,- ծանրակշիռ շեշտով ասելացրեց Նարինէն:

Նրանք դեռ երկար խօսում էին, բայց սկզբնական ոգետորութիւնը մարում էր, որովհետեւ հիւրերը չէին շտապում ժամանել:

* * *

Կէսօրն անցել էր, քեռի Մասիսենք դեռ չէին եկել: Նարինէն այլեւս անկարող էր տանը մնալ: Անուշիկենց տուն չէր գնայ, բայց տան յետեւի հարեւանուի ու՝ Օլգայի հետ մի քիչ կարելի էր զրուցել նրա համալսարանական կեանքից, մի քանի նոր բան կ'իմանար այդ համալսարան կոչուածի մասին, մինչեւ չորս տարուց ինքն էլ դառնար դիմորդ:

Երկար զրոյցից յետոյ Նարինէն նոր մտածմունքներով տուն մտաւ. դեռ չէր կողմնորոշում մասնագիտութեան ընտրութեան հարցում: Մի քանի բաժիններ կային, որ հաւասարապէս ձգում էին:

Դուռը ծածկեց: Ուզում էր հիւրասենեակ մտնել, երբ տեսաւ, որ միջանցքում տարօրինակ տեսքի երկու զոյգ կօշիկներ կան. սանդալների նման, անշուք ոտնամաններ էին:

«Հնարաւոր չէ՝ սրանք քեռի Մասիսենցը լինեն», - միանգամից անցաւ Նարինէի մտքով:

Ըստ Նարինէի՝ նրանք բարձրորակ կաշուց ինչ-որ նորաձեւ, հետաքրքիր դիզայնով կօշիկներ պիտի կրէին, իսկ տեսածը բոլորովին չէր համապատասխանում նրա՝ քեռի Մասիսենց մասին պատկերացումներին: Բացի այդ էլ երկու զոյգ էին, իսկ Մասիսենք հինգ հոգի էին:

Հիւրասենեակի դուռը բացուեց: Այնտեղից դուրս եկան մի տղամարդ ու մի կին՝ անշուք շորերով, գունատ դէմքով եւ նիհար կազմուածքով: Հետեւից դուրս եկան Նարինէի ծնողները:

- Սա էլ մեր Նարինէն,- ժպտալով ասաց մայրիկը՝ ծանօթացնելով արդէն հեռացող հիւրերի հետ,- Նա՛ր ջան, քեռի Մասիսենք են:

Նարինէն հազիւ կարողացաւ թաքցնել տհաճ զարմանքն ու մի կերպ ժպտալով բարեկեց:

- Ինչո՞ւ Արթուրենցը չէք բերել,- հարցրեց Նարինէն:

- Վայ, սիրունս, իրենք գնացել էին հարեւանի երեխաների հետ խաղալու, հա-
ւէս չարեցին այցելութիւնների դուրս գալ, մենք էլ չպնդեցինք,- ասաց քեռակին
Ժանետան:

- Դուք եկէք մեզ այցելութեան, կը հանդիպէք, կը ծանօթանաք,- ատելացրեց քեռին:
Նարինէն գլխով էր անում:

Փոխադարձ ժպիտներից ու մի քանի բառ փոխանակելուց յետոյ հիւրերը գնա-
ցին:

- Մա՛մ, իսկ հետները ի՞նչ էին բերել,- քաշուելով հարցրեց Նարինէն:

- Մի տուփ շոկոլադ, աղջիկս:

- Գերմանական:

- Չէ՛, հայկական, «գրանդ Քէնդի է»:

Դրսում քամի էր սկսուել: Նարինէն պատուհանի կողքին կանգնել ու նայում էր
բակով մէկ քշուող տոպրակներին, քոթերին, հատուկեմտ տերեւներին ու փոշուն:
Իր անմիտ սպասումները միացել էին ընդհանուր զանգուածին ու սուրում էին փո-
ղոցներով:

* * *

Նարինէն առաջին կուրսի ուսանող էր: Ամրանը պարապ չմնալու համար
օտար լեզուներ էր սովորում: Միանգամից չորս լեզու էր սկսել՝ գերմաներէն, իս-
պաներէն, ֆրանսերէն եւ չինարէն:

Սկզբում բաւական հետաքրքիր էր սովորելու ընթացքը, բայց քանի խորանում
էր, այնքան ատելի բարդ ու ժամանակատար էր դառնում:

Օրերը ձանձրալի էին անցնում. Նարինէն նայում էր հանգստի գնացող ծանօթ-
ներին, ընկերներին ու տխրում, որ իրենք այս անգամ էլ ծովափ կամ որեւէ այլ հե-
տաքրքիր վայր չեն գնալու:

Այդ օրերին էր, որ իմացաւ՝ քեռի Մասիսենք կրկին Հայաստանում էին: Նրանք
մեքենաներով էին եկել Գերմանիայից ու մինչ Հայաստան հասնելը մի քանի սահ-
մաններ էին անցել, «Նոր երկրներ տեսել, նոր մարդկանց հետ շփուել»:

Բարեկամներն ասացին, որ իրենց հետ բերել են նաեւ մեծ տղայի՝ Արթուրի ըն-
կերուհուն, ով ճանապարհին յաճախ էր փոխարինել յոգնող վարորդներին:

«Մեքենայ վարել գիտի, երանի իրեն», - մտածում էր Նարինէն՝ պտտուելով
սենեակում: Իսկ ինքը ամէն օր այդ չորս պատերի մէջ է, հագուադէպ՝ բարեկամ-
ների տներում:

«Ինձ համար աշխարհը վերջանում է՝ չսկսուած», - տխրում էր աղջիկը:

Այս անգամ ինքն էլ որոշեց գնալ քեռի Մասիսենց տուն՝ բարի գալուստ մաղթե-
լու:

Հագել էր իր նորաճ գգեստներից մէկը, մազերը յատուկ յարդարել, խնամքով
շպարուել, որ լաւագոյնս ներկայանայ Եւրոպայից եկած բարեկամներին:

Հանդիպումը բաւական ջերմ էր: Թէ՛ տղաները եւ գերմանուհի ընկերուհին, թէ՛
աղջիկը շատ սիրալիր ու անբռնազբօս էին: Անպաճոյճ թէ՛ խօսքում, թէ՛ հագուկա-

պում երոպացի դարձած հայերը զարմացնում էին Նարինէին, ով դեռ շարունակում էր նրանց մէջ եթէ ոչ հարստութիւն, ապա նուրբ ոճաւորումներ փնտռել, սովորելու ինչ-որ բաներ:

Երիտասարդները քիչ էին խօսում իրենց առօրեայից, ատլի շատ սիրում էին ընդհանուր զուարճանքներ գտնել ու դրանցով զբաղուել:

Քեռակին Ժամետան հասակակից կանանց հետ խօսում էր իր աշխատանքի, տնային գործերի, տարբեր խնդիրների մասին:

Միայն քեռի Մասիսն էր, որ սեղանի շուրջ նստել ու հաւաքուածներին պատմում էր երոպաներում տեսած նորի ու հետաքրքիրի մասին:

Նարինէն աննկատ լքեց տարեկիցներին ու միացաւ սեղանի շուրջ հաւաքուածներին:

- Այնտեղ շատ ուրիշ են կարգերը, - պատմում էր քեռին, - ես որ այդքան տարի այնտեղ եմ ապրում, չեմ կարողանում հաշտուել շատ բաների հետ: Ուսուցչուհին աշակերտներին սովորեցնում է, որ եթէ ծնողները նրանց վիրաւորեն կամ արգելքներ դնեն, կարող են դիմել ոստիկանութեան: Հա՛, հա՛, եղել է, որ աղջիկս ինձ սպառնացել է ոստիկանութեամբ, երբ ուզել եմ արգելել երեկոյեան խնջոյքի գնալ: Բա՛, դուք ինչերի՞ց էք տեղեակ:

Լսողները գլուխներն էին օրօրում ու քննադատում երոպական այլասերող կարգերը, որ Հայաստան են թափանցում մեծ արագութեամբ:

- Մի անգամ էլ աւագ ուսուցիչն ասել էր, որ եթէ ձեր ծնողները անհրաժեշտ գումար ունեն, բայց ձեզ համակարգիչ չեն գնում, ապա դուք կարող էք բողոք ներկայացնել անպատասխանատու ծնողի դէմ: Հազիւ երեք ամիս գումար էի հաւաքել՝ ուղարկելի Վարդի վիրահատութեան համար, աղջիկս կանգնել է, թէ ես գիտեմ՝ դու համակարգչի գումար ունես, ինձ անձնական համակարգիչ գնիր: Ոնց համոզում եմ, չի լինում, սպառնում է: Ստիպուած իր խօսքն արեցի: Դրանից յետոյ էլի հաւաքեցի մի քանի ամիս, մինչեւ կարողացայ ուղարկել: Վարդան ջան, կը նեղուես, թէ տղայիդ բանակ տարան, փող չուղարկեցի՝ ազատէի, բայց ինչ անեմ, մեր վիճակն էլ վիճակ չէ:

Քեռի Մասիսը պատմում էր ու պատմում. Նարինէն յօնքերը կեռացրած լսում էր: Անսովոր բաներ էր ասում քեռին, աղջիկը չէր էլ կարող պատկերացնել, որ նոյնը հնարաւոր էր իր հետ լինել, բայց գիտէր՝ ինքն էլ կ'ուզէր, որ այդպէս ապրէր:

- Ժողովուրդ, հէնց ես ու Ժամետան ասում ենք՝ քաղաքից դուրս ենք գնալու, չենք գիշերի տանը, տղերքս ընկերուհիներին տուն են բերում. քանի անգամ վաղ ենք տուն եկել ու...

Տղամարդիկ սկսեցին ծիծաղել, ամէն մէկը իր յաւելումներն ունէր, իր ջահէլութիւնն էր յիշում: Նարինէն արագ հեռացաւ տղամարդկանց մօտից: Սենեակից դուրս գալիս հանդիպեց Մասիսի եղբօր կնոջը՝ Սոնային:

Մի քանի խօսք փոխանակելուց յետոյ Սոնան ասաց.

- Ես արդէն գնում եմ, որ սենեակները օդափոխեն: Այսօր մեր տանն են գիշերելու:

Դէ, գիտես՝ մեր տունը անտառին մօտ է: Առաւօտ շուտ որսի են գնալու տղաներով:

- Վայ, ինչ հետաքրքիր է: Ափսոս, որ աղջիկներին էլ չեն տանելու:

- Ա՛հ, մենք հաւէս ունենք, որ գնանք: Որսը տղամարդու գործ է: Նարինէ՛, գիտես, չէ՞, այդ Ֆրիդերիկան Արթուրի ընկերուհին է:

- Հա՛, գիտեմ, բայց ես Արթուրին հարցրի, թէ երբ են նշանուելու, ասաց՝ միտք չունի նշանուելու, ուղղակի ընկերութիւն են անում:

- Ուղղակի ընկերութիւն, հա՞: Է՛, ինչի՞ց ես տեղեակ: Ասել են, որ իրենց անկողինները մէկ են. մի մահճակալ տրամադրեմ երկուսին:

Նարինէն շփոթուեց մի պահ, բայց մի պոչաւոր հետաքրքրութեան մասնիկ շուռումուռ էր տալիս մտքերը, խուտուտ անում երեւակայութեան ծալքերը. իր հասակակիցները, Երոսպա, ազատութիւն, այլ բարքեր՝ գրաւի՞չ, պարզ չէ, հետաքրքիր, նոր...

Գիշերը չէր կարողանում քնել, համեմատում էր, վերլուծում: Չհասկացաւ՝ ինչպէս երեւակայած տեսարանները երազում աւելի գունաւոր ու խառը շարունակութիւններ ստացան:

Մի քանի շաբաթից քեռի Մասիսենք յետ դարձան Գերմանիա:

* * *

Նարինէն արդէն աւարտական կուրսում էր, երբ լուր եկաւ, որ քեռի Մասիսենք ընտանիքում նոր համալրում է եղել՝ տղայ է ծնուել: Անունն էլ դրել են Արարատ: Այդքան տարի անց նորից երեխայ ունենալու գաղափարը զարմացրեց շատերին, բայց ասում էին, որ պետութիւնը մեծ գումարներ է յատկացնում իրենց քաղաքացիներին, չափահաս դառնալուց յետոյ լայն հնարաւորութիւններ ստեղծում առաջ գնալու, որն էլ երեւի եղել էր նոր բալիկի ծննդեան պատճառներից մէկը: Սկսուեց շնորհաւորանքների հեղեղը, բայց եւ այդ օրերին էլ իմացան, որ միջնեկ տղան՝ Շառլը, բանտում է յայտնուել:

Ասում էին, թէ կանգնել է փողոցում, հայկական դրօշը թափահարելով՝ գոռացել. «Կեցցէ՛ Արմէնիան, կորչեն շովինիստ գերմանները»: Անցորդներից արձագանգողներ են եղել, ծեծկոտուք է սկսուել. արդիւնքում՝ մէկ տարի ազատազրկում:

Բոլորը խօսում էին Շառլի հայրենասիրութիւնից, բայց Նարինէն այլ կարծիքի էր:

«Շառլը ինքնամփոփ տղայ էր, երեւի իր ընթրստութիւնն է փորձել այդ կերպով արտայայտել: Մօտը եսի դրսեւորումների շրջան է եղել», - մտածում էր նա: Սակայն ինչքան էլ լաւ պատկերացներ գերմանական բանտը, ցաւում էր տղայի համար:

Յիշեց՝ ինչպէս էր Շառլը հաւաքների ժամանակ իրեն մեծահասակներից հեռու պահում, բայց երբ Նարինէի մայրն իրեն վատ զգալով՝ հեռացաւ սեղանի մօտից, հէնց Շառլը ձմերուկի մի մեծ կտոր խնամքով կտրատելուց յետոյ անձայն մօտեցրեց նրան, դրեց դիմացն ու գլուխը կախ՝ հեռացաւ:

«Չէ՛, ես այդպէս էլ Շառլին չկարողացայ բացայայտել: Չնայած՝ միւսներին էլ քիչ

ճանաչեցի. արտաքին շերտը թաքցնում էր ներսում եղածը»,- մտածում էր Նարինեն:

Քեռի Մասիսը՝ հոր քեռու տղան, միջահասակ էր, նիհար, դուրս գցուած այտուկներով, հայկական քթով, գունատ դեմքով, մանկական ժպիտ ուներ: Նարինեն յիշում ու ժպտում էր: Երբ վերջին անգամ Հայաստանում էին, այդ օրերին Նարինեի մայրը հիւանդացել էր: Քանի օր էր՝ ցաւերը չէին դադարում, պառկած էր անկողնում: Մի երեկոյեան դուռը թակեցին: Դաւիթը բացեց. եկողը քեռի Մասիսն էր՝ ձեռքին հողոտ տոպրակ: Պարզուեց, որ լսել էր Մանուշի հիւանդութեան մասին, հարեւանի հողամասից քաղել ինչ-որ բոյսի արմատ, որից պատրաստած հեղուկը բուժում էր որովայնային ցաւերը:

Մի ժամ շարունակ իր ձեռքով արմատներն աղաց, ջուր եւ սպիրտ աւելացրեց, յետոյ էլ պատուիրեց, որ օրը երեք անգամ Մանուշը քսի ցաւող մասերին: Մի բաժակ սուրճ խմեց ու գնաց:

Հետագայում էլ, երբ արդէն Գերմանիայում էր, յաճախ էր հրաւերներ անում, ասում, որ ինքը պատրաստ է վիզա ուղարկել, եթէ Նարինենք տոմսեր կարողանան գնել, իսկ երբ հասնեն Միւնխեն, նրանց իրենց մօտ կը հիւրընկալեն:

Տոմսերի փողն այդպէս էլ չէր կուտակում, բայց Նարինեին այդ միտքը միշտ հաճելիօրէն շոյում էր:

* * *

Քեռի Մասիսը՝ իր հարազատների բարերարը, սկսել էր աւելի ու աւելի քիչ գումարներ ուղարկել: Ասում էին՝ ուզում է հայկական ռեստորան բացել, փող է հաւաքում:

«Էհ, քանի՜ տարի պահանջուեց, մինչեւ քաղաքացիութիւն ստացայ, յետոյ աշխատանք փնտռող գործազուրկների համար պետութիւնից գոյութիւն պաշտպանելու համար գումար էի ստանում, դրանից էլ մի մասը պահում էի, որ Հայաստան ուղարկեմ: Այս վերջին երեք տարին է, որ հազիւ նորմալ աշխատանք գտայ: Հա՛, համալսարանն աւարտել, եկել եմ այստեղ վարորդ եմ աշխատում, բայց զոնէ այնքան գումար եմ ստանում, որ կարող եմ ապահով ապրել: Տեսնեմ, մի որոշ ժամանակ էլ աշխատեմ, իմ գործը բացեմ»,- վերջին հեռախօսազրոյցներից մէկի ժամանակ Նարինեի հօրն ասում էր քեռի Մասիսը:

Վերջին ամիսներին անգամ երբօրը չէր կարողացել գումարով օգնել: Նախկին լաւ եղբայրը բոլորի աչքին դարձել էր անհոգի եւրոպացի:

«Հա՛, բայց պիտի մի օր էլ սկսեր մտածել իր ընտանիքի ֆինանսական վիճակը աւելի բարելաւելու մասին,- մտածում էր Նարինեն,- ինքն ո՞ւմն է պարտական, որ այնտեղ քրտինք թափի, այստեղ բարեկամները ոտքը դնեն ոտքին՝ գումարներ պահանջեն: Քեռակին ժամեւտան էլ յաճախ էր դժգոհում քեռի Մասիսի աւելորդ բարեսրտութիւնից,- յետոյ ժպտալով աւելացրեց,- որը մեզ համար այդպէս էլ գումարի տեսք չստացաւ»:

* * *

Եւ ահա մի օր...

Մարտն էր, մի քանի օր իրար յետեւից ուժեղ անձրեւներ էին տեղում Միւնիխէնում: Բեռնատար մեքենաները անցնում էին մայրուղով: Գետինը սահուն էր դարձել: Մեքենաներն ընթացքը դանդաղեցրել էին, որ ապահով առաջ ընթանան:

Վարորդներից մէկը ականջակալները միացրել էր հեռախօսին ու զրոյցով տարուած՝ բարձր ծիծաղում էր:

- Գործերս շատ լաւ են գնում, Կա՛ռլ, էհ, մի շաբաթից յաջողութիւն կ'ասեն վարորդութեանը ու կը լծուեն ռեստորան բացելու գործին: ...հա՛, հա՛, ճիշդ ես ասում...հա՛, ես էլ արդէն որոշ բաներ կարգաւորել եմ... երեկոյեան կը հանդիպենք... լսի՛ր...

Մեւր... հսկայ գորշ զանգուածը... ահաւոր սլացքով իր վրայ էր գալիս... բախում...ցնցում...մի քանի անկապ մախադասութիւն...

* * *

Նարինէն լոգարանում էր, տան հեռախօսը զնգում էր ու զնգում, իսկ տնեցիները դրսում էին: Մինչ Նարինէն հազնուեց, դուրս եկաւ, զանգն անջատուեց, բայց մի վայրկեան յետոյ նորից սկսուեց:

«Այս ինչ անհամբերներ են: Աշխարհի վերջի մասի՞ն են յայտնում», - ինքն իրեն փնթփնթում էր զանգի պատճառած անհանգստութիւնից զայրացած Նարինէն:

Միացրեց խօսափողը:

- Այո, լսում եմ:

- Նարինէ ջան, դո՞ւ ես:

Քեռակին Սոնան էր: Չայնը տխուր էր:

- Հա՛, ի՞նչ է եղել:

- Մասիսը,- ձայնը դողում էր,- աստովթարից զոհուել է տեղում:

- Ի՛նչ:

- Ինչ լսեցիր, աղջի՛կս:

Նարինէն մի քանի վայրկեան սառած կանգնել էր: Ուղեղը չէր ընդունում լսածը: Յետոյ փուլ եկաւ բազմոցին:

«Լաւ, բայց ինչի՞ համար: Երեխաները, նպատակները...ոչ մի օրինաչափութեան չի ենթարկում մարդկային կեանքը: Օտար հողում...տեսնես ինչ են եղել վերջին բառերը, ո՞ւմն է կանչել, իսկ գուցէ չի էլ հասցրել զգալ...»

Գուցէներն ու ինչուները դեռ երկար տանջում էին երիտասարդ աղջկայ միտքն ու հոգին, սակայն մի բան պարզ էր՝ իրենց «գերմանացի» բարեկամն այլեւս չկար:

Նրա կորստի հետ միաժամանակ կտրուեցին Եւրոպայի հետ կապող ուղիները:

Դրսում քամի էր սկսուել: Նարինէն պատուհանի կողքին կանգնել, նայում էր բակով մէկ քշուող տոպրակներին, թղթերին, հատուկենտ տերեւների, փոշուն ու... չստացած պատասխաններին:

Երեւան, 2013

ՍՈՒՍԱՆՆԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ԿՈՇՈՒՄ

ԱՆՄԵՂՈՒԹԵԱՆ
ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾ

Քեռին շաքար ունեւ, մաղճաճարաւ (cholestérol): Անօթներն էլ վայ անօթ ասողին. սրտից ելնողները կային, մտնողները՝ քայքայուած: Բերած արիւնն էլ ծա՛նր՝ մա՛ղճ: Հրաշք՝ հրաշքով էր ապրում քեռին: Խմել, ծխել, ձկնորսութիւն ու բաղ խփել, սար ու ձոր չափչփել, սիրուիներ... Է՛, ապրելուց երբուանի՛ց էր հրաժարուել (թարգել) քեռին: Չորս կողմը փրփուր հա՛ց, փախաւա՛, կերուխո՛ւմ... հիմա միայն վարսակի հաց էր ծամում խաշ ու խորոված կերած քեռին: Կեանք, ինչ ասեմ յօրինողիդ՝ սարի պէս տղամարդուց մնացել էր մի բարձրացող շաքար ու մի չիջնող մաղճաճարաւ (խոլեստերին): Հլա ասա՛ ութսուն տարի, հլա ասա՛ հինգ երեխայ ու երկու կին, գաղթական մէր, թուրք ու Հիտլեր, երոպաներ... համրիչը (թգրեհ) քաշում՝ ախ էր անում, ծակող կուրծքը տրորում՝ վախ էր անում... Էհ-էհ՝ վաղուց արդէն հոգոցներով էր կեանքի հետ խօսում քեռին. ցաւ ու խոց էր՝ վերքոտ էր սիրտն ու հոգին: Ի՛նչ պիտի լինէր, որ քեռին եղ տարիքում ու բացակայ անօթներով ելնէր տեղից: «Բայց, մտածում էր՝ չեղած բեղերն ոլորելով, շաքարի դէմ դարման (ինսուլին) են սրկւում, մաղճաճարաւն էլ քայքայում է կծու պղպեղից: Արա-

րատեան դաշտում պղպեղներ են աճում՝ խոյի կօտոշներից սուր ու կեռ: Թո՛յն: Լեզու տուիր՝ աչքերիցդ կայծ է թռչում, ուղեղդ հալւում է տաքութիւնից, մաղճաճարաւի՞ց էլ մարդ վախենայ: Ճամբէքն էլ ասֆալտած՝ շաքարն ի՞նչ կ'անի եղ ճամբէքին: Եւ շաքարից փշացած տեսողութեամբ քեռին՝ «Այ մարդ, համոզում էր ինքն իրեն, շաքարն ի՞նչ է, որ քեզ խեղճացնի», ու մտմտում ասելիքը. «Ժողովուրդ, ասում էր մտքում, իմ քուր ու քրոջ մարդ, իմ հարազատներ, հող լցրէք ձեր գլխին՝ զաւակ ենք կորցրել: Սի՛րտ, հրամայում էր քեռին, տեղդ նստի, դու որ խառնուցիք մտքիս, համը հանելու ես: Տեղդ նստի, տեսնեմ ի՞նչ ենք անում», ու միտքն ու հոգին փորփրելով ճշդում էր մարդու պատճառահետեւանքային կապը սեփական հոգու հետ: «Ուրեմն, ասում էր քեռին, իմ սիրելի քուր ու քրոջ մարդ, յարգելի հարազատներ, մեր քրոջ տղան Ռուսաստանում մարդ է սպանել: Սրիկա՞յ է: Սրիկա՞յ է: Տակա՞նք է: Տակա՞նք: Թքե՞նք երեսին: Թքելը քի՛չ է... Բայց չմոռանանք, որ դա մե՛ր տականքն է, Ռուսաստանից փախել-եկել, քարանձաւներում թաքնուած է: Ամօթ, ամօթ մեզ: Իմ սիրելի քուր, երկու տարի առաջ որ հրդեհ եղաւ ու քո

աջ աչքը այրուեց, ներսուղրսով-կողուկշտով սեւացաւ, ուրեմն այրուեց ու մոխրացաւ քո հոգու աջ հայելին, փստո՛ւ: Չախն էլ պիտի այրուէր, քո հոգին անհայելի պիտի մնար, որ դու էս օրը չտեսնէիր, դու պիտի դրան չծնէիր: Բայց հիմա, որ քո կոյր աչքը յանկարծ կենդանացել ու արցունք է չռում, ուրեմն պիտի մտածես, որ դա քո երեխան է ու քարանձաւում թաքնուած, օգնութեան է սպասում: Իմ սիրելի քրոջ ամուսին, ես գիտեմ՝ դու թուրք պիտի լինես, որ սպանողին օգնես, դու՝ մշեցի Վարդանի միակ որդի, որի պապի տասը երեխային մորթել են թուրքերը... դու շուն պիտի լինես, որ եղբանից յետոյ ձեռք մեկնես մարդասպանին: Մեր քարանձաւները որ թասիբ (արժանապատուութիւն) ունենան, դրան կուլ կը տան, իրենց մութ ու ցրտով, կարիճ օձերով դրա կեանքը դժոխք կը դարձնեն, բայց...- չեղած բեղերի տակից թոնթորում էր քեռին,- անմեղութեան կանխավարկած»:

Քեռին մտքում ձեռքը խփեց սեղանին ու շարադրեց անմեղութեան կանխավարկածը. «Էդ տղէն ձեր ընտանիքի զաւակն է՝ տասնութերորդ հայր: Օրեր ու տարիներ դուք արու զաւակ երագեցիք եւ ձեր երագանքին հակառակ՝ ծնեցիք ութ աղջիկ երեխայ: Պէտք չէր, քուրս, պէտք չէր Աստծուց կռուով արու զաւակ պոկել: Եթէ Աստուած մի բանը չի տալիս, ուրեմն բարին էդ է: «Հազար երեխայ կը բերեմ... Էնքան, մինչեւ տղայ ծնուի:- Հերթական աղջկայ ծնունդից խեղճացած՝- Աստուած,- Աստծոյ առաջ պայման էիր դնում,- ինձ արու զաւակ տուր, թէ չէ սրանից

յետոյ քո անունը իմ սրտի միջից կը հանեմ»: Հիմա, քուրս, որոշիր՝ Երկնատ՞րն էր խելօք, որ չէր տալիս, թէ՞ դու՝ որ կախուել էիր նրա երեսից: Ինչ որ է՝ եղածը եղած է: Մեր տղան մարդ է սպանել: Մենք սրանից յետոյ աշխարհի երեսին ապրելու իրաւունք չունենք: Ո՞վ մեզ բարեւ կը տայ, ո՞վ մեր տնից աղջիկ կը տանի, ո՞վ մեր տուն աղջիկ կը տայ, ո՞վ կ'ուզի, որ իր ընտանիքին քաւոր կանգնենք: Մեր առաջ հաց դնող չի լինի, մեր տանը պատառ կիսող չի լինի... Այ էսենց խայտառակեց ձեր տղէն: Հիմա էլ փախել էկել, քարանձաւներում թաքնուել... Որ ոստիկանութիւնն իմացաւ՝ ինչ է, որ աշխարհին իմացաւ՝ ինչ է... Էլ մեզ ո՞վ բարեւ կը տայ: Տասը օրից աւել գիտենք էդ բանը ու քայլ չենք ձեռնարկել: Ասում էք՝ էդ սրիկային օգնող չկայ, ասում էք՝ թող օձերը դրան ուտեն... Ինչ ասես՝ ասում էք, բայց աշխարհում անմեղութեան կանխավարկած կայ... Մենք մարդասպանին օգնող չենք: Դա թուրք է ու մի բան էլ աւել՝ համաձայն եմ,- էլի չեղած բեղերը ոլորեց քեռին,- բայց մենք իրեն չենք օգնում, այլ մե՛զ: Դա ո՞ւմ տղէն է՝ մե՛ր: Ո՞ւմ արիւնն է՝ մե՛ր: Ուզենք թէ չուզենք՝ էդ մարդասպանը նստած է մեր արեան մէջ: Որովհետեւ չկայ ծնող, որի կենսագրութիւնը չտարածուի իր երեխայի ճակատագրի վրայ, եւ չկայ երեխայ, որի ճակատագիրը իր ծնողի կենսագրութեան շարունակութիւնը չլինի: Եթէ մենք նրան չօգնենք, յանձնենք ոստիկանի ձեռը՝ ուրեմն հաստատում ենք նրա մեղքը: Եթէ օգնենք՝ ուրեմն չենք ընդունում: Հիմա կ'ասէք՝ մեր ազգում բժիշկներ, թարգմանիչ ու մանկավարժ,

խուժան չպիտի լինի՝ մեր մեջ: Բայց կեանքում պատահում է, որ խուժանն առելի է պետք գալիս, քան բժիշկն ու մանկավարժը: Խուժանին էլ պահել ու պահպանել է պետք... Իսկ ո՞վ ասեց, որ ոստիկանությունը ճիշդ է, ո՞վ ասեց, որ նա յանցանք է գործել: Քո աչքով տեսնե՞լ ես՝ չէ՛: Իսկ ոստիկանները սրիկայ են, զօրաւորի մեղքը բարդում են անզօրի ուսերին. անտէր երեխայ են տեսել, եսիմ ո՞ւմ մեղքն են բարդել վրան: Ինքն էլ ջահել, լեզու չգիտի, թիկունքին ծնող ու հարազատ չունի, գրպանում փող չունի, ոչ էլ՝ գլխում խելք: Կը բարդեն՝ բա ի՞նչ: Իսկ մեզ պէ՞տք է դատ ու դատարան, պէ՞տք է առերեսում ճշմարտութեան հետ, պէ՞տք է իրականութեան հետ ճակատ-ճակատի տալ: Մենք երկրին նորմալ ժառանգ ենք տուել՝ դպրոց գնացած, ընտանիք տեսած, բանակում ծառայած. թո՛ղ չդարձնէին յանցագործ: Քանի ինքը չկայ՝ հաստատող կամ հերքող չկայ: Մէկը սրան կը հաւատայ, մէկը՝ նրան... ինչքան մարդասպան կը լինի, էնքան էլ անմեղ... Կասկածը: Մարդն ինքը Աստծոյ կասկածն է: Միշտ եւ ցանկացած հարցում կասկածի տեղ պիտի թողնես: Պարզութիւնը համը հանում է: Բերէք մեր զաւակի համար ապահովենք կասկածը: Նրա համար անմեղ մնալու տեղ թողնենք: Իմացէք՝ էդ քայլով մենք մե՛զ համար ենք թողնում անմեղութեան կանխավարկածը, թէ չէ՛ մեզ էլ ո՞վ բարեւ կը տայ: Պիտի ազատուենք էդ տղից: Կեանքում ամէն ինչի համար պէտք է վճարել: Մենք պիտի վճարենք մեր տղայի համար, մեր արեան համար, նրա արած-չարածի համար...

կանխիկ գումարով: Էս է կեանքը՝ ուրիշ տարբերակ չունենք: Ապօրինի գործ է, սահման անցնելը հեշտ չէ՝ փող է: Փող է, բայց հնարաւոր... մեռնեմ Մեղրու կարմիր սարերին՝ սարերով կ'անցկացնենք, թող գնայ Պարսկաստան: Դրանից յետոյ Պարսկաստանի բնակիչ է: Պարսկաստանը գիտի՝ իր քաղաքացին ու իր պրոբլեմները (հարցերը): Կարելորը անմեղութեան կանխավարկածն է, որ մենք մեզ համար ապահովում ենք, կասկածի տեղն է, որ թողնում ենք: Կասկածը՝ զօրաւոր, կասկածը որ չլինի, կեանք չի լինի... սուսուփուս փողերը բերէք, մեր բաժին կասկածն ապահովենք: Ով կը հարցնի՝ ո՞ւր է, ասէք՝ Ռուսաստան միալարդատէր էր, փողի համար սպանել են: Խոզ, շովինիստ (ազգայնամոլ) ռուսները թոյլ կը տա՞ն, որ մէկն ու մէկը ապրի»:

Բայց քեռին՝ իմաստուն, քեռին կեանքի լաւութատը տեսած, քեռին՝ Աստծոյ տեղն իմացող... քեռին գիտի, որ գնացողից յետոյ մնացողին ապրելու տեղ պիտի թողնել: «Անմեղութեան կանխավարկած,- չեղած բեղերը ոլորեց քեռին, էն ո՛նց ոլորեց. բա որ իրօք բեղ ունենար:- Իմ սիրելի քուր, իմ սիրելի քրոջ մարդ, սիրելի հարազատներ...- մտքում նոյն բանը ա՛յլ տեղից սկսեց քեռին:- Քուրս, որ երկու տարի առաջ մեծ հրդեհ եղաւ ու այրուեց քո հոգու աջ հայելին, արդար չէր: Պիտի ձախն էլ այրուէր, պիտի քո հոգին հայելի չունենար ու չտեսներ կեանքի դէմքը, իմ տանջուած քուր: Եղեռնից մազապուրծ իմ ազգի շառաւիղ, իմ հալալ (արդար) աշխատաւոր փեսայ, երջանկութիւնն էն է, որ մեռնես ու էսպիսի բաներ չտես-

մես, բայց մենք չենք ծնում երջանկութեան համար,- էսպէ՛ս սկսեց քեռին,- մենք ծնում ենք մեր հոգին կոփելու համար, որ՝ ով գիտի, էլ ի՞նչ կայ Աստծոյ մտքում...- տեղ-տեղ լալով, տեղ-տեղ բեղերն ոլորելով ու մտածելով, որ բեղ պահելն էլ ուրիշ տեսակ տանջանք է, քեռին խօսեց ու խօսեց...- Մեր տղէն... մեր միակ արու զաւակը, մեր ու ձեր ընտանիքի տասնութերորդ հայր...- քիսկաց քեռին,- ա՛յ մարդ, էսպիսի բան կը լինի...- սկզբում քիսկաց քեռին, յետոյ քիսկոցը դարձաւ հազ, հազը՝ հազի նոպայ,- կեանքը դարձել է հարամարիւն... ջահել ենք կորցրել, ժողովուրդ,- բռան մէջ հազաց քեռին, էն ո՛նց հազաց՝ սիրտ ու թոք բերանը եկան. արիւն թթեց քեռին:- Մեր տղէն Ռուսաստանում սպանուել է: Տունուտեղ է ստեղծել մեր տղէն, ֆիրմա ու ժառանգութիւն... բայց հայն ո՞վ- է, որ էդպէս ապրի ռսի քթի տակ: Ժողովուրդ, սպանել են մեր տղին: Սպանուել է մեր ընտանքի տասնութերորդ հայր: Ռուսական հողը չարժէ նրա դիակին, չարժէ՛: Պիտի տեղափոխենք: Մեր ջահել, մեր եղնիկ, թագ ու պսակի արժանի զաւակը... ինքնաթիռը սեւ պիտի լինի մեր քարանձաւների հոգու պէս, դազաղը ճոխ պիտի լինի, ծաղկեպսակներ... Ծաղիկները դրախտից պիտի բերուած լինեն: Հոգեհա՛ց: Արար-աշխարհը պիտի մասնակցի էդ հոգեհացին, արար-աշխարհը պիտի մեզ մխիթարի... իսկ էդ բոլորը փող է, ժողովուրդ: Փող է, որ պիտի հաւաքենք: Ես էս տարիքիս ու էս առողջութեամբ՝ է՛լ չաքար, է՛լ խոլեստե-

րին (ճարպամաղձ), անօթներ որ՝ առհասարակ չունեն, սիրտս մնացել է անսնունդ ու անճանապարհ... դուք պատկերացրէ՛ք՝ ի՛նչ ցաւ է իմ սրտին, դուք էդ ցաւը պիտի՛ զգաք. մեր ջահել եղնիկին իր մեռած մուրազներով հօ չե՛նք թողնի Ռուսաստանի սեւ հողին: Ձեր յարգանքը ձեր արեան հանդէպ հէնց հիմա՛ պիտի ապացուցէք»:

Էլի ի՞նչ մտածեց քեռին, ի՞նչ տուեց ու առաւ, գնա՛ց, մնա՛ց, ինչքա՛ն հազաց քեռին, հազալուց յետոյ ի՞նչ խօսք ասաց, ո՞նց մխիթարեց, ի՞նքը մխիթարեց, թէ իրեն մխիթարեցին, ո՞րն էր ճշմարտութիւնը, ճշմարտութիւնն ումի՞ց իմացաւ քեռին եւ ո՞ւմ պահ տուեց՝ Աստծոյ մտքի նման անյայտ մնաց: Բայց երկու օր յետոյ Մեղրու սարերով, մէկ այլ անձնագիր գրպանում, հէնց սահմանապահների միջոցով էլ քեռին նրան անցկացրեց Պարսկաստան: Անցկացրեց ու շաքարը բարձր, պառկած մտածում էր՝ պէտք է դիմել դատարան: Դիմելու օրից վեց ամիս անց դատական կնիքը կ'իջնի նրա անուան վրայ՝ անյայտ բացակայող: Պիտի էդ կնիքը լինի, որ ազգի կենսագրութիւնը մաքուր լինի: Քեռին պառկած լքլքում էր շաքարից, անօթների բացակայութիւնից ու մտածում, որ կարելո՞րը վեց ամիս դիմանալն է: Մտովի քայլում էր դէպի դատարան, եւ մաղձաճարպի հենքն էլ անիծած, նրա ողջ յոյսը խոյի եղջիրներց էլ կեռ կանաչ, կծու պղպեղն (քիբար) էր:

Երեւան, 2013

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹԻՒՆ

ՕՐՀՆԵՐԴԵԼՈՎ ՀԱՍԿԵՐԸ ԿՐԼԿԻՆ՝ ԿԸ ԾՆԻՄ ԱՏՏՐԴԵՏԸ ՏԱՂԻՆ

Անոնց՝ որ իրենց նահատակութեամբ
Արցախի անկախութեան հիմնասիւնները կռանեցին:

Ծածանելով լոյսը Գանձասարի՝
կը հիւսեմ դրօշը ժայռին ու հողին,
նզնաւոր օրերը գունդ առ գունդ կ'առնեն թռիչք
սարին համբերաւարտ տեսիլքներէն եւ կրակը շուրթերուս
կը փառաբանէ արշալոյսը նորաբաց՝
գալիքի շողերուն սրինգներով:

Շուշին կ'արթննայ իր աւերներէն՝
իբրեւ առկայծ երազներու իշխանուհի,
կը սանդիւղէ ակօսները դեռ միացող արարներուն,
մոխիրները որք երդերուն, արծաթ վարսերն աղբիւրներուն
եւ Ստեփանակերտը, փողոց առ փողոց, իր վիրաւոր շէնքերուն
ջահջահախառն երկինքը կը դարմանէ:

Հորիզոնէն հրահաւեր կ'անցնին յանկարծ,
կաքանդակող յիշողութեան կը կրկնան տեսնեն իմ արեան,
մոխրադաշտերը դիւահար կ'առնեն լեզու եւ հարց կու տան.
– Ինչո՞ւ դաժան է անջրպետը լեզուին եւ ինչու նեղ՝
մայր դարպասը այբուբենին:

Մի՛ սխալիք,
գուր տեղ դուք ձեզ մի՛ չարչարէք,
բանաստեղծութիւնը միայն գիտէ գաղտնիքները կրակին,
արարն ու ամպը կը կարդայ հերոսներուն բիբերուն մէջ,
կակաչներն ու աքլորները կը պսակէ բարեշնորհ աստղերուն
հետ,

հայեացքները արեւուն կը հրդեհէ հողին բուրեան սաղմոսներով
եւ ժայռերը, երկինք-երկինք սաւառնող իբրեւ արծիւ,
սաւնդապահ գահաժառանգ կը հռչակէ:

Սուգն ու աղէտը կը սառնին
ճապաղիքին մէջ դալկադէմ մահիկին,
մինչ ես՝ անկեղծ զինուորն ու բանաստեղծը ցեղիս,
հողին աննինջ լուս արգանդը օրհներգելով՝
կ'ալլափոխուիմ օ՝ հեթանոս աշտանակի:

Արիւնը նժոյգներ կը դուրս երակներուս մէջ,
դէմքիս՝ նահապետներուն կանթեղները կը թագաւորեն,
սոխակներն ու շուշանները կը բուրեն մանկութիւնը լոյսին,
խսկ նորածիլ եղէգները կը փաղեղգեն կուղպ անջրպետը
լեզուին.

– Ով բոցերը նոր օրերու եւ կմախքը մահախուճապ անցեալի,
զարմերըս դեռ կենդանի են՝ լոյսին օրօրոցներուն մէջ
եւ բանաստեղծն ու ստորուածները փօն կը պսակեն
զունդերը մայրեան եւ զուարթունները դժոխքի՝
յաղթանակի նարօտներով:

Ծածանելով հասկերը լոյսին արտերուն՝
փուն կը կանչեմ հացաբոյր բանաստեղծը Վարուժան,
որ Արցախի ցորեաններն ալ յուշի՜կ-յուշի՜կ արթննան,
երակներէն զառնուկներուն «հոսի դող մը անսահման»
«զեղադալար կողերն ի վար»՝ ծովերն ի վար բլուրին
եւ Տէր Զօրի աւազներուն դժոխքէն բարձրանան վեր
երկնապալաց հասակները եւ ճիչերը հարսերուն՝
Թաղուած իսաւար ջութերուն մէջ Եփրատի...

Չեմ բնկրկիր,
կ'ամբողջանամ փոհիւ առ փոհիւ,
կը լեռնանամ նոր հայդուկներ նուիրեալ,
կը լիանամ անվախճան խորհուրդներովը հողին
եւ աղէտին ու խուճապին վերջին, վերջին շարժերուն դէմ
լուսաժպիտ մրգաստաններ, ոսկի արտեր եւ ջրվէժներ
փոթորկելով՝
ձեզի համար հարց կու տամ.
– Լոյսը որո՞ւ,

արդեօք ինչպէ՞ս իր դասերը կ'աւանդէ,
երբ Շուշիի միմարէի քիւին քառած,
մահ ու աւեր յամեցող ազերի բուն
իր կերկերուն լկտի ձայնով
դեռ նախնիներ կը գուժէ:

Չեն այլայլիր,
չեն յանձնուիր,
կը լեռնանան կրակ ու բոց մարտիկներ,
կ'ըլլան արեւ ու ոգի, սաւառնաթել գոյամարտ
եւ յաղթական կ'անցնին մահուան վերջին գիծէն ալ անդին:

Չեմ այլայլիր,
չեմ յանձնուիր,
կը լեռնանամ իմ կարգիս համբերութիւնը ժայռին,
կ'ըլլամ երդում ու ոգի, նորահրաշ յաղթամարտ
եւ գարուններ աւելող հրաշափառ վերադարձ,
չէ՞ որ ես չեմ կարօտներուն կռունկն եմ՝
իմ հին բոյնըս արեգակին

նոր շողերով, աղօթքներով
եւ յարութեան սաղմոսներով վերահիւսող:
Աստղերը մեր անդունդներուն մէջ սայթաքող դիակներ չեն,
զանգակներ կան յար դողանջող մեր պողպատեայ քայլերուն մէջ
եւ արծիւներ, նժոյգներ, մահակիրներ ու ասպետներ նորանուն,
որոնք լոյսին թռիչքն անվերջ տառերուս մէջ կը ձուլեն
եւ իմ խօսքը կ'ընեն կանաչ, կանաչ անտառ,
նոր օրերու վկայութիւն, կենաց կրակ
եւ պարարագ մշտաբարբառ...

Իմ նոր բոյնը
միջնաբերդն է ժամանակին
եւ մայր տանարը յաւերժին,
որ պարզելով արոք հասկերը վաղուան՝
կ'ըլլայ հեքիաթ, փօնահանդէս, հարսանիք
եւ ցնծութեան ու լոյսի սօսեաց անտառ...

Յնծա՛ Արցախ,
ցնծա՛ հպարտ ու երջանիկ,
խաչարեւորդ ասեղնագործ կարկաջին պէս՝
դար ու դարեր սպրէ՛ իսադադ, ցնծա՛ զուարթ,

որովհետեւ արւիիդ հիմա ե՛ւ դպիր է, ե՛ւ ասպետ,
գիշերըդ խօշ, սապարամբ՝ յաւերժութեան սպարապետ,
իսկ սպիրակ լոյս մաղթանքներ անջրեւող
Գանձասարի հաւարարիմ թթենին՝
արթուն պահակ ու բերդապահ:

Օրհնեա՛լ է լոյսը հողին
եւ օրհնեա՛լ առ յաւերժ սկանները ձեր խօքին:

Օրհներգելով ոսկի հասկերն աշտանակիս կրակին՝
յոսն կը ծնիմ ես անջրպետը տաղին
եւ այբութենն արեւին:

Ողջո՛յն արեւիդ,
ողջո՛յն բարեւիդ,
ողջոյն արարերուդ ոսկեշող բերքին,
ողջոյն լեռնէ-լեռ մարտեր մռնչող առիւծ զարմերուդ
վերածնունդէն,
ողջոյն երկինքիդ փառքը անջրեւող աքաղաղներուդ առնական
կանչին,
ողջոյն կիսափուլ երդէն բարձրացող նորածիններուդ առաջին
ճիչին,
եւ աստղերն ի վեր գարուններ կամնող կայրառ գեղջուկին,
արեգակ հոգի ծոցուոր հարսերուն,
ժայռին բողոքին, շանթին թմբուկին,
ջուրին ծիծաղին, հասկին նազպարին,
դասաւանդ շողիդ,
մեղրաբոյր մոմիդ,
Գանձասար վանքիդ,
Շուշուայ բերդ փառքիդ,
նորանկախ հողիդ խրոխտ ցնծերգին,
սահման չճանչցող դիցազուններուդ կանաչ տողանցքին,
առասպելներուդ անշեղ խոյանքին ու պարարագին
եւ յաւերժաբաժնի օրհնեալ կրակին
բիր, հազա՛ր ողջոյն
եւ հազա՛ր օրհնանք:

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Սրբեփանակերդ, 17 Հոկտեմբեր 2012,
Պէյրուք, 7 Նոյեմբեր 2012:

3. ՊԱՆԵԱՆ

ԿՈՇՈՒՄ

ՍՓԻՒՔ(ՆԵՐ)Ի ԱՐՁԱԿ(ՆԵՐ)Ի ԽՆԴԻՐՆԵՐԸ

(2ԵԿՆՈՒՑՈՒՄ՝ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ 5-6 Ապրիլ 2013-ին,
Երեւանի մէջ կազմակերպած
գիտաժողովին, նուիրուած Հայ Գրական Արձակին)

Ա.

Լաւ է զբաղիլ անցեալի ժառանգութեամբ, արժէտքեր, ծանօթանալ եւ ծանօթացնել: Նաեւ՝ աճեցնելու եւ կտակելու հարցով: Անցեալը ճանչնալ, բայց զայն ֆէթիշ չդարձնել: Մեր հայեացքը ուղղել դէպի ներկան եւ գալիքը:

Սփիւռք(ներ)ի (Սփիւռքը այլեւս բազմերես է ծագումով, լեզուներով եւ կազմութեան պատճառներով), գրականութիւնը կը յատկանշուի ցրուածութեան, ընկերային, աշխարհագրական եւ մշակութային ազդեցութիւններու այլազանութեամբ: Կրկնութեամբ անշահ շարունակութիւն, տեղական հեռու-մօտ շրջապատի մէջ ոստում-կապկում, այսօրքանի կը նուազի սեփականի իւրացումը: Հասարակ յայտարար փնտռել միտքի մարզանք է, զգացական հայրենասիրութիւն:

Մեր հայրենահանումէն ետք, կազմաւորուած գրողները շարունակեցին ստեղծագործել: Նոր միջավայրէն շատ բան առին ոմանք: Իրենց հետ բերած էին իւրացուած հարազատ աշխարհաբարը: Լեզուին կը տիրապետէին, Փա-

րիզ կամ Միջին Արեւելք, մանաւանդ անոնք, որոնք կազմուած էին Արեւմտահայաստանի Զարթօնքի սերունդի եւ անոնց անմիջական յաջորդներու շունչով: Ուրիշներ շարունակեցին գրել Երուխանի, Զարդարեանի գիծին վրայ: Յայտնուեցան ինքնատիպ դէմքեր, ինչպէս Շաւարշ Նարդունին, որ ունէր հայերէնի եւ Արեւմտահայերէնի պաշտամունքը, իր «ոսկեղնիկ»ը: Յակոբ Օշական շարունակեց իր ճամբան, ստեղծագործեց, ուսուցանեց, գրականութեան սպասարկուներ պատրաստեց, մնաց քննադատ, ինչպէս Ֆրանսացի Սէնթ՝Պէօվը, որուն հիացողն էր: Բննադատութիւն՝ որ գրականագիտութիւն եւ կամ գրախօսական չէ, եւ անոր կարիքը կայ:

Յաւի եւ հայրենասիրական յուշագրութիւնը, տաղանդաւորներու պարագային, եղաւ գրականութիւն, ինչպէս Համաստեղի:

Երբ հայրենամերձ գաղութները չէին ապակայունացած, գրականութիւն ստեղծելու ատակ արեւմտահայերէնը կարելի եղաւ փոխանցել նորերուն, մանաւանդ դպրոցներու միջոցաւ: Այս՝

մինչեւ 1960-ականները, երբ սկսան ապագադուքարարութիւնը եւ «յեղափոխութիւն»ները: Խիտ եւ ամուր գաղութները ապակայունացան, ներ-սփիւռքեան գաղթերը թափ առին, դէպի արեւի ապահով եւ բարօրութիւն խոստացող աշխարհներ, ընթացք՝ որ կանգ չէ առած, որուն վրայ գումարուած է Հայաստանէն տեղի ունեցած եւ շարունակուող աղէտ-արտագաղթը: Խուճապը նախորդող ժամանակաշրջանի գրականութիւն ստեղծելու ատակ լեզուին տիրապետողները, կը շարունակեն: Կան բացառութիւն նորեր: Նոյն հունով ընթացողներ կը նուագին: Հետեւաբար գրականութիւնը կը գրկուի զարգացման նախապայմաններէն:

Սփիւռքի գրական արձակը առաւելաբար արեւմտահայերէնով էր: Հին սերունդէն արեւելահայերէն գրողներ կային, որոնց վրայ կը գումարուէին Իրանահայ գրողները: Ուղղագրական տարբերութիւն չկար մինչեւ վերանկախացման յաջորդող ժամանակաշրջանը, օտար բառերու եւ օտարաբանութիւններու խճողում չկար: Վերանկախացումէն ետք, Հայաստանի Հանրապետութենէն տեղի ունեցած արտագաղթի հետեւանքով, արդի համարուած ուղղագրութեան եւ խորհրդային շրջանին ձեւաւորուած աշխարհաբարով, բառամբերքով, շարահիւսութեամբ եւ ուղղագրու-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՒԼՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ



ԳԻՏԱԺՈՂՈՎ

«ՀԱՄԱՆԱԿԱԿԻՅ

ՀԱՅ ՄՐԱՋԱԿԻ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ»

Համագրային հայ կրթական և մշակութային միությունը, Երևանի պետական համալսարանը և Հայաստանի գրողների միությունը կազմակերպում են երկրորդ գիտաժողով՝ նվիրված արդի հայ արչակի խնդիրներին:

Գիտաժողովը նպատակ ունի համակողմանիորեն, զբաղմունքի տեսանկյունից արդիական չափանիշներով արժևորելու ժամանակակից հայ արչակը, անդրադառնալու նրա հիմնական խնդիրներին, զարգացման միտումներին և հետևանքներին:

Գիտաժողովին հրավիրվում են գիտնականներ և բանասերներ Հայաստանից, Արցախից և Աֆյուրքից:

Ամսիկի 5

Գիտաժողովի բացում և ղեկաւորներ ԵՊՀ Բանասիրության ֆակուլտետի դասիչում:

Ամսիկի 6

Կըր տեղան և քննարկում Գրողների Օաղկաչորի տեղեւոգործական տանը:

Զեկուցումների հայտերը և թեզիսները ընդունվում են մինչև 2013 թ մարտի 25-ը:

Հայտերը ներկայացնել

Համագրային Հայաստանի գրասենյակ

Մաշտոց 3/14, 53 30 49

ԵՊՀ Բանասիրության ֆակուլտետ

Խոտաշնոեցաւտ

Հայաստանի Գրողների միություն

Արմյան 52ա, 54 43 94 (137)

Մ. Բաղդասարյան 3, 56 45 70

ԳԻՏԱԺՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՃԱՐՈՒՄՆԵՐ

2013

ԼՊՊԻՎ 5-6

թեամբ գրականութիւն կը մշակուի նաեւ սփիւռքի մէջ: Կարծէք գրողները կը շարունակեն ապրիլ Երեւան, կը բնակին այլուր, Փարիզ, Լոս Անճելէս: Երեւոյթը չէ քննուած, իւրաքանչիւր խմբաւորում կ'ապրի իր հասկցած ձեւով, եւ կարելի չէ խօսիլ Սփիւռքի գրական արձակի մասին, որպէս արտայայտութիւն եւ բովանդակութիւն, այլ արձակներու, ինչպէս որ պէտք է խօսիլ սփիւռք(ներ)ու մասին, լեզուական, մշակութային, քաղաքակրթական, շրջապատի, հոլովոյթի եւ տնտեսու-

թեան: Ինքզինք փնտռող խառնակութիւն: Ո՞ւր կը հասնինք, անորոշ է: Նախատեսութիւնները լաւատեսական կամ յոռետեսական խօսք են: Լեզու, գրող եւ ընթերցող միաժամանակ կը նահանջեն:

Բ.

Սփիւռքը շարունակութիւնն էր հայրենահանուածներու եւ Արեւմտեան Հայաստանի, իր մշակոյթով, աշխարհաբարով, ապրած ողբերգութեամբ, հոգեբարոյական հետեւանքներով եւ հոգեխառնութեամբ: Արեւմտահայերէնը կրողն էր Սփիւռքի արձակին, անկախ բովանդակութեան հարցերէն: Յակոբ Կարապետցի արեւելահայերէնը խրամատի տարբերութիւն չունէր, սահուն էր, վճիտ: Այսօր Արեւմտահայերէնը ենթակայ է ճնշումներու, որոնք կը խաթարեն իր ինքնուրոյնութիւնը, սկսելով խօսակցական լեզուէն, մինչեւ մամուլ, եւ գրականութիւն, որ շարունակութիւն չըլլալու վտանգին դէմ կանգնած է: Մեծամասնութեան համար, լեզուն որակական նահանջի մէջ է, որոշ շրջաններու մէջ՝ խուճապ: Լեզուն պէտք է գրողին, ընթերցողին ալ պէտք է ան, որպէսզի ընկալէ: Ընթերցող զանգուածը կը նօսրանայ ընկերամշակութային եւ տնտեսական պատճառներով, լեզուի նահանջով, որ կը խոչընդոտէ հայերէնով ստեղծագործութիւնը եւ ընկալումը: Գրող եւ ընթերցող կը դառնան դէպի օտար լեզուներ: Տպաքանակ եւ վաճառուած-չվաճառուող գիրք ցուցանիշ են հայերէնով գրականութեան ներկան բնորոշելու եւ ապագայ

նախատեսելու համար:

Սփիւռք(ներ)ը հայերէնը իր գրական շնորհով պահելու դժուարութիւն ունի, ենթակայ՝ ուղղակի-անուղղակի-օտարամէտ ճնշումներու: Օտարագիրները կը բազմանան, նաեւ ազգային խորքի թուլացման պատճառով, օտար միջավայրի մէջ տեղ գտնելու եւ ընթերցող լայն շրջանակ նուաճելու միտումով, որուն մէջ կը ներառնուին հայերէնով գրականութիւն ընկալելու անկարող դարձած հայերը:

Թումբ կանգնելու ղեկավարումը կը բացակայի: Այս ծիրէն ներս, առարկայական քննութեան պէտք է ենթարկել թարգմանական գրականութեան իրաւատուկ պարագան, որ ցուցանիշ է: Նախապէս հայ գրականութիւն կը թարգմանուէր օտար լեզուներու, օտարին ծանօթացնելու համար, (այդպէս էր Զօպանեանի La Roseiraie d'Arménie-ն), այժմ այդ կ'ըլլայ ներքին շուկայի համար, հայերէնով գրականութիւն ընկալելու անկարողներուն համար: Մեփականով հետաքրքրուողը կը պակսի արագօրէն: Օտար շրջանակ թափանցելու համար կան թարգմանութեան որակի, տպաքանակի, ցրտումի եւ ներկայացման հարցեր:

Ժամանակակից «սփիւռքներ»ու աշխարհաբարներով արձակի եւ անոր հետեւանքներուն մասին պէտք է խօսիլ: Անոնք սոսկ լեզուական չեն: Հարցերը պէտք է քննել արմատներու վերականգնումի, անմիջական կացութիւնը ըմբռնելու եւ վաղուան յաջողութիւններու տեսանկիւնէ: Աշխարհաբարով գրականութիւնը որոշակի կերպով որակի հարց ունի սփիւռքի մէջ, հայե-

րեն գիտնալու հարց, որուն ուսուցումը քանակական եւ որակական նահանջի մէջ է: Կայ ոճի հարց, որ արժանատրներու պարագային որակ ունի, բայց որ կը յառաջացնէ միայն փակ շրջանակէ մը հասկնալիութեան խնդիր, զանգուածին չի հասնիր, չ'ընկալուիր անոր կողմէ, եւ տեղի կ'ունենան հեռացումները եւ օտար լեզուով գրականութիւն մշակելու միտումները, ընթերցողին կամ գրողին աւելի մատչելիութեան համար: Ըսենք, բացուելով փառասիրութիւն գոհացնելու: Երեւոյթը ունի մշակութային եւ քաղաքական հետեւանք: «Ընտիր ոճով գրականութիւն»ը մասնատրներու եւ ընտրանիի համար չէ միայն: Անոր մէջ ժողովուրդը ինքզինք պէտք է տեսնէ: Հայերէնի չտիրապետելու պատճառով ան անհաղորդ կը մնայ այդ գրականութեան: Բարձրորակի ձգտումով եղած ստեղծագործութիւնը կը մնայ փակ շրջանակի մէջ: Այսօր ստեղծագործող-ընթերցող «osmos»ը, հաղորդակցումը, իրերախառնում-փոխափանցումը չկայ, սփիւռքի ներկայացուցած բազմերես պատճառներով: Յստակացումներ, գտում եւ մաղեր անհրաժեշտ են, որպէսզի արժեւորումները ճիշդ ըլլան:

Գ.

Սփիւռքի արձակը զանազան արտայայտութիւններ ունեցած է եւ ունի. բարբերու պատում, ինչպէս այդ պիտի ընէին կարգ մը գրողներ եթէ Սամաթիա կամ Գում Գաբու մնացած ըլլային: Արմատախիլ ժողովուրդի պոռթկումի գրականութիւն կը մշակեն Շահան

Շահնուր, Վազգէն Շուշանեան, ընդլրգումի բովանդակութիւն, որ նաեւ կառչելիք տեղ կը փնտռէ, ժամանակ մը յատկանշող՝ ինքզինք հասկնալու ճիգով եւ ինքնահաստատում: Համապարփակ խորացումով ու պատկերացումով, Հրաչ Զարդարեան, գրեթէ անժանօթ մեր օրերուն, իր «Որբացող մարդիկ» վէպով կը ներկայացնէ ժամանակաշրջան մը, ընկերային եւ հոգեքանական տեսակետէ: Տարբեր է Նիկողոս Սարաֆեանի ինքամփոփման եւ խորացման արձակը, որ կը նուաճէ մարդկայնական իսկական խորք, որ նախապայման է իսկական վերապրումի: Նոր ստեղծուող սփիւռքն էր: Պէտք պիտի ըլլայ սպասել Գրիգոր Պըլտեանի «Սեմեր»ը, ցեղասպանութեան եւ հայրենահանման հետեւանքները ապրողներուն մէջ դաջուած տեսնելու, այսինքն՝ սփիւռք կացութեան ըմբռնման եւ գերանցման հասնելու: Յաւեն անոր գեղագիտական պատումով հասնելու համար նոր հանգրուանի մը: Բովանդակութեան ստեղծաշարը փոխելու ուսում: Յատկանշական է Սկրտիչ Մարկոսեանի վէպը, «Մեր այն կողմերը», անցեալի եւ ներկայի ինքնատիպ միաձուլումով, լեզուով եւ ոճով, որուն համար կրնանք ըսել տարբեր ձեւով սփիւռք կամ մնացորդացի «սակա», յուշերով, տեղւոյն վրայ մնացող եւ վերապրողներով :

Կան գրողներ, որոնք այլապէս կրնային եւ կրնան մեր ժողովուրդի ներկան փոխանցող արձակով հրապարակ գալ, բայց պարտադրաբար կը մնան գրեթէ սիրողական: Անոնք իրենց գրիչով չեն կրնար ապրիլ: Այս կէտը

յաճախ կը շրջանցենք: Ուսուցիչ են, մամուլի աշխատատեղ, կը հետեւին ազատ ասպարեզի: Դեռ կայ տպուելու խնդիրը: Հայաստան, կ'ըսեն, «պետական պատուէր»ով հրատարակութիւն, սփիւռքի մէջ կան քանի մը հիմնադրամներ: Գրողը ապրելու համար ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԵԱՆ պէտք ունի, որ կ'ընդունի իր պատրաստած գիրքը, կ'ըսէինք ձեռագիրը, - յատուկ «ընթերցող»ներ կ'որոշեն հրատարակել կամ ոչ: Որակի առաջին մաղէն կ'անցնի գիրքը: Եթէ ընդունուի, համաձայնագիր կը կնքուի, պատուագին կը վճարուի, եւ հրատարակչատունը կը զբաղի տպագրութեամբ, ներկայացումով, ցրումով, ի հարկին թարգմանութեամբ: Մեր պարագային գիրքը լոյս կը տեսնէ չնչին տպաքանակով եւ նուէր կը տրուի: Յաճախ՝ մեկէնասի մը օժանդակութեամբ: Յրուումը՝ հեղինակի ճամպրուկով: Հազիւ թէ գրախօսական կը գրուի: Գրական քննադատութիւն չկայ, գիրքը իրապէս արժեւորելու համար: Բարեկամական զինեւծօն կը կազմակերպուի: Այս պայմաններուն մէջ ինչպէ՞ս կրնայ աճիլ գրականութիւնը:

Գրականութիւնը եւ հայերէնը նուագորդի կ'ենթարկուին մամուլով, յաճախ կ'աղաւաղուի եւ կ'աղճատուի լեզուն, Հայաստան եւ սփիւռք(ներ): Անտիրութիւն է:

Սփիւռքի արձակը լուրջ հարցական-

ներու առջեւ է: Հայերէնի տիրապետողներ կը նուազին: Հայկական վարժարաններու մէջ անոր ուսուցումը, տեղքայլ կ'ընէ որպէս երկրորդական լեզու, հետաքրքրութիւնները փոխադրւած ըլլալով գործնականութեան մակարդակ, ընկերութեան պահանջներու ճնշումով եւ մշակութային իրա՛ւ քաղաքականութեան մը բացակայութեան:

Հայերէն չգիտցողներ յանկարծ թուրք մրոտելու տենդով կը բռնկին, կը գտնեն մէկը որ կը խմբագրէ, վերստին կը գրէ: Ուրիշներ տաղանդ չունին եւ էջ կը թխեն: Զանի որ հրատարակչատան

եւ գրական քննադատութեան մաղը չկայ, գիրքեր լոյս կը տեսնեն... Տաղանդաւորներու գործերը կամ չեն տպուիր կամ անձանօթ կը մնան: Կը գումարուի նորատեսակ չտեսութիւնը. օտար լեզուով գրուած գիրք եւ անոր հեղինակը, տաղանդաւոր կամ անտաղանդ,

քաղաքէ քաղաք կը պտտցնենք, հայերէն գրող հայ բանաստեղծը կամ արձակագիրը մառանը կը մնան: Մշակութային քաղաքականութիւն մը եթէ չորդեգրուի, հայաճնունդ օտարագիրները, անոնց քայլերուն հետեւելով օտար լեզուներով ընթերցող հայաճնունդները պիտի բազմանան, ի հեճուկս հարազատի: Պիտի հասկնա՞նք, որ օտարագիր գրականութիւնը որդեգրուած լեզուի գրականութեան կը պատկանի, նոյնիսկ եթէ սնափառական-քաղքենիական բաւարարութիւն պարգեւէ, կամ

*ՊԻՏՐ ՀԱՍԿԵԱՆՔ, ՈՐ
ՕՏԱՐԱԳՐԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ՈՐՈՒՆԳՐՈՒՄԸ ԼԵՉՈՒԻ ԳՐԱ-
ԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՐ ՊԱՏԿԱՆՈՒ,
ԱՊԿԱՐԱԿ ԱԹԷ ԱՆԱՓԱՊԱ-
ԿԱՆ-ՔԱՊԵՆՈՒԿԱՆ ԲԱՐԱ-
ՐԱՐՈՒԹԻՒՆ ՊԱՐԳԵՒԷ, ՎԱՄ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏ ԱՊՐԵ-
ՉՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԵՇՈՂ ՎԱԼ-
ԻՃԱՆԻՐՈՒ ԲԱՐՈՉՉՈՒԹԵԱՆ
ՆՐ ԱՊԱՍԷ:*

գրականության հետ առընչություն չունեցող կալուածներու քարոզչության կը նպաստէ:

Սփիւռքի արձակի եւ գրականության մասին պէտք է մտածել ապագայի տեսանկիւնէ: Այս ազգային քաղաքականութիւն է, ինքնութեան հարազատութիւն պահելու համար: Հայաստան կարելորդ դեր կրնայ ունենալ, նպաստել արեւմտահայերէնի անադարտ պահպանման եւ զարգացման, եւ անով ստեղծուող գրականութեան, որպէսզի արեւմտահայերէնով գրականութեան ընթացքը փակուղի չմտնէ: Այս առաջադրանքով ալ, ուղղագրութեան վերականգնումը մեծապէս օգտակար կ'ըլլայ: Առանձին նիւթ է, որուն մասին օր մը կ'արժէ խօսիլ ազգային ապագայի տեսանկիւնէ, շարունակութիւն չեղող պատմաքաղաքական սխալը սրբազրելու համար:

Եթէ բնական ցանկութիւն է միջազգային գրական աշխարհ մուտքը հայ գրողին, ան պիտի ստեղծագործէ իր լեզուով: Եթէ քննադատութիւնը գտնէ բարձր որակ, այն ատեն պէտք է թարգմանել եւ տարածել, անկախաբար կողմնապաշտութիւններէ:

Միշտ ի մտի պէտք է ունենալ ընթերցողը եւ ընթերցող զանգուածը, որ գրո-

ղին alter ego-ն է, արձագանգի սրահը: Ո՞ր է ան: Ինչպէ՞ս զարգացաւ անոր անտարբերութիւնը: Պատճառ-պատրուակներ միշտ կարելի է թուել: Բայց կը խօսի՞նք ինչ ընելու մասին:

Խանդավառուելու կողքին, կարկրտան չեղող միջոցներ կը ստեղծե՞նք իրա՛ւ զարթօնքի մը համար: Կը լսե՞նք Օշականի խօսքը. *Մագաղաթը ատելի երկար կ'սպրի եւ կը դիմանայ քան մարմարը*, եւ այդ կը վերածե՞նք ազգային քաղաքականութեան... Աւելցնե՞նք՝ բիզնեսը եւ քարոզուող տուրիզմը, որ կարծէք այլեւս տեղ չի ձգեր գրականութեան: Ո՞ր են Հայաստանի եւ սփիւռք(ներ)ի անհետացած գրատուները... Երբ գիրք կը տպուի, ի՞նչ կ'ըլլայ անոր ճակատագիրը, երբ գրատուն չկայ:

Հայերէն սիրողը, զայն պաշտպանողը, եւ հայ գրողը բիզնեսմէն չեն, կը նմանին առասպելի Սիզիֆին, գիտնալով, որ բարձունք տարուած ժայռը կրկին պիտի գլորի, անոնք կը շարունակեն զայն կրկին վեր հանել... Այդպէս են նաեւ սփիւռքի գրողները:

Եթէ Սիզիֆներ չմնան...

5-6 Ապրիլ 2013, Երեւան

ԼԵՒՈՆ ՄՈՒԹԱՖԵԱՆ*

Թատերագետ եւ արուեստի գործիչէն
գոյգ մը վերլուծական գրութիւններ

ԿՈՇՈՒ

ՆՈՐԱՅՐ ԱՂԱԼԵԱՆԻ
ԱՐՁԱԿԸ**

(Զեկուցում Համազգային կազմակերպած
գրական արձակի նուիրուած գիտաժողովին, Երեւան-Ծաղկաձոր)



Լեւոն Մոյթաֆեան

Նորայր Աղալեանը գրական-գեղարուեստական այն սերնդի ներկայացուցիչն է, որին կոչում ենք «վաթսունականների»: Անշուշտ, շատ վաղուց ուղղումներ են պետք հասկացութեան մէջ, քանզի սերունդն իր ակունքներն աղերսեց յիսունականներին, իւրատեսակօրէն վերադարձաւ 20-րդ դարասկզբի գեղարուեստական-գեղագիտական այն հաստատումներին ու որոնումներին, որոնք գոյաւորեցին նոր

արտայայտչական համակարգեր, մասնաւորաբար գրականութիւն բերեցին նոր փիլիսոփայական հոսքեր ու հայեցակարգեր, փոխեցին «մարդու համալսարանի» ամրակայուած պատկերացումներն ու ընկալումները եւ բոլորովին ինքնայատուկ, երբեմն նաեւ տարընթերցուող ու արտառոց թուացող տեսադրոյթների կիրառմամբ ստեղծեցին գեղարուեստական իրականութեան նոր չափումներն ու սկզբունքներն:

րը, վերափոխեցին գրականության հետազոտման նիսի՝ մարդու ու նրա ժամանակի փոխադրանքներին ուսումնասիրման-պատկերման մեթոդաբանությունը:

Մերունդը ելաւ գոյաբանական եւ գեղագիտական բազմաթիւ ընկալումների դէմ, առաջին հերթին՝ սկզբում փոքրինչ վեհերոտ, ապա արդէն տեսական-տեսաբանական հիմնադրումներով եւ գեղարուեստական ճշմարտութիւնների հաստատման ուժով հարուածեց կապանքող-պարտադրող «սոցիալիստական իրապաշտութեան» մեթոդաբանութեանը՝ այսպիսով ճանապարհ բացելով մասնաւորաբար եւրոպական գրականութեան մէջ շատ վաղուց իրենց համար յուսալի հանգրուաններ ձեւաւորած մեթոդների եւ ուղղութիւնների առջեւ: Մերնդի ներկայացուցիչները գրականութիւն եկան՝ իրենց ներաշխարհի իւրատիպ-ինքնայատուկ արտացոլումները հաստատելու, հնի ու հնացածի դէմ կռուելու եւ նորարարութեան շունչը հաստատելու՝ երբեք չհեռանալով դասական-աւանդականի հզօր ներագոյեցութիւններից, որոնք բացատրում-բացայայտում էին իսկապէս գրականութեան նորագոյն ժամանակաշրջանը հաստատող առաջնահերթութիւնների եւ հիմնախնդիրների ժառանգական-շարունակական կապերը: Մերնդի եւ մասնաւորաբար նրա ներկայացուցիչ հանդիսացող Ն. Ադալեանի համար առաջնային դարձան գեղարուեստական արձակում իբրեւ բարդագոյն տեսակ հանդիսացող վէպի մասին ձեւաւորուած պատկերացումների ընդլայնումները, աւանդական

բնութագրումների եւ տեսական ձեւակերպումների վերաբեռնումները:

Բելինսկին ստեղծել էր վէպի իր տեսութիւնը, որը մօտ ու հարազատ լինելով Հեգելի ու Կյերգեկորի նախանշումներին, այնուհանդերձ առաւել ամփոփ ու որոշակի խորքային բեռով հաստատում էր. «Վէպը ծագել է քրիստոնէական ժողովուրդների նորագոյն քաղաքակրթութիւնից՝ մարդկութեան պատմութեան այն դարաշրջանում, երբ բոլոր քաղաքացիական, հասարակական, ընտանեկան եւ առհասարակ մարդկային յարաբերութիւնները դարձել էին բազմաբարդ ու դրամատիկ, կեանքը տարածուել էր անսահման տարրերի խորութեամբ ու լայնքով: Բացի հետաքրքրաշարժութիւնից եւ բովանդակային հարստութիւնից, վէպը ոչնչով ցածր չէ էպիկական պոէմից» (poème épique) նաեւ որպէս գեղարուեստական ստեղծագործութիւն»: Վէպի այս տեսութիւնը չէր կորցրել իր իմաստն ու նշանակութիւնը, կիրառելիութիւնը, չնայած 20-րդ դարի 30-40-ական թուականներին, իբրեւ իւրատեսակ բողոք, յառնեց բեկկետեան «անտի վէպը»՝ խախտելով-աւերելով կառուցուածքի, թեմայի ու հիմնախնդրի, իրականութեան պատկերման շատ ամրատիպեր՝ իր համար առաջնային փիլիսոփայական յեմարան հռչակելով աթէիստական էքզիստենցիալիզմը (existentialisme athé), ասել է թէ վէպի համար տեսանելի եւ ընդունելի համարելով գոյութեան փիլիսոփայութեան այն տիպը, որը ձեւաւորել էին Հայդեգերը, Սարտրը, Բամիւն: Հետեւաբար, յատկապէս Նորայր Ադալեանի հա-

մար, ով ձգտում էր իր վիպական գրականության մեջ համադրել-համատեղել աւանդականն ու գերարդիականը, Բելիմսկու ձեւաւորած կադապարը, որի կրողներն էին ռուս վիպագրութեան շատ երեւելիներ՝ Պուշկինից, Տոլստոյից ու Տուրգենիւից սկսած մինչեւ Ֆեոդոր Դոստոեւսկի, ով ստեղծեց վիպականի նոր ընկալումը՝ հեռանալով վէպ-էպոպէայի (roman épique) գաղափարից, դառնում էր հիմնական, սակայն ոչ երբեք գլխաւոր, քանզի արդէն 21-րդ դարասկզբին հրապարակ հանած իր վիպական երկերում գրողը գնում է դէպի գերմանա-աւստրիական վէպի ձեւաւորած որոշ աւանդոյթների եւ լատինամերիկեան վիպական գրականութեան սկզբունքների կիրառումները՝ այսպէս ստեղծելով արդի հայ վէպի իր ձեւոյթը, գեղագիտական-գեղարուեստական այն չափումները, որոնք առաջին հերթին վերաբերում են կառուցւածքի տեսութեան վերանայումներին, դիպաշարային ընթացքի ընդգրկումներին եւ յատկապէս կերպարաստեղծմանը: Ընդունելով արեւմտեան վէպի մի շարք հիմնատարներ, այնուհանդերձ Նորայր Աղալեանը վիպաստեղծումի ճանապարհին չտարանջատուեց-չհեռացաւ ազգային նորագոյն վէպի հիմնաւորած աւանդոյթից, ընդունելի համարեց վէպի չարենցեան ընկալումը, որն իր իւրատեսակ արտացոլումներն ունեցաւ մասնաւորաբար «Երկիր Նաիրի»-ում, որը կարող ենք համարել Նորայր Աղալեանի ստեղծագործական երրորդ շրջանի գլխաւոր ուղենիշներից մէկը:

Նորայր Աղալեանի առաջին պատմը-

ւածքները, որոնք հրապարակ եկան գրական մամուլում եւ առանձին գրքերով, գեղարուեստական ձեւի ու պատումնայինի առումով արդէն իսկ նոր էին, ինքնատիպ, ազգային արձակի երբեմն յոգնած թուացող աւանդոյթների ներկայութիւնը չէր խանգարել մոռուելու դէպի փորձարարութիւնը, այսպէս կոչուած՝ դէպի եւրոպական գերարդիականը, որը յատկապէս արձակում ձեւաւորում էր նոր միտումներ, նկատելի դարձնում բարձր մտայինը, որով էլ աչքի ընկաւ եւ առանձնացաւ Նորայր Աղալեանի ստեղծագործութիւնը: Դրա առաջին եւ հզօր բարձրակետը «Խաղաղ զօրանոցներ» վիպակը եղաւ: Ժամանակի գրականագիտական միտքն, իհարկէ, իր գնահատականները հնչեցրեց, փորձեց դիտարկել այս ստեղծագործութիւնը ձեւաւորող նոր միտումների խորապատկերին, ընթերցողները շտապեցին այս վիպակում տեսնել անսովորի ու սովորի ներդաշնակ միաձուլումը, նկարագրական արձակի աւանդոյթների ժխտումը: Եւ, այնուամենայնիւ, երկի ճշմարիտ արժէքները մնացին չհետազօտուած եւ չուսումնասիրուած. տակաւին առկայ էին գրականագիտական եւ ընթերցողական կարծրատիպերը, դեռ շատերը ազահութեամբ էին կլանում պատմավէպերն ու սենտիմենտալ-մելոդրամատիկական (sentimental-mélodramatique) պատմութիւններով լեցուն, մաւե՛կոյխոզ-սովխոզային անցուդարձերը մանրամասն-ակնարկային ոճաձեւերով ներկայացուող ստեղծագործութիւնները: Աւելին, ոմանք մեր գրականութեան մէջ «պեղել-յայտնաբերել»

էին այսպէս կոչուած «գիւղագրութեան» վերագարթօնքի արտերեւոյթը՝ մոռացութեան մատնելով նոր եւ հետաքրքիր քաղաքային արձակի ձեւերունը: Իսկ Նորայր Աղալեանը հէնց այդ քաղաքային արձակի միտումների կրողն է, նրա տեսադրոյթի եւ ժանրաճային առանձնատկութիւնների հիմնաւորողներից մէկը: Ուզում ենք կարելոքել յատկապէս մեր այս դիտարկումը, քանզի Նորայր Աղալեանի ողջ գրականութեան եւ մասնատրաքար վիպականի մէջ, որպէս առաջնային հիմնախընդիր, յառնում է քաղաքի կերպարը՝ ձեւաւորելով քաղաք-ժամանակ փոխառնչութիւնն ու իւրատիպ արտերեւոյթը: Քաղաքային բնապատկերը միայն տեղավայր չէ, գործողութեան զարգացման, խաղ-իրականութեան կազմակերպման բենապատկեր չէ, այլ բնատրութիւնների ու բնութագրերի, փիլիսոփայական որոշակի ներքեռնումների, տեսակների ու նրանց գոյաբանական խնդիրների հետագօտման ծաւալուող ընդհանրացող շրջանակն է, որը երբեմն ձգտում է դէպի անհեթեթը, դէպի կեանքի բնագանցական (մետաֆիզիկական) ձեւոյթի ձեւաւորումները, բանականի (ռացիոնալ) ու անոր հակառակի արտասովոր ներդաշնակումները: Քաղաքը Ն. Աղալեանի վիպական գրականութեան մէջ յառնում է որպէս աշխարհի ինքնայատուկ մանրակերտ, որը ձեւաւորում է հոգեբանական յարակարծութիւնները, գրականութիւն բերում հերոսի նոր տեսակ, որը որքան էլ ընկերային միջավայրի խտացումն ու խորհրդանշան է, նոյնքան էլ նոյն այդ ընկերային միջավայրն իր մէջ կրում է որպէս

գոյութեան կերպափոխումի մեծագոյն արտայայտութիւն:

Ժամանակ ու քաղաք միասնութեան գեղարուեստական կերպարը Նորայր Աղալեանի վիպական գրականութեան մէջ ծաւալում է մի ողջ հարիւրամեակի շրջագծերում՝ դառնալով պատմաշրջանի արտացոլանքը, պատմական իրադարձութիւնների ու արդիական խնդիրների ներհիւսման կարելորագոյն միջոցը: Իբրեւ քաղաք-կտաւի առաջին օրինակ, գրողը ներկայացրեց «Կապոյտ Երզնկա» պատմուածքների ժողովածուն, որն առաջին փորձարարութիւնն էր նրա գրականութեան մէջ: Այստեղ գրողը, իր համար որոշակի նախատիպ ունենալով Վահան Թոթովենցի «Կեանքը հին հռովմէական ճանապարհի վրայ» վիպակը, ստեղծեց փորակտաւ երկերի մէջ պարփակուած պատմութիւնների մի ամբողջ շարք, որը դառնում է միասնական-միակառոյց վիպական ստեղծագործութիւն՝ մէկ կոնկրետ-ընդհանրացող հերոսով՝ Երզնկայով: Գրողական այս հնարքը, որը կարող ենք կոչել նաեւ «դրուագային վէպ», ձեւաւորուել է տակաւին 19-րդ դարում՝ իր նախափորձը հաստատելով Մ. Լերմոնտովի «Մեր ժամանակի հերոսը» վէպում եւ Ն. Գոգոլի «Միրգորդ» պատմուածքաշարում, որը կարող ենք դիտարկել իբրեւ մէկ ամբողջական գրական ստեղծագործութիւն՝ թեմայի ընդհանրականութեամբ, կերպարների տիպաբանական միասնականութեամբ: Այսպիսին է նաեւ «Կապոյտ Երզնկան», որը յենում է «կարօտի գրականութեան» մի շարք գեղարուեստական լուծումների վրայ՝ անց-

եալ-կորուսեալ հայրենիքի, գրեթէ դի-
ցական բնութագիր ունեցող տիպարնե-
րի միջոցով ձեւաւորելով նաեւ ժամա-
նակի կերպարը՝ որպէս աշխարհաքա-
ղաքական ողբերգական իրադարձու-
թիւնների ինքնատիպ խորհրդանիշի:
Ժամանակ եւ քաղաք համադրութեան
կողքին յառնում է «սպասման հնչե-
րանգը», որը ծնունդ է առնում որպէս
«սահմանային իրավիճակի» ցուցիչ՝
այսպէս Նորայր Աղալեանի գրակա-
նութեան մեթոդաբանական հենքերի եւ
գեղարուեստական դրսեւորումների
մէջ տեսնելով գոյապաշտական (էք-
զիստենցիալիստական) իմաստաբա-
նութեան ինքնօրինակ դրսեւորումը:
Կորստի ցաւն ու տագնապը, փշրուող-
աւերուող իրականութիւնից ծնունդ առ-
նող հեծեծանքը, գոյութեան ինքնայա-
տուկ խորհրդանիշի՝ քաղաք-հայրենի-
քի պատկերի այլափոխումը գրողին
տանում են դէպի վիպական մի նոր
ստեղծագործութեան ծննդի՝ «Սեւ քա-
ռակուսի կարմիր անապատում» վե-
պին, որը մօտ ու հարազատ լինելով ցե-
ղասպանութեան գեղարուեստական
պատկերման տիրոյթին, առաջին հեր-
թին դառնում է քաղաքի աւերման, այդ
քաղաքի շարժումն արտացոլող մարդ-
կային տիպարների ինքնաստուգման
ու ինքնասուզումի միջոց ու նպատակ:
Այստեղ, իբրեւ վիպական նախադրու-
թեան առանցք, յառնում է քաղաքը՝ որ-
պէս իրադարձութիւնների կիզակենտ-
րոն եւ պատումնային ընթացքի շարժիչ
ուժ: Քաղաքի կերպարը ձեւաւորելիս
Աղալեանն իբրեւ խորհրդանիշ-նախա-
կերպար, ընդունել է չարենցեան դի-
տումը՝ արտացոլուած «Երկիր Նաի-

րի» պոէմանման վէպում: Որքան ճե-
պագծային, նոյնքան էլ խորքային քա-
փանցումներով եւ սեւեռումներով
գրողն իր այս նոր վէպում հասել է բազ-
մադէմ-բազմատիպ կերպարաշարքի
ստեղծման՝ բոլորին կապակցելով քա-
ղաքին, քաղաքի պատմութիւնն ու ներ-
կան, ինքնայատուկ բնաւորութիւնն
արտացոլելով ամէն մէկի մէջ: Քաղաքը
յետոյ դառնում է շարժուող քարաւան,
անցնում փորձութիւնների միջով: Իւ-
րաքանչիւր հերոս ներքին երկխօսու-
թիւն է վարում հեռացող-անհետացող
քաղաքի հետ՝ այժմ քարաւանի մէջ
տեսնելով քաղաքի ողբերգական-բե-
կուող կերպարը: Վաւերական, երբեմն
չափազանց իրապաշտական քաղաքի
փոխարէն՝ քաղաք-այլաբանութիւն:
Վէպի հերոսները մշտապէս քաղաքի
հետ են, նրանցից ոմանք լքում են քա-
րաւանն ու վերադառնում քաղաք՝ այս-
պէս հաստատելով անհատ-քաղաք մի-
ասնութեան անքակտելիութիւնը: Վի-
պական պատումի աւարտին քաղաքը
վերափոխւում-վերակերտւում է, վե-
րածւում է «Ոսկէ ձիւ»՝ այսպէս խորի-
դանիշի (սիմվոլ) կերպարանափո-
խութիւնը դարձնելով ընդունելի ու ար-
դարացուած: Քաղաքը վերածւում է իր
ոսկեհոռ բաշը քամուն տուած ձիւ,
երազանքի խորհրդանիշի... Ահա գրողի
ինքնայատուկութեան արտայայտու-
թիւնը, ահա գեղարուեստական հնա-
րանքի բացառիկութիւնը, որն էլ յուշում
է մի շարք գեղագիտական վճիռներ,
մասնաւորաբար տանում վէպի ձեւա-
կառուցուածքային սկզբունքների նո-
րահաստատումների: Այս վէպում Նո-
րայր Աղալեանն իսկապէս առաջար-

կում է վեպի աւանդական կառուցուածքին ոչ բնորոշ լուծումներ, դիպաշարը տրոհում տարբեր պատմութիւնների մէջ, վեպի երկրորդ գլուխը դիտարկում իբրեւ առանձին մի պատմութիւն, որն ընդհանուր դիպաշարին աղերսում է իբրեւ պատումնային ընդհանրականութեան միատր: Սա եւս վեպի ժանրային աւանդոյթի խախտումն է՝ արդարացուած մտայղացման իւրատիպութեամբ:

Ժամանակ եւ քաղաք միասնութեան զարգացումն իբրեւ նոր բանաձեւ՝ Ադալեանը տեսնում է ժամանակ եւ երկիր համադրութեան մէջ՝ արդէն ստեղծելով «Ապոկալիպսիս» վեպը՝ 20-րդ դարի վերջին տասնամեակի հայոց պատմութեան այլանդակուած-խորհրդանշացուած պատմութիւնը՝ մատուցուած այլաբանութեան ու այլասացութեան հրաշալի արտացոլումներով, խորհրդանշանների ու այլասացութիւնների տեղին-ճշգրիտ կառուցումներով, ներքին մեծ ողբերգական ուժի դրսեւորմամբ: Իբրեւ ահեղ զգուշացում՝ գրողը ներկայացնում է ոչ թէ լոկ իրականութիւնը, այլ բարոյական այն հետեւանքները, որոնք ձեւաւորուել էին որպէս նոր իրականութեան դիմագիծ ու գոյութեան ճանապարհ: Մեր արձակում երբեւէ ստեղծուած ուշագրաւ վեպ-այլասացութիւնն իր գեղարուեստական մտայղացման եւ փիլիսոփայական թափանցումների առանձնատկութիւններով ոչ միայն նոր աւանդոյթ է ձեւաւորում մեզանում, այլեւ մերձ է եւրոպական գրականութեան շատ բարձրագոյն արժէքների, նրանում գերծաղրի արտացոլման ուրոյն

կերպն ու հաստատումը կայ... Աւերում-ոչնչացում է քաղաքակրթական մի ահռելի շերտ, ընկերային կառուցիկ-պարտադրուած կաղապարն աստիճանաբար անէանում է, բոլխեսեան աւերումի խորհրդանշանը դառնում է տիրապետող ու անյաղթահարելի, անհատին փոխարինելու է գալիս անդէմ զանգուածը՝ որպէս ժամանակի շարժման գլխաւոր միատր: Այս զանգուածն ունի նոր արժեհամակարգեր, բայց չունի փիլիսոփայութիւն: Տարեքը, ռոմանտիկականից գետնաքարշի փոխարկուած նրա իդէալն արդէն վերածում են աղբի, աղբը դառնում է իրականութեան նախակերպարը եւ աստիճանաբար վերածում անյաղթահարելի ուժի: Չկայ մարդը, չկայ նրա երազանքը, չկան ձգտումները... Ահա «Ապոկալիպսիս» վեպի գաղափարական յենակետը, որը վերածում է գեղարուեստական յենակետի: Սա այն ժամանակն է, երբ «անցումային կոչուող» ջրհեղեղն ամէն ինչ առաւ իր յորձանքի մէջ, երբ գրականութեան ու արուեստի մէջ տիրապետող ուժով իր ներկայութիւնը հաստատեց քաղաքական ապագայապաշտութիւնը (ֆուտուրիզմ)՝ իբրեւ մերժելի եւ անընդունելի իրողութիւն: Նոյն այս շրջանում, որոշակիօրէն փախուստ տալով իրականութիւնից, մեր արձակագիրներից ոմանք կրկնեցին նոյն այն ճանապարհը, որով անցել էին Ռոմուլոյ Գալեէգոսը, Խորխէ Իկասան, Էուստասիոյ Ռիվերան, Սիրոյ Ալեգրին՝ մարկեսեան շրջանի հզօր յայտնութեանը հակադրելով իրականութեան բանահիւսական մակարդակն ու սկզբունքը: Լատինաամերիկեան վի-

պական տարածքում տիրապետող դարձած գրականության իրատեսակ արտացոլումները տեսանք մեզանում, տեսանք փախուստ իրականությունից, մինչդեռ Ն. Ադալեանը իրավիճակի գնաց դեպի իրականությունը, դեպի իր քաղաքը՝ այժմ արդեն գրականություն բերելով քաղաքի ու անհատի փոխառնչության մոր դրսևորումը: Քաղաքն Ադալեանի համար ապաստոցիալական տարածք չէ, ապաժամանակային տիրոջ չէ, այն գոյություն ունի ժամանակի ու դարաշրջանի մեջ՝ իր մեջ ներառնելով անհատին յուզող բոլոր խնդիրները, գոյաբանական առեղծուածները, առասպելի ու իրականության սերտակցումները: Առասպելի ու կենդանի գրականության կապն անխզելի է, առասպելն է ծնում ժամանակակից դիպաշարը՝ վերածնունդով եւ վերափոխւելով: Առասպելի, որը նաեւ բանահիսականի ուշագրաւ ենթաշերտերն ունի իր մեջ, լաւագոյն դրսևորումներից մէկը դարձաւ «Ծաղրածուն մեծ քաղաքում» վէպը, որի մասին գրականագէտ Սուրեն Աբրահամեանը գրել է. «Իհարկէ, դարաշրջանը, մարդու եւ հասարակության կենսափորձը, որը պատմական բնոյթ ունի, կարելի է իբրեւ ճանաչողութեան հորիզոն: Բայց պատմութեան եւ ժամանակի միասնութեան գաղափարը իշխում է արդի արձակի ընկալումներում: Պատմութիւնը ձեւորում է անվերջաւոր մի շրջապտոյտ, որն ընդգրկում է պատմութեան գաղափարն իբրեւ յաւերժական առասպելի փոխակերպում, որն իրական է որպէս կրկնուող, վերակերտուող առասպելական յաւելում, ինչը տարբեր է թէւ որ-

պէս փիլիսոփայական համակարգ, բայց սահմանուել է 20-րդ դարասկզբին եւ կարելի է անուանել կրկին «անվերջ վերադարձ»ի տեսութիւն: Նորայր Ադալեանի վերջին՝ «Ծաղրածուն մեծ քաղաքում» (2010) վէպը դրա արտայայտութիւնն է, որը թում է՝ ունի «ծանօթ» դիպաշար, ուր Նազարի յաւերժական առասպելը եւ հեքիաթը «պատմում» է հեղինակը արդեն... հազարերորդ անգամ, բայց յարակարծութիւնը նրանում է, որ... Ադալեանի վէպի «պատմում»... մոր յաւելում է (այո՛ յաւելում), որ «պատմում» է եւ հինը՝ յաւերժականը, եւ մորը՝ յաւելեալը՝ մեր դարի առասպելը: Եւ թէւ վէպի առանձին դրուագները վերլուծելու համար ժամանակ եւ ծաւալ է անհրաժեշտ, բայց, ընդհանրացնելով վէպի հարցադրումները, կարելի է սահմանել դրանք՝ քննելու համար տուեալ խնդիրները արդի վէպի բնոյթի, ժանրի եւ կառուցւածքի տեսանկիւնից»:

Նոյն քաղաքի խորապատկերին, ժամանակի տարածնումների մեջ, Նորայր Ադալեանի համար առաջնային ու գլխաւոր դարձան կին-տղամարդ փոխյարաբերութիւնների խնդիրները. ամէնից շատ հետազօտուած խնդիրները, որոնք պահպանելով իրենց սոցիալ-հոգեբանական միջուկը, ելակետային դրոյթները՝ փոփոխում են ժամանակների հոլովոյթում, տարբեր անձնային-հանրային փոխազդեցութիւնների ներքոյ, ենթակայական համադրում-հակադրումների դրդապատճառներով: Նորայր Ադալեանը զարմանալի-ուշագրաւ թափանցումներով է մօտենում այս թեմային, մերթ քնարա-

կան-գեղումնային, մերթ՝ կրքոտ-բանական վերաբերմունքով, գրողական դիրքաւորմամբ հիստում իր պատումները՝ ստեղծելով ոչ միայն գործողութիւնների բազմազանութիւն եւ բազմաշերտութիւն, այլեւ նոր եւ ուշագրաւ կերպարներ, որոնք փշրում-աւերում են բոլոր կաղապարները, մերթ մղում դէպի վիճակի ու զգացողութեան անհեթեթը, մերթ գալիս դէպի ճշգրիտ-իրականը՝ այսպէս բացայայտելով-պարզելով կեանքի եւ իրականութեան, անհատի հոգեկերտուածքի բացառիկութիւնը: Թեմայի ամենաբարձր, գեղարուեստորէն ցայտուն եւ նշանակալի արտայայտութիւնը «Դաւայաթաղ» վէպն է, որը մեր արձակում հաստատում է պոստմոդէռնիզմի (post-modernisme) գեղարուեստական դրոյթները, ազգային արձակում հիմնաւորում գեղարուեստականութեան նոր սկզբունքներ, ձեւաւորում այսպէս կոչուած քաղաքային դիմանկարի գեղարուեստական արտացոլումը՝ տարօրինակ ու հեզմական: «Դաւայաթաղ»-ն իրապէս մեր արձակի թռիչքներից մէկն է՝ իր հերոսների բազմակերպութեամբ ու բազմազանութեամբ կենցաղային ու բանաստեղծականի իւրատիպ ներհիստումներով, վիպական-նկարագրական աւանդոյթների վերանայումներով: Այս վէպն ասես հեռաւոր աղերսներ էր ձեւաւորում դարձեալ չարենցեան «Երկիր Նաիրի»-ի հետ, գրեթէ կատակերգական-բանահիւսական պատումի մէջ բերում սիրոյ թեման՝ քաղաքային-կեն-

ցաղային ըմբռնումից հասնելով դէպի սիրոյ շեքսպիրեան ըմբռնումի տիրոյթները: Այս վէպը ոճի նորայայտութեան իրողութիւնն էր, կերպարաստեղծման նոր միտումների յայտածման իրողութիւնը, երբ ամէն ինչ ենթարկում էր սովորականի ու արտառոցի միատեղման գաղափարին՝ առաջ մղելով զաւելտի ու ողբերգութեան միահիստմբ: Վէպի գլխաւոր արժանիքներից մէկն այն է, որ Աղալեանը սերը դիտարկել է ամենատարբեր արտացոլումներով՝ ձգտելով բարեբանել զգացմունքի վեհութիւնը, մաքրագործող ուժը:

«...Արուեստը փոփոխական ու շարունակելի ժառանգականութիւն է, ահա թէ ինչու մշտապէս կենդանի ու յաւերժական: Գրականութիւնը զգացմունք է, բայց նաեւ գիտութիւն», - գրել է Նարայր Աղալեանը: Իսկ շրջափոխումների դրոյթները հաստատուել եւ հաստատում են նաեւ Նորայր Աղալեանի միջոցով, ով վերջին տարիներին ընթերցողների սեղանին դրեց «Համաճարակ», «Միջնանոց», «Սեւ քառակուսի կարմիր անապատում», «Ծաղրածուն մեծ քաղաքում» վէպերը, որոնք ազգային գրականութեան խոշորագոյն երեւոյթներից են, իրապէս աղալեանական դպրոցի անկիւնաքարերը, որոնք մի նոր ընթացք եւ գեղարուեստական շարժում են բերում մեր գրականութեան, ձեւաւորում վիպական արձակի հիմնախնդիրների եւ առաջնութիւնների վերափոխումների եւ վերաճելունների ժամանակը:

* Թարերազէտ, ՀՀ արուեստի վաստակաւոր գործիչ եւ թարերական գործիչներու միութեան քարտուղար:

** Նորայր Աղալեան (ծն.1936), արչակազիր, գրականագէտ, բանասիրական գիտութիւնների դոկտոր, ՀՀ մշակոյթի վաստակաւոր գործիչ

ԼԵՒՈՐ ՄՈՒԹԱՖԵԱՆ

ՎԷՊՆ ՈՒ ՎԻՊԱԿԱՆԸ՝
ԸՍՏ ՅԱԿՈԲ ՊԱԼԵԱՆԻ

ԿՈՇՈՒ

Ցառվ արձանագրենք. սփիւռքեան գրականութիւնը ծերանում է: Աւագ ու սակաւ դարձած միջին սերնդի անունների կողքին չափազանց քիչ են երիտասարդները, գրեթէ բացակայում են: Ուստի այսօր Սփիւռքում ծնունդ ամեն մի գրական երկ պարտադրում է մեզ ոչ միայն արժեւորել այն իր գրական-գեղարուեստական ընկալումների ծիրի մէջ, այլեւ դիտարկել որպէս մի ահռելի գեղարուեստական շերտի ու մշակութաբանական իրողութիւնների պահպանման միջոց ու նպատակ:

Հէնց առաջին հերթին այս հայեացքով էլ ընդունում ենք Սփիւռքի նշանաւոր մտաւորականներից մէկի՝ հրապարակագիր ու խմբագիր Յակոբ Պալեանի «Օրիորդ Աննայի սերը, սերերը... եւ միւսները» վէպը, որը Փարիզ խմբագրուած, բայց լոյս տեսած Համազագայինի «Վահէ Սէթեան» տպարանէն 2012 թ-ին: Յակոբ Պալեանը մի շարք գրքեր է հրատարակել՝ նուիրուած Եկեղեցուն ու հայապահպանութեանը, ազգային իրականութեան մէջ մտաւորականութեան դերին ու նշանակութեանը: Այս վէպը նրա առաջին արձակ ծաւալուն ստեղծագործութիւնն է, որում մարդկային յարաբերութիւններն ու զգացմունքների դրսեւորումները դիտարկուած են ընկերային կեանքի լայն խորապատկերի վրայ՝ երեսան հանելով կենցաղի եւ ըմբռնումների այն հոլովոյթը, (էտիլոցիան), որը տեղի է ունենում մասնաւորաբար Մերձաւոր Արեւելքի հայ իրականութեան մէջ: Յակոբ Պալեանի վէպն այն եզակի ստեղծագործութիւններից է, որում հայ կեանքի նկարագիրը, մասնաւորաբար պատանութիւնից երիտասարդութեան անցման զգացողութիւնները ներկայացուած են նուրբ եւ ուշագրաւ դիտումներով, պատումի զգացական շերտերի ընդգծումներով, ոճական միասնութեամբ: Պատանիների հոգեբանութեան մէջ տեղի ունեցող իրատեսակ փոփոխութիւնների, նրանց միջավայրի պատկերման առումով Պալեանը մօտենում է Նաիրի Չարեանի «Պարոն Պետրոսն ու իր նախարարները» վէպի տարածքին, Չարեանից յետոյ առաջինը մեր գրականութիւն բերում մի ինքնայատուկ միջավայրի ու աշխարհի պատկերը, հոգեկան փլուզումներն ու վերելքները:

Յակոբ Պալեանն իր ստեղծագործութեան ժանրը վէպ է կոչել: Վէպն արձակի ամենաածաւալուն եւ ամենաբազմաշերտ ժանրն է: Ըստ հանրագիտարանային ձեւակերպման՝ «էպիկական ստեղծագործութիւն է, որի մէջ պատումը կենտրոնացւած է առանձին անհատի ճակատագրի վրայ, նրա բնաւորութեան եւ ինքնագիտակցութեան ձեւաւորման եւ զարգացման վրայ»: Դասական եւ կանոնակարգ-



ւած այս պատկերացումն էլ հիմք ընդունելով՝ հեղինակն իր վեպի կենտրոնում է պահում օրիորդ Աննա Եսայեանի կերպարը, հայ օրիորդի, ով անցնում է ինքնահաստատման ուշագրաւ ճանապարհ: Աննայի կերպարը որպէս առանցք դիտարկելով՝ հեղինակը ստեղծել է նաեւ Կորիւնի, Հրաչի, Սիմայի, Ալֆոնսի եւ այլոց կերպարները՝ վիպական գործողութիւնները տրոհելով ճակատագրերի ու կենսագրութիւնների ինքնօրինակ շրջանակների, որոնք ամբողջանում եւ կենտրոնանում են Աննայի միջոցով, նրա հետ ունեցած յարաբերութիւնների եւ առընչութիւնների շնորհիւ: Գրողն ընտրել է գործողութիւնների եւ իրադարձութիւնների մի փոքրիկ տեղավայր՝ արեւելեան քաղաքի հայկական դպրոցը, ուր զարգանում է դիպաշարը, ուր բացում-պարզում են մարդկային ճակատագրերը եւ բնութագրերը: Արեւելեան այս քաղաքի դպրոցներից մէկում յայտնուած օրիորդ Աննան աւանդական ընկալումներով առաջնորդուող միջավայրի ու ընտանիքի ծնունդն է, կեանքի սեմից նոր ոտք դրած մի հայուհի, ով կրթութիւն է ստացել կաթոլիկուհիների մօտ, դաստիարակուել նրանց խստականոն մանկավարժութեամբ: Նրա յայտնութիւնը դպրոցում ինքնափորձարկում է, քննութիւն, որի միջով պիտի անցնի ինքը՝ փնտռելով իր մեծ սերն ու երջանկութիւնը: Գրողը գրականութեան մէջ ոչ յաճախ շօշափուող մի թեմատիկ առանձնացում է միատրել պատումին՝ պատկերելով դեռահասների սերը, արդէն հասուն օրիորդի ապրումներն ու տուայտանքները, ընտրութեան հնարատրութիւնն ու իրաւունքը: Աննայի հանդէպ իրենց սիրապատար զեղումներն են պարզում Կորիւնը՝ ցանկասիրաբար ու փոքր-ինչ համարձակ, Հրաչը՝ որբական անձուկն իր հոգու մէջ պահած, անկեղծ ու անմիջական, ապա Աննայի կեանքում յայտնում է Զաւէնը, ով ընդամենը անցողիկ մի երանգ է, երիտասարդ, ով չի հրաժարում օրիորդին գրկել, համբուրել ու սիրել... Իսկ յետոյ արդէն սիրոյ ճշմարիտ փորձութիւնն է յառնում՝ Ժան-Փիերի ու Ալֆոնսի ներկայութեամբ: Աննան, անցնելով դժուարին մի ընթացք, ի վերջոյ ընտրում է Ալֆոնսին՝ մշտապէս հոգում ծրարուած պահելով Հրաչի կերպարն ու նրա սերը, որն ամենամաքուրն ու ամենաճշմարիտն էր: Սա է վիպական պատումի ընթացքը, նրա զարգացումների հեռանկարը:

Յակոբ Պալեանը բուռն շրջադարձեր եւ իրադարձութիւններ չի պատկերում, այլ գրեթէ օրագրային յաջորդականութեամբ առաջ է տանում պատումը՝ երբեմն խախտելով վեպի համար այնպիսի յատկանիշներ, ինչպիսիք են իրադարձութիւնների բազմակողմանիութիւնը, տիպարների առատութիւնը: Աւելին՝ մի շարք տիպարներ այստեղ յառնում են ճեպագծային նկարագրումներով, դրուագային ներկայութեամբ: Գրողը վեպի համար երկու առանցքային կերպար է նախընտրել՝ Աննա եւ Հրաչ: Առաջինը՝ նահապետական ընտանիքում ապրող, ուր ամուսնութեան խնդիրն ամենակարեւորն է, երկրորդը՝ որբանոցից դպրոց եկող մի տղայ, ով ի վերջոյ կարողանում է յաղթահարել կեանքի պարզած դժուարութիւններն ու գտնել իր կոչումը, բայց ոչ երբեք հասնել իր սիրոյն: Գրողը իւրովի է լուծել սիրոյ խնդիրն իր հերոսների կեանքում, իւրովի մեկնաբանել ամէն մէկի վճիռներն ու ապրումները:

Փոքր-ինչ հետեւելով սիրավեպերի պատմողականութեանն ու նկարագրականութեանը, չդիմելով ինքնատիպ յեղափոխականութեան՝ գրողը ստեղծել է մեծ հե-

տաքրքրութեամբ ու անձանձիր ընթերցանութեան նիւթ՝ աւանդական-նկարագրական արձակի առանձնաձեւերին զուգորդելով հոգեբանական արձակի յատկանիշները: Ուստի այս վէպը հետաքրքրութիւն է ներկայացնում, պարտադրում խօսել արդի սփիւռքահայ վէպի խնդիրների ու ձեռքբերումների մասին, տեսնել վիպականի ինքնայատուկ ներկայութիւնը՝ այն շաղկապելով յատկապէս մութացանեան վիպագրութեան աւանդոյթներին: Անսահման յուզականութիւնը, պատումի պարզութիւնը, անխճողուն նկարագրութիւնները, որոնք ներկայացնում են իւրայատուկ ժուժկալութեամբ, ոճի պարզութիւնը, գեղագիտականի ուշագրաւ ընկալումը այս վէպը դարձնում են նկատելի ողջ սփիւռքեան գրականութեան մէջ: Աւելին՝ պարտադրում են խօսել այն մասին, որ Պալեանը, հետեւելով վէպի ծաւալի ընկալման նոր միտումներին, ժանրի վերանայման անհրաժեշտութեանը, կարողացել է նիւթի մատուցման ճանապարհին հասնել մի շարք ինքնատիպ գիտերի ու հնարքների, կերպարաստեղծման ճանապարհին արձանագրել յաջողութիւններ: Յատկապէս Աննայի ու Հրաչի կերպարները գրողական ձեռքբերումներ են, հաւաստի ու կենդանի, հոգեբանօրէն ճշմարիտ կերպարներ են ներկայացնում, որոնցից ամէն մէկն ունի իր հարուստ ներաշխարհը, ինքնարտայայտման ձեւերը, սեփական լեզուական շերտերը: Անտարակոյս, ցանկալի կը լինէր նաեւ տեսնել Հրաչի կենսագրութեան այն հատուածը, որն առիթ էր տուել նրա որբութեանը, սակայն գրողը շատ ատելի հակուած է հերոսին տեսնել ձեւաւորուող գործողութիւնների եւ իրադրութիւնների մէջ՝ այդպէս էլ որեւէ բացատրութիւն չտալով նրա անցեալի մասին: Սակայն սա չի խանգարում, որ Հրաչը դառնայ մեր արձակում ստեղծուած ամենաինքնատիպ ու հետաքրքիր կերպարներից մէկը՝ եզակիութիւնը կիսելով Աննայի կերպարի հետ: Որքան անսպասելի է Աննայի վարքագիծը (մասնաւորաբար ազգային շրջանակների համար պարադոքսալի ուժն ունի նրա սիրահարուածութիւնն իր աշակերտներին՝ իբրեւ կին), այնուհանդերձ սա անձի ազատութեան մի դրսեւորումն է, որն ընկալում է իր հոգեբանական արդարացումների եւ հիմնաւորումների մէջ: Գրողը լաւ գիտի միջավայրը, նրա ընկերային փիլիսոփայութիւնը, կենցաղի ու դրանից բխող հոգեբանութեան առանձնայատկութիւնները, ուստի անչափ նրբօրէն է շօշափում մի շարք հարցեր ու խնդիրներ, անընդհատ ձգտում ցցուն չդարձնել Աննայի կերպարի որոշակի արտաստվորութիւնը: Հէնց այս հանգամանքն էլ նպաստում է հոգեբանական արտերեւոյթի ընկալմանը, միջավայրի ու անհատի փոխադրնչութեան գրողական մատուցմանը:

Յակոբ Պալեանի վէպն իր վրայ է կրում նաեւ 20-րդ դարի երկրորդ կեսի ֆրանսիական արձակի ազդեցութիւնները, մասնաւորաբար նկատելի են մի շարք միտումներ, որոնք բնորոշ էին Ֆրանսուազ Սագանի արձակին, սակայն սրանք ոչ թէ աղքատացնում, այլ հարստացնում են գրողի ստեղծագործութիւնը, ձեւաւորում որոշակի կապ այն գրականութեան հետ, որն ինքնովի լուծեց վիպականի ու վիպական հերոսի խնդիրները:

6 Ապրիլ, 2013, Երեւան

3. ՊԱՆԵԱՆ

«ԿԱՆԳ ԱՌ, ԵՍ ԱՅՍՏԵՂ ԵՄ» ԸՆՆՐԻԿ ԷԴՈՅԵԱՆԻ ԲԱՆԻ ԱՇԽԱՐՀԸ

ԿՈՇԱԿ

Հայ գրողներու միութեան նորաստեղծ յուսադրիչ գրախանութը գացի: Վերջապէս կարելի է Երեսան գտնուիլ եւ գիրք գտնել: Պայուսակս լեցուցի: Վերջին պահուն, Հենրիկ Էդոյեանի բանաստեղծութիւններու փոքրիկ հատորը իր քիթը ցոյց տուաւ (128 էջ):

Ոտքի, արդէն կարդացի քանի մը էջ, բացի գիրքին մէջտեղի էջերը, կարդացի, կարդացի վերջին էջերը: Տասնըհինգ օր նոյն ձեռքով շարունակեցի ընթերցումը: Տող, բառ, պատկերներ, միաժամանակ կը գրաւէին ուշքս: Ապա որոշեցի «ուսումնասիրելու պէս» շարունակել ընթերցումս, հասկնալու համար, թէ ի՞նչ կ'ըսէր բանաստեղծը, կամ ես ի՞նչ կը փնտռէի, կամ կ'ուզէի հասկնալ: Տրամադրուեցայ խաղին:

Անկեղծութեան եւ անկատար մնացող ինքնորոնման տողեր կը գումարուին, ընթերցողը ինքզինք կը գտնէ բանաստեղծի եթերին մէջ, կամ բանաստեղծը շնչալով կը գրաւէ ընթերցողը: Բանաստեղծութիւնը ճշգրիտ գիտութիւն չէ: Լրատուական աղմուկը եւ հաշուապահական սիւնակները դրան առջեւ պէտք է մոռնալ գիտնալ: Կ'ըսուի.

*Ինչ պէտք է մի գիրք, որ ոչ ոք չի գրել,
մի գիրք, որ գրուած է, բայց դեռ ոչ մի ձեռք
չի դիպել նրան: Նրա էջերից
վերցնում եմ իմ տողերը: (էջ 5)*

Մտերմութեան հրաւեր է բանի հմայքը, արտայայտութեան չհասնող զգացումներու եւ յոյզերու բաժնեկից դառնալու: Իրաւ բանաստեղծը ներիմացական յատկութիւններով օժտուած է եւ ընթերցողի գաղտնիքներու բանալին ունի, թափանցելու համար: Իր տողերը կը վերցնէ, էջը կը դառնայ սպիտակ, որպէսզի «միւսը» խօսի:



Այդպես կը բացուի հորիզոնը եւ կը սկսի ճամբորդութիւնը գաղտնի ծիրերու վրայ, որոնց մասին չենք խօսիր, երբ գրասենեակն ենք կամ հեռատեսիլի ժամ մեղցնող հեղուկ լուսամուտին առջեւ:

*Մըքելով իմ բոլոր ուրնահեղքերը
Ես վերադառնում եմ դէպի եր, դէպի
վայրերը իմ նախկին, դարարկ ձեռքերով, անհասցէ,
աննպատակ: (Էջ 6)*

Ինքնամփոփ պահերու, յաճախ կ'ունենանք անբարարութեան զգացում, հաշուեկշիռը կ'ընենք չիրականացած կամ փշրուած երազներու, կամ զանոնք կը փորձենք թաղել: Բանաստեղծը մեր հոգիներուն արձագանգը կը բերէ մեզի, երբ լոյս կը ցանկանք: Պահ մը կը տարուինք մտածելու, որ ան խօսած է մեր փոխարէն:

*Իմ օրերու մթամած անդառնում
Մի ծառ էր լոյս տալիս:*

.....

Ծառն ընկաւ: Ծառն ընկաւ: Բայց այդ ես էի որ ընկայ: (Էջ 6)

Այդ վիճակներուն մէջ կ'աճի անհեթեթի գաղափարը, ժամանակը կանգ կ'առնէ եւ կը դատարկուի: Ոչնչութեան եւ փուճի մածուցիկ եւ անգոյն տեսակ մը գիտակցութիւն, երբ սկիզբ եւ վերջ իրարու կը միանան, անոնց միջեւ կը ստեղծուի սկզբնական դատարկ երեքը: Բանաստեղծը բառի կը վերածէ անորոշը եւ գորշը, որ իր մէջ է, մեր մէջ է: Թերեւս այդ ձեւով կ'ուզէ վերագտնել ընդունուածէն անդին գտնուող ցանկալի բնականը:

*Կարող ես ամէն ամէն ինչ, երբ ոչինչ չկայ անելու,
ամէն ինչ կարող ես ասել, երբ չունես ոչինչ ասելու,
կարող ես ամէն տեղ գնալ, երբ ոչ մի տեղ չունես գնալու: (Էջ 7)*

Այս արդէն անհեթեթին յանգած մարդուն անդոհանքն է, երբ երազը կը մարի, երբ պարզուող եւ մեզ իրենց աքցանին մէջ առնող անհունութիւնները կը ներշնչեն մեր հիւլեացման գիտութիւնը, առանց գերանցման կամուրջի, արարքը, խօսքը եւ ճանապարհը կը մտնեն փակուղի: Ժամանակը դուրս կ'իյնայ: Այս արդէն մտածելու արկածախնդրութեան տրուող արդի մարդուն ջղագարութիւնն է, երբ արժեքները եւ գաղափարները կը շիջին: Բանաստեղծը մարդկութիւնը կը կրէ իր մէջ եւ կը յանձնէ բառի եւ խօսքի հմայքին: Մէկ էջէն միւսը կը շարունակուի մղձաւանջը:

*Մօտեցիր, յիշողութիւն, քո նախկին
սպուերներին, այստեղ քո տունն է,
ուր ժամանակն ընկաւ: (Էջ 8)*

Անհակակշռելի, անձեւ, դամոկլեան սուրի նմանող ժամանակն է անպատաս-



խան մնացող հարցումներու ալֆան եւ օմեկան, որ կ'իյնայ, ուր կ'իյնանք: Բայց կայ կեանքը, տեսաբար ժամանակը յաղթելու իր անդուլ պայքարով, որ իմաստն է նոյն այդ ժամանակին՝ որ կայ եւ չկայ: Եւ բնութիւնը կեանքն իսկ է, իմաստը անոր:

....

*Ի՛նչ ուժ է յորդում կակաչի տերեւներից,
երբ նա ելնում է քարի դէմ եւ քամու:
Կեանքը կարճ է, սակայն երկար է ժամանակը
Նրա երազի:....*

.....

*կակաչը մահ չունի, քանի որ նա ինքը
հէնց իր երազն է Արարչի աչքի մէջ: (էջ 9)*

Բնութեան հետ նոյնանալու տենչը եղած է միշտ երազ, ազատագրութեան առաջին քայլ, որ կ'առաջնորդէ հաղորդութեան, աղօթքի, այսինքն տիեզերական գաղտնիքի մասնակցութեան, ընկալման: Երբեմն պէտք է յիշել Միսաք Մեծարենցի «պակուցում մը հոգեգրաւ հոն կը թողու զիս անթարթ» տողը (Կիրակնուտք): Դուրսի աշխարհը, իր տազնապներով, հեռացում կը թելադրէ, մեզ կը փնտռէ եւ կը տանի մեզմէ դուրս: Իսկ բանաստեղծը կը հասկնայ, թէ ինչպէ՛ս կարելի է հասնիլ ազատութեան, ցանկապատէն անդին, բնութեան կեանքին մասնակցելով: Եւ աղօթքը (ոչ յանկերգը), գերանցումն է մեզ տեսաբար բանտարկուած պահող ընթացիկին:

*Ամէն ինչ թող այնտեղ, ցանկապարից դուրս,
աղքատ գիւղակի սահմանից այն կողմ,
սպրիթ խեղճ ու խիզախ ժայռերի կողքին,
ամուր հող փնտրիր,
եղիր օդ, շարժում, աղօթքի մի տող,
որ շնչում են ծառերն իրար մէջ,
որպէսզի սպրեւն: (էջ 12)*

Հ. Էդոյեան կը սաւառնի գեղանկարի եւ իմաստութեան խաչներուկներուն վրայ: Լոյսի խաղին մէջ են նկարիչը եւ իմաստունը: Ինչ որ կայ գերագոյն ուժի խորհուրդն է, որ տրուած է, հարկ է ընկալել ինչ որ կայ, ցնորքը ոչինչ է: Բնութեամբ բաբախելու հրաւեր կայ, ան մեզի հետ է, մեր աշխարհը, մենք անոր մէջ, աշխարհը՝ Արարչի ստեղծագործութիւն, որուն գաղտնիքը կ'աճի բացատրութիւններուն հետ:

*..... Ոչ որ չի կարող
ցանկանալ աւելին քան ինքն է ցանկանում:
Ինչը դրուած է քո առջեւ՝ հէնց այն է,
ինչին դու մօտեցել ես քո երկու աշխարհների
փշուր արահեպով: Չեռքդ տուր նրան,
եւ կը տեսնես, որ նա քո բարեկամն է,
վայր, որ ունես դու, կամ ուրիշ ոչինչ չունես: (էջ 13)*

Կայ բնութիւնը: Բայց կայ նաեւ մարդոց քաղաքը, աղէտի նման, ուր ազատութիւնը կը լուծուի բազմութիւններու դէզին եւ վազքին մէջ, երես դարձնելով բնութեան, ծնունդ տալով անորոշութեան, անկողմնացոյց նաւարկութեան:

Այդ մթնոլորտին մէջ՝ մարդը համակուած տխրութիւն է, եթէ տէր ըլլայ իր տխրութեան, զայն չշղարշէ:

*Չայներ են ներխուժում
դրսից, փողոցից,
շէնքերի խռովայոյզ
հայեացքների տակ,
հոսում են բազմութիւններ,
չգիրեն ուր են գնում,
օրուայ մէջ
անարդար
խաչներուկների սխալ
անցումներով,
եւ նրանց երեւից
կէսօրը հեկեկում է
ջեռքերով դէմքը ծածկած: (Էջ 15)*

Բոլոր մարդոց պէս, անոնց պէս որոնք անցնող ժամանակի եւ անվերադարձի զգացողութիւնը ունին, բանաստեղծը տեսաբար կը կառչի յիշողութեան, կեանքին՝ որ անցեալ է, ճառագայթի մը մէջ գումարուած պատկերներ, որոնք մենութեան աշխարհին են, աննիւթական, հազիւ թէ ձայներ, կեանքը յիշեցնող թեաքախումներ:

*..... Իմ ջեռքերի մէջ
ես ոչինչ չեմ թաքցնում: Ինչ ունեմ՝ այնպէղից է,
ինչ չունեմ՝ այնպէղից է: Ես անուն
չեմ տալիս ոչ մի պատկերի: Մի չայն եմ լսում:
Շուրջս զգում եմ թեաքախումներ: (Էջ 19)*

Անհեթեթի դէմ յաղթանակը սերն է, տրուելու անհուն եւ համակող գեղեցկութիւնը, որ կը մերժէ հարթող ժամանակին մէջ բանտարկուիլ եւ անոր հետ անհետանալ, երբ ան կը գտնէ «միւսը», որու գիտակցութեան մէջ կը գտնէ իր լոյսութեան եւ անդհանքին կեանք-իմաստը: Միշտ ժամանակը, տեսելու իր մղձաւանջով, տիեզերք մը՝ երբ կը դառնանք դէպի միւսը կամ մեր ներաշխարհը, փոխզգացողութեան տենչով, ոստում կատարելով մեզ բանտարկող անմիջականէն եւ նիւթական կարծեցեալ իրականութենէն անդին: Այդ բանաստեղծին փորձ-փորձարկութիւնն է:

*Իմ ժամանակը հոսում է դէպի քեզ,
քո մէջ անհետանում:
Իմ ունեցուածքը հէնց այն է, ինչ դու
վերցնում ես ինչանից:*

Եւ ես վերջ չունեմ:

Եւ չունեմ սկիզբ

քո ասիերի մէջ: (Էջ 22)

Առիւթնոյ է տողերու մէջ յաժող Հենրիկ Էդոյեանի պատկերներու եւ իմաստապարուններու համաստեղութիւնը: Բանաստեղծը կը յայտնուի գեղանկարիչի երանգապնակով, եւ ակնթարթ մը ետք զինք կը տեսնենք հին Յունաստանի իմաստունի պարեգօտ հագած, որ հոգի կը փնտռէ՝ ստուերներէն անդին:

Անձրեւը վերեւից թափուում է ուղղահայեաց

ծառերին, տանիքներին, անկանոն բլուրներին,

եւ անցնում է քամին

հորիզոնական, սրբելով հողը, ցնցելով ծառերը

աղմկելով շէնքերի պարուհաններում,

պարզգամքներում, մեղ մրբանցքներում –

մի խաչ՝ երկնքի եւ երկրի միջեւ,

անձրեւի եւ քամու

հանդիպում իրար հետ,

այսպէս, այս վայրում, հոգու մէջ մարդկային,

որ չընկնելու համար

փնտրում է մի յենարան, թէկու՞ մի ճայն,

մի խօսք,

թէկու՞ մի ուրմապեղ,

եւ ոչ ատելի: (Էջ 25)

Մերը մեր հնարած առասպելն է, որպէսզի զայն դարձնենք սիրոյ առարկայ, մենք մեզ սիրելու թատերական խաղ: Բանաստեղծը խոր զգացողութիւնը ունի այս կացութեան, ուր իրականութիւնը, երազը, հնարը, կը հիւսեն մերաշխարհի յոյգերը: Առանց հնչել բառերու եւ ածականներու կուտակումի, կը վերցուի գաղտնաշխարհի վարագոյրը: Այդպէս է սերը, երբ անխարդախ է, եւ մեզ կը դնէ իր անակնկալին առջեւ:

Կինը միշտ հազնուած է,

նոյնիսկ երբ մերկ է,

միեւնոյն է նա

ծածկուած է երազով:

Այն, ինչ տեսնում ես դու,

սոսկ քո արձագանգն է

եւ երազն է քո:

Նրան դու չես տեսնում: (Էջ 31)

Վաւերականի եւ մակերեսայինի հակադրութիւնը կ'ապրի եւ կը գնահատէ Հենրիկ Էդոյեան, փորձ՝ զոր դադրած ենք ընելէ, քանի որ, միշտ ի մտի պէտք է ունենալ, բանտարկուած ենք մենք մեզմէ դուրս, ատելի ճիշդ պիտի ըլլայ ըսել, որ ժա-

մանակակից քաղաքակրթություն-յառաջդիմությունը մեզ բանտարկած է մեզմեջ դուրս, ուր ինքնությունները կը մարին, ֆիզիքականի հետ հոգիներու clonage կը կատարուի: Անոր դեմ, բանաստեղծը կը վկայէ գիրքի խորհուրդի մասին, ուր կայ անցեալը եւ գալիքի տեսիլքը: Իրականությունը դուրսի միօրինակությունը չէ, այլ Բանի գիտը, խօսքի պատգամը:

*Երբ միացնում եմ հեռուստացոյցը,
մի դէմք է յայրնում ինքնագոհ ու քիրը,
լղոզում է կրանին
մրցանակակիր:
Երբ մի գիրք եմ վերցնում գրադարակից,
մեր պարմութեան բոլոր
գրումս ու չգրումս էջերն եմ հեկեկում: (էջ 32)*

Բանաստեղծը հրապարակագիր չէ, ամբոխին կեր հայթայթող բեմբասաց չէ, ան կը դիտէ, կը տեսնէ, եւ մանաւանդ գիտէ թէ ամէն անկիւն ծուարած է անհեթեթը, որուն դեմ անգոր եմ մարդիկ, ճակատագրապաշտութեամբ: «Ի հարկէ, եթէ հասնէք» բանաստեղծական էջը ապրոտող ժամանակակից անհեթեթին հետ երկ-խօսութիւն է, առանց պատասխանի ակնկալութեան: Այդ ճիգը կ'ենթադրէ քաջութիւն, որմէ զրկում են մարդիկ նիւթականացում քաղաքակրթական յառաջդիմութեան մէջ: Այս էջը աւելին կ'ըսէ քան հատոր մը, կամ ծախսալից նկարահանում մը, եթէ գիրքն ու ետին գտնուող պատկերները եւ յուսահատութեան տանող ընդվզումը տեսնենք, ինքզինք այդպէս չդաւանող երգիծանքով:

*Այս տարին (ասում եմ) աւելի լաւ է քան անցած
տարի, զները բարձրացել եմ, ուրեմն՝ մարդիկ
աւելի լաւ են ապրում (գրականները լիքն են
թղթադրամներով), կանայք արեւի տակ շրջում են
կիսամերկ (լաւ կեանքի նշան), տղամարդիկ աւելի
անտարբեր են դարձել (բաւարարում են լիովին,
ոտից գլուխ), իսկ պողոտաներում գրնուողները
քիչ քիչ նուազում են, պարուհաններում լոյսեր
չեն վառում, ներքեւ են քաշում վարագոյրները,
Աբովեան փողոցի սրճարան-խանութները, տեսե՞լ էք,
հանուել են, թերթերը կանոնաւոր
հրատարակում են (կարող էին նաեւ չհրատարակուել),
ոչինչ, որ չեն կարդացում, բայց եթէ կարդային էլ՝ ի՞նչ
տարբերութիւն, համացանցի սարդը
փռել է իր ճանկերը, ծեր կամ երիտասարդ, բոլորի
արեան մէջ, այս տարի (ասում եմ)
երկիրը մի քայլ առաջ է գնացել անցեալի համեմատ,
մենք ի՞նչ մեղք ունենք, որ աշխարհն ինքը*

եւր է գլորուել (չէ՞ որ մենք նրա անբաժան մասնիկն ենք),
 իսկ երկինքն սկսել է պտտուել բոլորովին
 հակառակ ուղղութեամբ, ամէն ինչ այնքան լաւ է,
 երբ օրը մթնում է, տեղ չկայ գնալու, ամէն ինչ
 այնքան լաւ է, որ գիշերուայ առջեւ,
 մեծանում է վախը միայնակ ընթրելու, միայնակ քնելու,
 միայնակ մեռնելու, միայնակ արտաստելու, այս տարի
 (ասում են) պատրաստուէք միւս տարուան, եւ եթէ
 հասնէք նրան՝ կը տեսնէք թէ որքան կեանքը կայուն է
 եւ հրաշալի: Իհարկէ, եթէ հասնէք: (Էջ 33)

Անհեթեթը կ'աճի եւ կը ծնի դառնութիւնը: Յուսահատութեան ալիքին վրայ, կոչ
 կ'ըլլայ գերբնականին, առանց կորսնցնելու բանաստեղծականի լարը, երբ կը դի-
 մենք «Աւլանտ»ին. «...Իսկ դու յոգնել ես, / բայց ի՞նչ փոյթ նրանց համար: Դու
 երկինքը մի փոքր / վերեւ բարձրացրու, մենք այստեղ արդէն / շնչահեղձ ենք լի-
 նում» (Էջ 36): Բանաստեղծին համար անհեթեթը մարդկային արկածախնդրութե-
 նէն անբաժանելի է, եւ մարդկային կացութիւնը սեւեռող գիտակցութիւնը կ'ընէ
 այնպէս՝ որ ըլլանք շուար ու մոլոր:

Ներսը եւ դուրսը խառնուել են իրար, ոչ մի տարբերութիւն,
 բայց մենք ոչ ներսում ենք եւ ոչ էլ դսում,
 դրսից նայում ենք՝ ներսում մեզ չենք գտնում,
 իսկ ներսից նայելիս՝ դրսում բացակայ ենք: (Էջ 39)

Եւ հանդիսատես շրջապատի եւ մեր նմաններու անթափանցութեան, բանաս-
 տեղծը կը խօսի ճշմարիտի դառնութեամբ, երբ կ'ըսէ. «Ինչ մի քննադատէք: Իմ
 չայնը արչագանգն է / հէնց չեմ լռութեան, որը լաւ չենք հասկանում» (Էջ 40):
 Խիտ տարազ մը, որ կը խաբանէ շահախնդրուած ճապաղութիւնը:

Անհուն ազնուութիւն կայ Էդոյեանի բանաստեղծութեան մէջ, որ մեր մէջ քնա-
 ցած մարդը կ'արթնցնէ:

Չիլոյեանն ասում էր - «Ես հողով-հողով կորած եմ»:
 Կիսով չափ նա ճիշդ էր - հողով կորած էր, բայց
 հողով՝ ոչ: Հոգին ապրում է իր տողերի մէջ: Ես նրա
 չայնը լսում եմ այնտեղից, թէն գնալով այն
 պարզում եմ, բայց երբեք չի լռում: Հոգին բարձր է հողից: (Էջ 42)

Բանաստեղծը կը գովերգէ գիրքը, ուր բառերը կը բերեն տուները հին, տրտմու-
 թիւնը, պատմութիւնը, սերը, բայց նաեւ յիշատակ այրող: Խորագիր. «Բաց գիրքը
 եւ կարդա՛»: Հայը, բանաստեղծ թէ համեստ մարդ, միշտ յաճախուած է սրատ-
 ուած ըլլալու անբալասան մղձաւանջով:

.....
 Մի երկինք մոխրագոյն, մի արեւ՝ մուգ կապոյտ,
 յեղոյ մի լերկ լուսին, որի լապտերի մէջ

*ոչ-որ չգիրի՝ թէ քանի՞ մոմ է վառուում,
եւ սրի քաշուած մի ժողովրդի սիրուերը կը տեսնես
աշխարհի ամենավերջի աստիճանի վրայ... (էջ 51)*

Ժամանակ եւ սպասում իրարմով կը խոնարհուին, սկիզբ եւ վերջ իրարու խառնելով: «Նամակ Բաբելոնից» բանաստեղծութիւնը այդ երկուքի չաւարտող նուագն է, մէկ էջէն միւսը, նոյն եւ տարբեր հնչիւններով:

*Բայց նա դեռ սպասում է
նա դեռ սպասում է,
ժամանակի ջեռքը փակել է բոլոր
դռներն ու դարպասները,
բայց նրա համար
մի քան է մնացել –
սպասումը
անվերջ
մշտնջենական: (էջ 64)*

Ժամանակը անբռնելի կրկներեւոյթ է, չ'ամփոփուիր ափի մէջ, ցաւագնօրէն կրկնուող եւ խոցող: Անկարելի է չանհանգստանալ, երբ տողերը կը զարնուին մեր գիտակցութեան: Այս ժամանակը սլաքներու պատմածը չէ, այլ ներքին տետղութեան մը սուր զգացողութիւնը, ակնթարթի յուշած կայի եւ չկայի:

*Դու ժամանակ չունես եւ քո ներկայութեան
միակ ժամանակը քոնը չէ ամենեւին:
Երկու հոգի փողոցում քայլում են միասին
իրար հետ, բայց տարբեր
ժամանակներում:..... (էջ 74)*

Հենրիկ Էղոյեան կը սեւեռէ մարդը, որ հայ է, ժամանակի եւ տիեզերքի մէջ, եւ ինքնութեան բացատրութիւն կը փնտռէ, կանգնելով խօսուն եւ հորիզոններու վրայ բացուող հարցականներու առջեւ, ուր կան աշխարհագրութիւնը, պատմութիւնը, դարերը, ծիւնն ու արեւը, գումարուած մեր բազմերանգ ինքնութիւններուն վրայ: Հակառակ բոլոր տեսակի խաչաձեւումներուն, շարունակուած է եւ կը շարունակուի երբը: Խորագիր՝ «Ահա, մենք այստեղ ենք»:

*Որպէսզի իմանանք՝ թէ ովքեր ենք մենք –
պէտք է իմանանք՝ որտե՞ղ ենք գրնուում,
որտե՞ղ ենք, ո՞ր երկրում, աշխարհագրական
ի՞նչ ուղու վրայ եւ կամ պատմական
ո՞ր շրջադարձում: Ահա մենք այստեղ ենք –
լեռնուր, անանուրառ, խճճուած մի երկրում,
ուր ճիւղն ամառն էլ չի հալում մինչեւ վերջ,
իսկ արեւը բռնակալ մի թագաւոր է, որի հետ
սպրելը վրանգաւոր է, իսկ առանց նրա –*

դա անհնար է: Դարերի հռնդիւնը
 փակուած է լռութեան մէջ, եթէ բանալին
 պարտէս նրա մէջ՝ պարզապէս կը խլանաս
 նրանց որորից: Երբ այսպէս ձեռք ես տալիս
 անմահութեանը –
 տեսնում ես՝ դա մահն է, իսկ երբ մօտենում ես
 մահուան եզերքին, տեսնում ես՝ քո առջեւ
 անմահութիւնն է:
 Երկուսն էլ հասարակ են քո կեանքի անաւարտ
 կինոնկարում: Ամէն ինչ մէկ անգամ է,
 ինչպէս քո ուղին: Սա մի երկիր է, որի անուան մէջ
 բառարանի բոլոր բառերն են ննջում:
 Ահա, մենք իմացանք՝ թէ մենք որտեղ ենք,
 բայց նորից անյայտ մնաց՝ թէ մենք ուրե՞նք: (էջ 90)

Բանաստեղծութիւն ներկայացնելու լաւագոյն ձեւը ընթերցումն է, քանի որ ներկայացնելու յաւակնութիւնը այն օտարն է որ կը կարծէ լսել դռներու ետեւէն լսող փսփսուքը, կամ ներկայացնողը ինք վերստին կը գրէ բանաստեղծը անոր դերը ստանձնելով:

Հենրիկ Էդոյեանի արագ եւ հեզասահ էջերը հոգեկան արկածախնդրութեան հրաւեր են, երթալու համար դէպի ժամանակը, որ կայ եւ չկայ, ապրելու սկիզբի եւ վերջի խորհուրդը, որ կայ եւ չկայ, զգալու համար քաղաքը՝ որ կը տուայտի հինի եւ նորի միջեւ, յիշատակ եւ ամայութիւն, միանալու-չմիանալու կնոջ երազին, որ խոստում է լոկ, հասկնալու խորհուրդներ՝ որոնք այդպէս ալ պիտի չհասկցուին:

Եթէ անպայման բան մը կ'ուզէք հասկնալ, բացէք էջ մը, կարդացէք կէտը, անցէք յաջորդին, եւ այդպէս շարունակ: Այն ատեն կրնաք թրթռալ անհետքերին զարնուող բանաստեղծին հետ:

Այդ թրթռացումն է բանաստեղծական վայելքը:

Կամ ընթերցողը ինք ալ կը դառնայ բանաստեղծ եւ կը մտնէ բառերու թելադրած եւ բառերով չըսուող խորհուրդի միգամածին մէջ:

20 Ապրիլ 2013, Նիւ Եորք

ԴՈԿՏ. ՍԵՂԱ ՔԻԼԵՃԵԱՆ

ԿՈՇՈՒՄ

ՆԻԿՈՂՈՍ ՍԱՐԱՖԵԱՆ

ԾՆՆԴԵԱՆ 110 ԵՒ ՄԱՇՈՒԱՆ 40-ԱՄԵԱԿ



Նիկողայոս Սարաֆեան

Ն. Սարաֆեան ծնած է 14 Ապրիլ 1902ին Պոլսէն Վառնա մեկնող շոգեմատու մը վրայ: Կրթութիւնը զատկէն է՝ Ակն Գաւառի Լիճ գիւղէն 1896ին Պուլկարիս գաղթած Սարաֆեան ընտանիքին: Յանախած է Վառնայի Ծիէրճեան եւ այլ ազգային վարժարանները, նաեւ ֆրէրներու Սէն Միշէլ ֆրանսական երկրորդական վարժարանը, ուր աչքի կը զարնէ իբրեւ բարի եւ ուշիմ աշակերտ: 1923-ի աշնան, Փարիզ է, ուր կ'անցընէ իր կեանքին յիսուն տարիները: Հոն կը տուայրի՝ կորսուած անցեալին եւ անորոշ ներկային միջեւ: Կ'աշխատի տոգաշար մեքենայի վրայ տպարանի մը մէջ, հետաքրքրութեամբ կը հետեւի արեւմուտքի, մանաւանդ Ֆրանսայի գրական առօրեային, քերթողական հոսանքներու եւ շարժումներու, որոնց ընտելացած էր Պոլիս:

50 տարի, իր ժամանակին մեծ մասը տրամադրեց ընթերցանութեան եւ իր ամբարած իմացութիւնը յանձնեց թուղթին, Ֆրանսայի եւ սփիւռքի հայկական թերթերու մէջ: Ինքզինք նուիրաբերեց հայ գիրի ու դպրութեան պանծացման: Մեռաւ 16 Դեկտեմբեր 1972ին, կրակելով քերթողագիրքեր, վիպական գործեր, նամակներ, վերլուծական ու գեղարուեստական ընտիր էջեր: Աշխատակցած է Փարիզի «Յառաջ»ին, «Մենք»ին (որոն հիմնադիրներէն եղած է եւ Շուշանեանի հետ խմբագրած անոր հանգանակը), «Զուարթնոց», «Անահիտ» ամսագրերուն, «Անդաստան» պարբերաբերին, Պոսթընի՝ «Հայրենիք»ին, Պէյրութի՝ «Ալօս», «Նայիրի» եւ «Բագին» ամսագրերուն, նաեւ «Միջնաբերդ», «Դրազարկ» տարեգիրքերուն եւ «Ահեկան» պարբերականին:

Ցարդ հրապարակուած գործերն են.

Քերթուածներ.- «Անջրպետի մը գրաւումը», Փարիզ, 1928, «14», Փարիզ, 1933, «Տեղադրութիւն եւ Մակընթացութիւն», Փարիզ, 1939, «Միջնաբերդ», Փարիզ, 1946, «Միջերկրական», Պէյրութ, 1971:

Խոհական արձակներ.- «Վէնսէնի անտառը» նախ լոյս տեսած «Նայիրի» ամսագիրի մէջ, ապա հրապարակուած Փարիզ, 1988, «Մշուշին մէջ», Փարիզ, 1988, «Կախարդանք», «Հայրենիք», 1932, «Հսկում», «Հայրենիք», 1933, «Ողբը», «Նայիրի», 1947, «Եղիր», «Նայիրի», 1948, «Սպիրտակ լեռը», «Ակօս», 1949, «Էքս-լէ-պէն», «Ակօս», 1953, «Լոյսի ցաւեր կամ Մեծն Տիգրան եւ Ամլութեան Սալաման», «Ակօս», 1953, «Միջերկրականը եւ հայը», «Ակօս», Պէյրութ, 1957: Վերջին երեքը առանձին հատորով հրապարակուած են Փարիզ-Անթիլիաս, 2000:

Վիպական արձակներ.- «Հիւրը», «Հայրենիք», 1930, «Ծառը», «Նայիրի», 1948, «Գլխարկի պարմութիւն մը», «Ակօս», 1955, «Ղուկաս Այպանեւի», «Զուարթնոց», 1930-31, «Բողոքագիրն ու դրան շղթան», «Հայրենիք», 1946, «Մութաֆա», «Հայրենիք», 1947, «Իշխանութիւն», Փարիզ, 1934, «Խարխիսէն հեռու», «Հայրենիք», 1932, «Մանուկ Դուինեան», «Նայիրի», 1948:

Սարաֆեան ստորագրած է նաեւ տպատրաստաշար էջեր, էսսէներ եւ տեսական յօդուածներ, որոնք մամուլին մէջ կը մնան ցրուած եւ կրնան լեցնել հատորներ: Անոնցմէ մաս մը լոյս տեսաւ առանձին ժողովածուով, 1994ին:

ԱՐՁԱԿԱԳԻՐԸ

Ն. Սարաֆեան նոյնքան արուեստագէտ արձակագիր է, որքան՝ քերթող: Կեանքի ամէն երեւոյթ, վիճակ, ապրում եւ խօսող բնութիւն, դարձած են իր թեմաները, զանոնք ապրած ու զգացած է եւ իր ամբողջ հոգիով վայելած ամէն ապրում, հաճոյք, ուրախութիւն, վիշտ, կարօտ թէ տառապանք, արտայայտած է իր արձակներով, որոնք թէւ կը պահեն հաւասար խորութիւնը իր բանաստեղծութիւններուն, բայց աւելի պարզ, եւ դիւրամատչելի են ընթերցողին:

Արձակներուն մէջ Սարաֆեան աւելի մօտ է ընթերցողին եւ իր միտքերը աւելի հարազատօրէն դրսեւորած, տալով զանազան հարցերու գծով իր տեսակէտներն ու համոզումները բաժնելու առիթը: Արձակներուն մէջ առանձին չէ, ան կը զրուցէ, կը պատմէ, կը վիճի,

կարծիքներ եւ ստացած տպավորութիւնները կը փոխանցէ միաժամանակ վերլուծելով զանոնք արուեստագէտի իր տաղանդով:

Իր արձակը կարելի է բաժնել գլխաւոր երկու մասերու. խոհական եւ վիպական:

ԽՈՀԱԿԱՆ ԱՐՁԱԿԸ, ՀԱԿԱՍՈՒԹԻՆՆԵՐՈՒ ԱՆՏԱՌԸ... ԵՒ ԲՆՈՒԹԵԱՆ ՆԿԱՐԻՉԸ

Ն. Սարաֆեանի գլուխ գործոցը կը համարուի «Վէնսէնի Անտառը»: Անտառ մը, ուր կը յաճախէր իր ազատ ժամերուն, իր ուրախ եւ տխուր պահերուն, որոնելու իր աշխարհը, վայրի մը մէջ, որ «*կ'անցնի կարօրներէս(ն) ու յուշերէս(ն) անդին*» եւ կ'անջատէ զինք ներկայ տարիներու սին ու տխուր հոսումէն՝ փոխադրելու համար խորաթափանց վերլուծումներու իմացական աշխարհը, գտնելու համար «*Ճշմարտութիւնը եւ միայն Ճշմարտութիւնը*»:

Ֆիզիքական անտառը տեւաբար ներկայ է, անոր առընթեր կը կատարուի Սարաֆեանի ներքին տագնապներուն հեռարձակումը: Տեղ-տեղ ալ՝ զիշերային անտառի նման, անոր ներքին մութ բաժինը՝ անգիտակիցը կը յայտնուի յարաշարժ քառսին մէջ, լուսարձակներու ազդեցութեան տակ, ընթերցողը դնելով ներքին ուղեորութեան մը դիմաց:

«Վէնսէնի անտառը» կը բացուի հակասութիւններու աշխարհով մը, ստեղծելով բախում մը, սփիւռքով տառապող արձակագիրին ֆիզիքականին եւ ենթակայականին միջեւ: Իւրարաքանջիւր ծառ, ծաղիկ կամ խոտ կը յիշեցնեն բան մը, յոյսի եւ յուսահատութեան բախումէն յոգնած Սարաֆեանին, «*հողմակոծ ծառերը ու յորդուն խորերուն սահանքները կը յիշեցնեն յոյսերու գետին ի վեր զացող հաւաքի նաւը, որ կը գտնէ ինքզինք միշտ կոյս սահանքի մը սրորորը*»¹: Իմացական միտքեր ու վերլուծական նուաճումներ կը տողանցեն անոր մտաշխարհին մէջ ու կ'առաջացնեն հարցադրումներ. «*Ամէն ճշմարտութիւն, կու տայ նոր ճշմարտութեան մը կարօրը: Ամէն յեղափոխութիւն կը տանի դէպի նոր յեղափոխութեան մը: Ո՞րն է ճշմարտութիւնը...*»², եւ կը բացուի կեանքի անտառը մանուկ, պատանի եւ հասուն Սարաֆեանի առարկայական, զգացական եւ իմացական աշխարհները ներկայացնող փոխաբերական պատկերներով, որոնցմով ան միաժամանակ կը նկարէ Վէնսէնի անտառին բնութիւնը:

Առաջին իսկ հաստատումով կ'ըսէ. «*Առասպել մըն է կեանքը հոս*», որ պիտի սկսի հայ ժողովուրդի պատմական անցեալով՝

1 Նիկողոս Սարաֆեան, «Վէնսէնի Անտառը», «Նայիրի», Պէյրութ, 1947, էջ 444:

2 Նոյն, էջ 444:

3 Նոյն, էջ 447:

4 Նոյն, էջ 448:

5 Նոյն, էջ 449:

6 Նոյն, էջ 449:

7 Նոյն, էջ 450:

սօսեաց ծառերէն մինչեւ անոնց իշխանները, քերթողներէն մինչեւ յեղափոխական հերոսները, ջարդուողներէն մինչեւ արքայազնները, որոնց շարքին նաեւ ինք՝ Սարաֆեանը իր տղայական անցելով: Կայ արձակագիրին կարօտը իր տղայութեան երազներուն, որոնք անկատար մնալով, կը յուզեն զինք այսօր, երբ արդէն հասած է *«իր երազին ծայրը»*, բայց արդեօ՞ք տղայութեան տարիներու ա՛յդ երազը, վստահօրէն ո՛չ, որովհետեւ զգալի է որ իր հոգին անբուժելի անձկութիւն մը կը պատէ, իր յուսախաբութիւններուն պատճառով, որոնց համար ալ պիտի ըսէր. *«Ու միշտ կը ծփայ անձկութիւնը»*: Կարծէ՞ք ինք չէր յագեցած իր մանկութենէն, իր հոգին ծարաւ է մանկութեան անմեղ աշխարհին, իր երկրի այգիներու բերկրութեան *«մանկութեան այգիներու մէջ»*:

Հակասութիւնները կը խճողեն իր միտքը. *«Յաղթողը պարտուող մըն է սիրոյ կամ բանաստեղծութեան մէջ: Պարտուողը՝ յաղթող մը»*³: Ան կը տեսնէ, որ ազնուականութիւն մը կայ այս բոլորին ետին, խաբելու ձգտում մը նոյնպէս: Բայց ան «խորհող, դատող մարդն են(է) հիմա առաւելապէս» ալ չեն կրնար խաբել զինք յաղթելու կամ պարտուելու մանկական հակասական զգացումները *«Եղած են(է) ըլլալիքը, մինչ անցեալին մէջ լինելութիւն մըն է(էր) դեռ»*⁴:

Սարաֆեան սկսած է պրպտել այլեւս իր կեանքի «իրական էջերը», ենթարկել ինքզինք ինքնաքննադատութեան, բարձրանալ հակասութիւններու տառապանքէն, եւ տեսնել ու ըսել ճշմարտութիւնը. *«Կ'ստեմ երէկուան գրածս՝ որ խանդ ու խիւղ փրօած էր ինծի...»*⁵: Մինչ անդին կը կատարէ խոստովանութիւն մը, որ ամբողջ գործը կ'արժեւորէ. *«Կը սիրեմ կեանքը ու չեմ գիտեր կապուիլ անոր»*: Ասով արդէն յայտնի է, թէ հակառակ ստեղծուած հակասութիւններուն լաւ գիտէ ինչ՝ կ'ուզէ եւ ինչ՝ ոչ, անով իսկ անոնք կը դադրին ցաւցնել իր հոգին: Գերիրապաշտ Սարաֆեանն է ան այլեւս. *«Կ'ըմբռնեմ թէ փարիք մը կայ, ուրկէ անդին ապրիլը ամէնէն մեծ յանդգնութիւնն է»*⁶: Եւ կը ձգտի սրբագրել բոլոր այն սխալները, զորս գործած է իբրեւ հետեւեանք մարդկային տկարութիւններու, բայց կ'ընդունէր, որ հակառակ հասուն տարիքին, չէր կրնար սուրբ մը ըլլալ, հետեւաբար պիտի չկարենար իր ձգտումին հասնիլ, ընդհակառակը, դեռ պիտի գործէր նորերը, որովհետեւ *«արնոյր էր կեանքը»* եւ *«ինչ կ'արժէ(ր) ապրիլը երբ պիտի չլուծուի չարիքին դէմ վրէժը»*⁷: Ծառերուն մեծութիւնները կը զարգացնեն իր մէջ հայուն վրէժի խմորումը, ամէն կողմ կը տեսնէ իր երկրին ու հայրենիքին սրբազան վայրերը յիշեցնող տաքօրինակ ծառեր՝ «Արարատ մը», որ կը նայի իրեն, լոյս մը որ կը լուսաւորէ ամ-

բողջ Մարմարան, խաչ մը, որ կը յիշեցնէ մեր սրբավայր հայրենիքը, թէւ ան «*ծնած է չախէն աջ, հայրենական կարօրի պէս*»: Ծառեր, որոնք իրենց ճիւղերը վեր բարձրացուցած կ'աղերսեն առ Աստուած, նման անապատներուն մէջ տարագրուած հայութեան, ծառեր կարմրագոյն, որոնք կը յիշեցնեն արնոտ սուրերը թուրք դահիճներուն, ծառեր տխուր ողբացող, որոնք կը նային Սարաֆեանին՝ հայուն, առնելու համար իրենց վրէժը:

Այս բոլորին առընթեր հայրենաբաղձութեան զգացում մը կը պատէ հեղինակի հոգին. կարօտը նաեւ ծննդավայրին, կը նայի ետ, իրենց արմատներուն կառչած հսկայ ծառերուն, որոնք կարծես կը հեզնեն արմատախիլ եղած Սարաֆեանի իսկութիւնը:

Եւ այսպէս, «թափառական հայր» կը շրջի անտառին մէջ, անոր ծառերէն իւրաքանչիւրին կախելով իր հայեացքը, անոնց մէջ փնտռելով իր «ես»ը, Սարաֆեան մարդը եւ հայը, մանուկը եւ տարիքոտը, «*Ու հոգիս(ն) կը մնայ կիսուած՝ րդուն ու րարիքոտ մարդուն միջեւ*» կը զգայ որ մարմինէն առաջ ծերացած է հոգին, թէ կեանքի փորձառութիւնները ու հեռատեսութիւնը կը մեղցնեն խանդավառութիւնը, ուրախութիւնը, որ կար մանկական միամտութեան մէջ: Սակայն այս գետնի վրայ չի յուսահատիր, եւ կամ կը հաւատայ թէ «*յուսահատութիւնն իսկ աղբիւր մըն է յոյսի*»: Հայր կը գտնէ ահաւոր վիճակի մէջ, կը պոռթկայ ու կ'ընդվզի պարտադրուած պայմաններուն դէմ, զգուած է շրջապատէն, ու կուտակուած ամբողջ դառնութեան ժայթքը յանկարծ կը բխի սփիւքի դէմ, որ երիտասարդ սերունդները հասցուցած է ֆիզիքական ու հոգեկան սնանկութեան. կը ցաւի որ «*մեռնելու վրայ(է) մեր լեզուն. մեր արժէքները օտարացուց օտարէն, Սփիւքէն եւ մեր իսկ հայրենիքէն, ուր կեղծիք ու համբակութիւն կ'ուզուի արուեստէն: Սփիւքին մէկ մասը ճուլուելու վրայ, միւսը՝ երթալ ճուլուելու դատարարութեամբ՝ իր սեփական երկրին մէջ: ճուլուելու րակաւին երկրէն դուրս՝ անով, այդ երկրով, անոր սէրով, սրտընացումով...*»⁸: Դեռ աւելին, իւրաքանչիւր սպիտակ ծառի մէջ կը տեսնէ այն ֆրանսուհիները, որոնք խլեցին կեանքերը աքսորէն փրկուած այն որբերուն, որոնք արեւելքի մէջ միսի գրկանքէն վերջ, միտով յիմարացան ու ցոփանքէն հիւծած ու մաշած մահացան հիւանդանոցներու մէջ:

Սարաֆեան հայր, թէւ կը կրէր անիրաւուած ցեղին ճակատագիրը, բայց անոր հետեւանքներուն սպառնացող վախէն կրցաւ ըլլալ օտար քաղաքի մը մէջ իր «հայրենիքը» մտքով կերտող հայր «*ծնած համամարդկային քնազդներով կը դառնամ ծայրայեղօ-*

8 Նոյն, էջ 463:

9 Նոյն, էջ 466:

10 Նոյն, էջ 560:

11 Նոյն, էջ 563:

12 Նոյն, էջ 458:

13 Նոյն, էջ 460:

14 Նոյն, էջ 569:

րէն ազգային»⁹ ու օտար ամբոխին դիմաց ազգային վիշտէն ու ցասումէն անդին՝ դարձաւ դաժան հեզնողը բոլոր վարդապետութիւններուն, եւ իւրաքանչիւր ծառի մէջ անարդար դատաւոր մը տեսնելով, երազեց ահաւոր ուրախութիւնը աշխարհի քանդումին, ուզեց տեսնել քաղաքակրթութեան սնանկութիւնը, ինքնաքայքայումը, որպէսզի այն ատեն հաւաքէր մեր մեռելները «անտառի բոլոր կողմերէն եւ զանոնք առաջնորդէի(ր) դէպի աւերակները, երբեմնի գոռոզ ոստաններուն, ու նսրէին(ք) աւերակներուն վրայ, եւ աշխարհի բոլոր սնափառ աշխարհակալներուն զանկերուն խարոյկին եւ ժողովուրդներու մոխիրի ծովուն առջեւ՝ մենք պիտի երգէինք երգը ունայնութիւններուն ու մահը աւերիչ տրգիտութեան»¹⁰ եւ ցանկութիւնը վերջին պիտի ըլլար «ե՞րբ պիտի տեսնեմ իմացական քաղաքի մը կերպումը հայրենի հողերուն վրայ, միակ հնարաւորը այլեւս եւ սակայն վեր՝ բոլոր խեղճ անկախութիւններէն՝ երբ այլեւս եղբայրութիւնը կ'իշխէ ցեղերուն վրայ: Անտուն ու միակ եմ եւ կ'ուզեմ տուն մը հայրենիք մը՝ չգտնուիս հաւասար»¹¹:

Ան կրցած է բառերով նկարել լոյսի խաղերը տերեւներուն եւ ջուրներուն վրայ, իւրաքանչիւրին տուած է պահ մը, որ ամէն անձի ապրումներուն մաս կը կազմէ եւ զորս կրնայ տեսնել արձակագիրին իմացական աշխարհին ընդմէջէն: Կնոջ կերպարներով նկարած ծառերէն իւրաքանչիւրը, անպայման որ, ոչ միայն իր յուշերը կ'արթնցնեն, այլեւ ընթերցողին սէր կամ բաժանումի ցաւ պատճառած կնոջ յիշատակը կը յուշեն: Հոն է, սիրածը աստուածացնող եւ զայն տապալող կինը, որու ընդմէջէն Սարաֆեան կը ներկայացնէ կնոջ զօրութիւնը եւ դաժանութիւնը: Հոն է «մեզ իր սէրով, իր անձնուիրութեամբ, իր վստահութեամբ խանդավառութեան տանող»¹², հոգիները խաղաղեցնող լիարժէք կինը: Հոն է, ներկայ սերունդը ձուլող մաւի օտար ամուսնութիւն պատճառող ֆրանսացի կինը, իր կիրքերով ու ստրկացնող հոգիով: Հոն է մաւի նոր լոյսի աղբիւր եղող սիրոյ խաղաղ կինը, որ «չէր ճանչցած սիրած էակը, անոր մարմինէն ներս իսկ, երբ ողնայարէն կը հոսէր աստղերուն լոյսը, կ'ամչնար իր խաբուելուն»¹³: Գիրքերու խաղով իր հոգին վերլուծող արձակագիրը զարնուելով մաւի մոզական ալիքներու, ոսկի պուտտաներու, մեղուսաներու օձային տիպարներու, պիտի շարունակէ պեղել իր հոգին ու այս անգամ զուգահեռներ գծել անձնականութեան եւ դաւաճանութեան, ամբաստանութեան ու յանցանքի զգացումի, ներկային ու մանկութեան միջեւ, շեշտելով թէ «ամէն առաւօտ ներկաս(ն) կը քալէ զուգահեռական մանկութեանս հետ»¹⁴, անցնիլ աւելի վեր, անիրականանալի ձգտումներու

իր իսկ բառերով ըստիւմ. «*բարձրութեան այդ ծարաւը բացած է առջեւ վիհերուն ամէնէն սեւն ու խորը*», մինչեւ որ վերանայ ամէն հակասութիւն եւ տեղի տայ բիրեղացումի ու անդորրութեան, մինչեւ որ, դէպի անհունը դարձած լոյսի ձգտող Սարաֆեանը հասնի իր փափաքած «*ծայրագոյն վերացումին*»: Վերջապէս պէտք է ըսել թէ ոչ միայն «*Վէնսէնի անտառը մոգական է*», այլեւ Սարաֆեանի նկարած պատկերներուն ուժեղ ազդեցութիւնը մոգական է:

«Վէնսէնի անտառը» արձակին առնչութեամբ կ'արժէ յիշել նաեւ 1988ին Փարիզի մէջ, նոյն խորագիրով լոյս տեսած ժողովածոյին մէջ զետեղուած, Սարաֆեանի վերջին գրութիւններէն՝ «Մշուշին մէջ» արձակը, ուր հեղինակին մօտեցումը կը հակասուի «Վէնսէնի անտառ»ին մէջ յիշուած, արմատ նետելու եւ Սփիւռքի մէջ կանգուն մնալու պայքարի խորհրդանշին, եւ կը բերէ ամլութեան զգացողութեան արտայայտութիւնը, աւելի ակներեւ դարձնելով Սարաֆեանի մէջ գոյութիւն ունեցող հակասութիւններու բախումը:

ԱՆԴՈՐՐՈՒԹԵԱՆ ԱՂԵՐՍՈՒՆ

Գրագէտին համար լուռ ու խաղաղ մթնոլորտը անհրաժեշտ է, կեդրոնանալու եւ իր միտքերը արտագրելու համար: Իսկ արուեստագէտ գրագէտին համար ոչ միայն լուռն է անհրաժեշտը, այլեւ բնութեան անդորր պահերը, որոնց ընթացքին արուեստագէտին գեղեցիկ եւ սիրահար հոգին կը խաղաղի եւ ան իր ըմբռնումով վայելքը կը յանձնէ թուրքին: Այս էր նաեւ Ն. Սարաֆեանի համար, ինչպէս կը տեսնենք «Էքս-լէ-պէն»ի «Սպիտակ լեռը»ին եւ այլ արձակներու մէջ:

«*Ապրելու կամքն ու հրճուանքը զգալի են հոս: Չգալի այդ կեանքէն եկող մեծ տխրութիւնը, եւ մեծ գեղեցկութիւն մը կայ տխրութեան եւ ուրախութեան այս հակադրութեան մէջ*»: Էքս-լէ-պէնը այգեստանային աշխարհ մըն է, հանքային ջուրերու քաղաք մը, օժտուած բուժավայրով, ուր ամրան ընթացքին կը դիմեն հանգստանալու կամ առողջանալու նպատակով ամէն ազգերէ մարդիկ: Ի՞նչ կը փնտռէ եւ ի՞նչ կ'ուզէ գրել Էքս-լէ-պէնի մէջ Ն. Սարաֆեան: Արուեստագէտի աչքերով կը նայի եւ կը հիանայ լեռներով շրջապատուած բլուրներուն, ժայռերու վրայ ապաստանած հնամենայ դղեակներուն, ծաղկազարդ պզտիկ թերակղզիներուն եւ լեռներուն «*լուռ ու ծանր, անապատային, բայց տապալուրիչ՝ մեծ*

15 Նիկողոս Սա-
րաֆեան, «Էքս լե
պեն», «Ակսու», Պեյ-
րուք, 1953, էջ 161:

16 Նոյն, էջ 163:

հրայրքներու եւ անչկութիւններու նման, կը ձգէին իրենց շուքը մինչեւ լիճին կէտը եւ խռովք մը կը փարածէին ուրախ ափերուն վրայ իսկ այնքան որ նաւը կը սահէր կարծէք պատուհասեալ աշ-
խարհի մը մէջէն, ուր լռութիւն եւ սուգ էր, կը զգայինք, թէ ծան-
րակշիռ բան մը չէր կեանքը»¹⁵:

Քերթողը կու գար Էքս-լէ-պէնը Բոն գետի միացող լիճի ափին, աշխարհէն կտրուած անտառներու լռութեան մէջ, բլուրներու կա-
նաչ ալեկոծութեան վրայ խայտացող տուններու առջեւ, կանգնած Լամարթիւնի արձանին մօտ, կառչելով անցեալ երջանկութեան, իր ծննդավայրի բնութեան եւ ուրախ օրերուն, սակայն չէր կրնար ան-
ջատուիլ այդ բոլորէն եւ ապրիլ միայն ներկան: Ամէն տեղ արիւ-
նակիցի մը գոյութեամբ եւ հայու մը արուեստով կ'ուրախանար: Հոս ալ զինք գրատողը պիտի ըլլայ վանքի մը գեղեցկութիւններուն տակ գրուած «Քաչադուրի» անունը, կ'ենթադրէր, թէ 17րդ դարու իտալացած հայ մը ըլլալու էր. Խաչատուրեան: Յաւր կը խոցէր հո-
գին անդրադառնալով դարերէ ի վեր տետղ ձուլումին, հակառակ մեր եկեղեցիներուն, ճարտարապետութեան, բանաստեղծութեան, մանրանկարչութեան, «չի գրներ բան մը որ ազգային հպարտու-
թիւն փայ օրար դպրոցներու մէջ, օրար մեծութիւններէն ընկնը-
ւած մեր երեխաներուն»¹⁶:

Արձակագիրը ամէն առիթ կ'օգտագործէ մեր ազգային մեծ ցա-
ւը վկայելու: Կը ներկայացնէ սփիւռքի ցիրուցան եղած հայերէն քանի մը հոգիի ներկայութիւնը Էքս-լէ-պէնի մէջ: Անոնք ոչ թէ եկած են տարուան մը յոգնութենէն հանգստանալու, այլ տարիներու ճնշող եւ ընկճող ճակատագրի ցաւէն, սակայն ի գուր, որովհե-
տեւ հայը ուր ալ երթար իրեն հետ կը տանէր իր վիրաւոր ազգու-
թիւնը եւ հոգին. հրաշքի պէս բան մը կը վերագրէ, քանի մը տեղա-
ցի հայերու ներկայութիւնը գլխաբաց քահանայի մը նախագա-
հած սեղանին շուրջ, եւ կարծէք անոնք հեռաւոր ու լեռնային քա-
ղաքին մէջ յարութիւն առած հայուն բեկորներ ըլլային, միշտ տխրեցող զգացում մը, զոր արտայայտելու նպատակով արձակա-
գիրը պիտի ըսէ. «եւ ներկայ է անոնց կողքին մեր անցեալ ողբեր-
գութիւնը, ներկայ դժբախտութեան հետ: Բայց ներկայ իրական, յուզիչ գեղեցկութիւնը մեր ողբերգութեան: Տարիքը առած կին մը, որ խօսեցաւ արտորէն ու ջարդէն: Փրկուած էր դիակներով լեցուն փոսի մը մէջ նետելով ինքզինք, երբ իր քոյրերը կը գլխատուէին այդ փոսին առջեւ: Մնալէ վերջ ժամերով դիակներուն փակ եւ կրակներուն մէջ, բոցավառ մաքառներուն փակ, զոր դահիճները կը նետէին փոսին մէջ, կինը, անոնց մեկնումէն վերջ, զիշերը, բարձրացած էր մեռելներուն մէջէն: Ու կ'ապրէր այսօր, ճանչնա-

ԿՈՇԱԿ

2013, ՅԱ. ՏԱՐԻ, ԹԻՒՂ

լէ վերջ տակաւին՝ փախուստին եւ օտար երկիրներու պատճառած թշուառութիւնը. խորունկ տխրութիւն մը՝ կորովի հոգիի մը մէջ: Ազնուականութիւն մը, ուշիմութիւն մը՝ զարգացումէ զուրկ կնոջ մէջ ու Արիութիւն մը՝ ցաւոյ մարմինի մը մէջ»¹⁷:

Սարաֆեան կը տազնապէր. միշտ արդարացուցիչ բան մը կը գտնէր ըսելով, թէ բոլորին ալ փնտռածը յոյսն էր՝ գոյատեւելու համար: Ամէն անգամ որ ջարդէն փրկուած մը անցեալի մոռացութեան ձգտելով իր առօրեային մէջ փնտռէր հաճոյք եւ զուարճութիւն, լուռ կը ցաւէր անոնց համար, որոնք գիտէին հաճոյքը ու կեանքը ապրիլ, բայց գոհուեցան, որպէսզի ուրիշը ապրի, կը զգար «թէ մեր հերոսները ի զուր գոհուեցան եւ մեր քերթողները ի զուր իրենց սիրտը տուին փոխարէն քիչ մը սէր սպասելով մարդերէն, որոնք ապրեցան իրենց հացն ու վայելքը փնտռելով միայն: Թէ բան չմնաց լոյսի երբեմնի մեր կարօտէն, որ կար անգրագէտ մայրերուն մէջ իսկ եւ կը փորձէնք միսփարել մեզ՝ տեսնելով անոնք, որոնք կառչած կը մնան տակաւին մեր տառերուն եւ մեր լեզուին, եւ կը խորհինք, թէ ի՞նչ տուաւ այդ լոյսին սէրը մեզի: Ի՞նչ շահեցան մեր լոյս տուողները: Բանտարկուած, չարչարուած, կախուած, քարին տակ ճգնուած մեր լուսաւորեալները»¹⁸: Ան նոյն անդորրութիւնը պիտի աղերսէր Ալպեան սպիտակ լեռներուն առջեւ: Պահ մը պիտի թուէր իրեն, որ այդ սպիտակութիւնը, հոգիին խաղաղութիւն պիտի շնորհէր եւ ինք որքան կարիքը կը զգար աղոր: Կ'ըսէ. «Պաշարուած էի հայելավառ լեռներով: Կորսուած, ընկրկած էի: Եւ սակայն կ'ոգեւորէին զիս այդ լեռները: Կը պրկէին մարմինս ու հոգիս: Երկունք մըն էր: Ըլլար անդորրութիւն խռովքներուն վրայ»¹⁹: Ինչպէս միշտ, հանգիստ պահերու կը զարթնուն յուշերը, խռովքները եւ թոյլ չեն տար որ արձակագիրը կարենայ ըլլալ իր բաղձացած «արդորրութիւնը խռովքներուն վրայ»:

Կ'արթննայ վերքը. յոյս, յուզում, խանդ, կամք, յուսախաբութիւն, ընկերութեան յիշատակներ՝ օտարացած այլեւս, կը ծանրանան հոգիին վրայ, կ'անդրադառնայ, որ պայքարներուն ամենէն ծանրն է խաղաղութիւնը, նենգը ու կախարդական թշնամին, այնքան ատեն որ «սրտեղծագործ խռովքներուն ալեկոծման մէջ է խաղաղութիւնը»: Յաղթանակը կ'ըլլար մերժելով խաղաղութիւնը, որ երազային մոլորում էր ալ, ամուլ երջանկութիւն, անճանախորհիւն, մարմնային ծոյլ հեշտանք, զինաթափ սէր կամ պատնէշին ետին ապաստանած արհամարհանք մարդոց հանդէպ, անզգաստութիւն, տկարը հալածելու նախանձոտ գոհունակութիւն, սնամիտ ինքնամոլութիւն, վախ եւ յոգնութիւն. ու կ'ըսէ «Եթէ աղօթք պիտի

17 Նոյն, էջ 172:

18 Նոյն, էջ 188:

19 Նիկողոս Սարաֆեան, «Սպիտակ լեռը», «Ակօս», Պէյրութ, 1949, թիւ 4, էջ 3:

20 Նոյն, էջ 3:

ըսէի. Տէր ապրեցուր զիս՝ որպէսզի չարչարուիմ: Կը սիրեմ կեանքը, ոչ թէ ապրած ըլլալու համար, այլ տալու՝ այն ինչ որ պէտք է տամ: Եւ այս է իմ գերագոյն երջանկութիւնս: Այսպէս է որ կրնամ խաղաղիլ...»²⁰:

Սարաֆեան կը տեսնէ, որ անդորրութիւն եւ խաղաղութիւն իրարմէ շատ հեռու պահեր են. ինչո՞ւ ուրեմն տենչալ առաջինը եւ ոչ երկրորդը: Իրեն կը թուի, թէ ծարաւ մըն է խաղաղութեան կարօտը, յուսաբեկում, անկման միսիքարութիւն, երբ չենք հասնիր մեծութեան եւ այդ չենք տեսներ մեր շուրջ, երբ կը գտնուինք մեր ըրածին, ըսածին եւ լսածին անկատարութեան առջեւ: Ուստի խաղաղութիւնը տեսակ մը «ջայլամի իմաստութիւն է», եթէ փախուստով ձեռք ձգենք զայն:

Սարաֆեանի Ալպեան սպիտակ լեռը կը խօսի. «Ամպերը ժայռերու վրայ՝ կը յիշեցնէին մեր լեռներուն վրայ ինկած հերոսները՝ վառօդին ծուխին տակ: Կը յիշէի անոնք, որ եղան երկաթէ մկաններով, կամքի տէր, անձնուէր ու ազնուական հոգիներ: Ահա հող էր որ դրոշմուեցաւ մէջս Սպիտակ լեռը: Կը մօտենար լուսաւոր ամպերու վրայ հեծած, կը բարձրանար երգեհոնի մը թաւ, մեղադաշունչ երաժշտութեան պէս: Խաղաղութիւն կը բերէր: Պայքարի դաշտ մըն էր: Մի (թէ միացող)ացող հոգի մը՝ որ կը հասներ անդորրութեան»²¹: Ոչ թէ եոկայական անդորրութենէ կու գայ ստեղծագործելու ոգին, այլ խռովքներու աշխարհէն, ապրումներու խոր պահերէ, մաքրութիւնը, հոգին երգի վերածող գիտութենէն:

ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏԻՆ ԴԱՌՆԱՅՄԱՆ ԱԶԳԱՆԵՐԸ

Ն. Սարաֆեանի մէջ պայքարը մեծ էր զգացումներուն եւ մտածումներուն միջեւ: Կեղծիք, բշտառութիւն, թոյն ու տառապանք ճաշակած իր հոգին, թէեւ կը յուսար ամէն դժուարութենէ ետք հոգեկան վերանորոգում մը, անսահման ու մաքուր յոյս մը ամէն լուսաբացի հետ, աւելի խոր թափանցում մը հոգիներէն ներս, ցաւերն ու գեղեցկութիւնները խաւարէն առաջ ժայռերուն վրայ փորագրելու փափաք, պոռթկում ամէն հիասթափութենէ ու ընկրկումէ վերջ, ամէն արգելքի եւ չարիքի առջեւ. ստեղծագործութեան հանդէպ հրայրք մը՝ փիւնիկի պէս, բայց համոզուած էր, որ ոչինչ սպասելու է մարդոցմէ, եւ թերեւս նոյնիսկ իր անձէն, որովհետեւ չէր կրնար ըլլալ չար հոգի եւ հաւասարէ հաւասար վարուիլ զինք թունաւորող շրջապատին հետ, քանզի «բարութեամբ ապրիլը տառապագին պայքար մը եղաւ»²² իրեն համար: Այս բոլոր մտածումները խտացած կը գտնենք «Լոյսի ցաւեր կամ Մեծն Տիգրան եւ Ամլութեան

22 Նիկողոս Սարաֆեան «Լոյսի ցաւեր կամ Մեծն Տիգրան եւ Ամլութեան Սատանան», «Ակօս», Պէյրութ, 253, էջ 26:

ԿՈՆԿ

2013, ՇԱ. ՏԱՐԻ, ԹԻԷ 2

Սատանան» արձակ գրութեան մէջ, որու հերոսը Տիգրան Ժիրայրեան՝ «Ասպետական արտակարգ մէկն էր, նոյն ատեն բացառիկ հայ մը» գիրքի ու գրականութեան սիրահար եւ գրողներու բարեկամ. տարիքով յիսունէն վեր, նախապէս Պոլսոյ մէջ ուսուցիչ եւ գրող, իսկ Փարիզի մէջ բանուորութենէն, փոքր առետրական եւ ապա մեծաքանակ վաճառականի մը դիրքին հասած, Ալպեան լեռներուն վրայ բնակութիւն հաստատած գաղթական հայ մը, որուն մէջ վառ մնացած էր սերը գիրքի հանդէպ եւ գրողներու նկատմամբ տարօրինակ կարեկցանք, որմէ մեկնած բարձրաձայն կ'երազէր եւ կը խոստանար գրողներուն ապահովել հանգստեան վայր մը. *«Մեծ փառաւոր դղեակ մըն է, պիտի գնեմ անպայման: Անհրաժեշտ է: Ես ինծի չէ, որ կը մտածեմ միայն, այլեւ չեզի նաեւ... գաղթաշխարհի գրողներուդ: Չերը պիտի ըլլայ այդ դղեակը: Պիտի հաւաքեմ չեզ բոլորդ հոն... կու գաք, կը մնաք ամէն տարի քանի մը ամիս... փառաւոր արշակուրդ մը կ'անցընէք... պէտք ունիք, ամէնէն դժբախտ տարրերն էք մեր ժողովուրդին... «Մարդ» մի ըսեր ինծի, եթէ չյարգեմ խոստումս...»²³:*

Տողերուն ընդմէջէն կամաց-կամաց ի յայտ կու գան Ն. Սարաֆեանի կրած դառնութիւնները, որոնցմէ ամէնէն աւելի աւելի վշտացնողը արհամարհանքն է, յոխորտ անձերու կողմէ «խեղճեր»ու տեղ դասուիլը. իր հերոսին բերնով, իբր թէ բարեացականութեան նպատակով ըսուած. *«Անշուշտ, դուք քով քովի չէք կրնար գալ, իրարու գլուխ կը պատռէք, բայց պիտի մօտեցնեմ ես չեզ իրարու, մարդկութիւն պիտի սորվեցնեմ չեզի, մեծնալու հնարաւորութիւն պիտի տամ չեր մէջ եղած խեղճերուն... բայց քեզ կ'ուզեմ ամէնէն առաջ»²⁴:*

Սարաֆեանի ըմբռնումը կեանքի նկատմամբ բանաստեղծական է. ան կը հաւատայ որ կեանքը երկրի վրայ է, այս «անմահական աշխարհի բարիքները» վայելելու մէջ է, կեանքէն աւելի գեղեցիկ բան չկայ եւ ինչ որ արժանի է անմահական ըլլալու՝ կեանքն է, որմէ յագեցնալ կարելի չէ, որուն համար շատեր կ'ուզեն վերապրիլ աշխարհին վրայ, իսկ ուրիշներ, որոնք երազապաշտ չեն եւ կ'ընդունին, որ աշխարհ վերջ ունի, իրենց ձգած յիշատակներով կ'ուզեն կեանքը շարունակել մտածելով անմահութեան մասին, ինչպէս արուեստագէտները:

Ան կը հաւատայ, որ *«կը մեռնինք եւ ոչինչ կը մնայ ի վերջոյ մեր զգացումներէն, սէրերէն ու ցաւերէն, հովը կը տանի մեր ողջութեան իսկ այն բոլորը, որոնց համար սիրտ եւ միտք կը հարցնենք, գիտենք եւ չենք հանդուրժեր այս ճակատագիրը, ան-*

23 Նոյն, էջ 31:

24 Նոյն, էջ 39:

25 Նոյն, էջ 40:

մահութեան պէտքը կը զգանք»²⁵: Կ'ապրի յիշուելու եւ մոռցուելու փափաքին բախումը, եւ կը տառապի այն իրողութենէն, թէ «ի՞նչ արժէք կը ներկայացնեն անոնք, որ պիտի յիշեն զիս... Կարօրինակ է մարդ էակը: Կ'ապրի իր նմաններէն դառնացած, կեղծիքէն, արհամարհանքէն, արելութենէն եւ կ'ուզէ յիշուիլ իր նմաններէն: Կը կարծէ, թէ ատելի ազնիւ պիտի ըլլան իր յիշարակին հանդէպ՝ եկող սերունդները, ատելի լաւ պիտի ըմբռնեն զինք... Պարտանք»²⁶:

26 Նոյն, էջ 41:

Սարաֆեան կը դառնանայ նաեւ մեր ժողովուրդին մօտեցումէն, երբ ատելի խելացի ու գործնական կը համարեն այն գրողները, որոնք չեն հեռանար օրուան իրականութենէն, կը ձգտին անմիջական փառքին եւ դրամին ու կը վայելեն կեանքը իրենց ողջութեան ձեռք բերուած ժամանակաւոր փառքով, եւ ըստ անարուեստ ընթերցողին՝ *«կը հասկացուին, կը սիրուին, օգտակար կ'ըլլան եւ կ'օգտուին իրենց ողջութեան»²⁷:* Սարաֆեան այն անձերէն է, որ ունենալով հանդերձ մարդկային ընդհանուր փափաքներ՝ ապրիլ հարստութեան եւ երջանկութեան մէջ, ունենալ փառք եւ ժողովրդականութիւն, անշահախնդիր նուիրուեցաւ գրականութեան իր իսկ վկայութեամբ, *«Անշուշտ, շատ կարօտներ ունիմ, բայց կը մոռնամ զանոնք բոլորը, երբ կ'անցնիմ սեղանիս առջեւ, կը դառնամ այն, որմէ Կարբեր բան չեմ կրնար ըլլալ, կու տամ այն, որմէ Կարբեր բան չեմ կրնար տալ ու ամէն մարդ իր ճակատագիրը ունի: Մեր կամքը մեծ դեր մը չի կրնար կատարել»²⁸:*

27 Նոյն, էջ 43:

28 Նոյն, էջ 45:

Իր ժամանակակիցներէն շատեր չէին գիտեր գնահատել արուեստին համար ապրող արուեստագէտ գրողները: Կը հաւատային, որ գրող մը գրող ըլլալու համար պէտք ունի մեծ մտապաշարի, համաշխարհային հորիզոնի: Անհրաժեշտ է տեղեակ ըլլալ մարդկային հարցերէն ու մեր գրողը չի կրնար հասնիլ այս բոլորին: Պայմանները չունի: Վար կը քաշէ զինք իր ժողովուրդին ցած մակարդակը, դատապարտուած է սոխակ ու լուսին երգելու, եթէ ինքնութիւն չունի:

29 Նոյն, էջ 48:

Շատեր համոզուած էին թէ *«միքով եւ հոգիով պզտիկ ժողովուրդի մը հէտը է մեր գործը, մեռնելու մօտ ժողովուրդի մը հէտը... վերջին հայերն ենք... ոչ կեանք եւ ոչ ալ փառք, ոչ ալ անմահութիւն կու տայ այս ժողովուրդը: Անօթի կը չգէ իր սիրածներն իսկ, կը խաթարէ բիրեղէ հոգիները, կը խորտակէ զանոնք»²⁹:*

Ան անդրադարձած է պարզ գրողի եւ արուեստագէտի տարբերութեանց: Մատնանշած է, թէ եթէ արուեստագէտի մը մեծութիւնը համակիրներու մեծ թիւին մէջն է, այդ ճամբով է, որ կը քալէ նաեւ պզտիկութիւնը: Բախտէն, տիրող մտայնութենէ, անձնական հա-

մակրանքէ օգտուողներ են յաջողածներէն շատեր, աճապարարներ: Նման մարդոց գործերը զուրկ են մաքրութենէ եւ կատարելութենէ: «Մեծն Տիգրան եւ Ամլութեան սատանան» խորագրով արձակին մէջ, Ն. Սարաֆեան ընթերցողին կը փոխանցէ վերիվայրումներ ապրած հայ մարդուն հոգեկան փոթորկումները, իր փափաքած բայց չկրցած, եւ չփափաքած բայց իրագործած աշխատանքներուն պատճառով յառաջացած բախումը, ողբերգութեան մէջ հպարտութիւնը, երբ հերոսին՝ Տիգրան Ժիրայրեանի պոռթկումը կը ներկայացնէ այն վարկածին նկատմամբ, որ հրեայ Ռայնախին, հռոմէացի պատմիչներուն դէմ, որոնք արտայայտուած են Մեծն Տիգրանի մասին ըսելով, թէ ան կորսնցուց իր փառքը եւ ծունկի եկաւ եւ այս վերջին բառը նուաստացուցիչ գտնելով անդադար կ'ըսէր. «Սուտ են, Մեծն Տիգրան պարտուած է, բայց երբեք ծունկի չէ եկած թշնամիին առջեւ, վատ մը չէր: Խմած էր կորանքին դառնութիւնը, բայց ծունկի չէ եկած երբեք...»³⁰: Այս պոռթկումին մէջէն Սարաֆեան կը տեսներ վերոնշեալ հայ մարդը, որ գիտէր, թէ ինկած էր, բայց չէր ուզեր ծունկի գալ, մեր ամենէն հզօր արքային տիպարին կառչած մնալով, կը մղէր իր առօրեայ պայքարը եւ անկէ կ'առնէր անհրաժեշտ հպարտութիւնն ու կորովը: Այսպիսով ան կը մատնանշէ նաեւ մեր պատմութեան կատարած դրական դերը մեր կեանքին մէջ, որուն կու գան միանալ մեր արքայական ոսկիներն ու արծաթները, մեր հին գրականութիւնը, որ կը բովանդակէ մեր թագաւորներուն գործերը, օտար աղբիւրներու մէջ յիշուած մեր հարստութիւնները, որոնց որքա՞ն պէտքը ունեցած են հայրենի հողէն հեռու ծնած ու մեծցած սերունդները, յատկապէս դարուն առաջին կիսուն, երբ չկային հեռուստատեսային եւ արբանեակային հաղորդամիջոցները, որպէսզի օտար ասիւրի վրայ ապրող հայը գիտնար եւ վանէր աննշան ազգ մը ըլլալու նուաստացնող զգացումը: Այս ապրումը կը փոխանցէ Սարաֆեան Տիգրան Ժիրայրեանի, բիւզանդական հայ կայսրերու ոսկիներն ու արծաթները իրեն ցոյց տալու խոստումին ի լուր. «Մանկութենէս ի վեր երազած էի մեր այդ ոսկիներն ու արծաթները, որոնք պիտի բուժէին զիս սրորազգացութենէ մը, զոր ունեցած եմ առասպելական համարելով մեր հայրենիքն ու հայկական պէտքութիւնը: Ծնելով եւ մեծնալով օտար երկրի մը մէջ, զգացած եմ միշտ ազգային դրամներով ու նամակադրոշմներով հպարտանալու պէտքը»³¹:

Նոյն հպարտութեան կարիքէն մեկնած, Սարաֆեան իր հերոսին՝ Տիգրան Ժիրայրեանին մէջ խառնած էր դաշնակցական ու համայնավար հայը, որ համակրանքով կը նայէր մեր յեղափոխու-

30 Նոյն, էջ 59:

31 Նոյն, էջ 61:

32 Նոյն, էջ 122:

33 Նոյն, էջ 65:

34 Նոյն, էջ 71:

թեան պայքարին, մեծութեան, ուժին: Դիւցազներգութեան հանդէպ իր սերը, նաեւ յեղափոխական առաքինի դէմքերու յիշատակը կը մղէին զինք ոգեկոչելու վեհութիւնն ու առաքինութիւնները Դաշնակցութեան, անոր նախկին փառքը, իր օրերու դաշնակցականները արհամարհելով, զանոնք բաղդատելով ռամկավարներուն եւ համայնավարներուն, կը գտնէր տակաւին տաքարին: Դաշնակցութիւնը կը համարէր ներկայացուցիչը մեր ազգային ոգիին, եւ կարելի չէր երախտապարտ չզգալ անոր հանդէպ: Համոզուած էր, թէ Երեւանի մէջ իսկ «մարդիկ մեծ յարգ մը կու տային անոր՝ հաշածելով հանդերձ զայն այդ օրերուն»³²: Միաժամանակ հիացող մըն էր Խ. Հայաստանի վերելքին, մեր մերկութիւնը կը տեսնէր հոն համախմբուած հայութեան մէջ, եւ նոյն ատեն յեղափոխական շարժումի հերոսական մարտնչումներուն վրայ: Դաշնակցական անցեալ մը ունէր: Բնաջնջուած էր իր ամբողջ գերդաստանը: Չէր կրնար չատել թուրքը: Միւս կողմէ վարանումներու մէջ էր եւ կը նայէր նորածին հայրենիքին: Ու սիրելով զայն, հպարտութիւն մը առնելով անկէ, կը մատնէր տռամը իր ժամանակին: Ուրիշ բան չէր գտներ ըսելու, եթէ ոչ՝ «պահենք մեր ֆիզիքական գոյութիւնը, չմտածենք առայժմ մնացեալին»³³:

Նոյն արձակին մէջ ընդգծուած է նաեւ վերոյիշեալ նոյն ուղղութեամբ գիրքին դերը՝ հերոսին մէջ զետեղելով հարստութիւններ դիզելու փոխարէն Սփիւռքէն եւ Հայաստանէն լոյս ընծայուած բոլոր գիրքերու գնումը՝ հաւատալով, թէ «հայ գրողը չի կրնար հայ գրող ըլլալ առանց կարդացած ըլլալու մեր Խորենացին ու Եզնիկը, Եղիշէն ու Փաւստոսը... չի կրնար մեծ արունեստագէտ ըլլալ. եթէ չըմբռնէ ցեղին ոգին...»³⁴: Հպարտութեան զգացումը սերմանելու նպատակով, կ'ըսէ, չնայած մեր սակաւութեան, նշենք մեր մեծաթիւ գրագէտները եւ հերոսները, հրատարակուած մեր գիրքերուն անհամարութիւնը, հայրենասէր ֆէտայիները, Շապին Գարահիսարի ըմբոստներէն մինչեւ «Չեկայի զնտաններուն» եւ Միպերոյ մէջ հայրենասիրութեան համար նահատակուած անանուն հերոսները, ինչպէս նաեւ Միամանթոյէն, Վարուժանէն մինչեւ Չարենց մեր ազգային հերոսները: «Լոյսի ցաւերը» կ'արժարժէ նաեւ կրօնի ազդեցութիւնը հայ ժողովուրդի կեանքին մէջ: Ան կը տեսնէ, որ ընդհանրապէս ազգերը մեծ կ'ըլլան անգթութեամբ, քրիստոնէութիւնը կը համարէ մեր ժողովուրդին թուլացման պատճառներէն մէկը, իր հիացումը կ'երթայ հեթանոսական շրջանի թագաւորներուն, նաեւ Փառանձեմի նման թագուհիներուն, որոնք մեծ դեր կատարած են աշխարհի պատմութեան մէջ:

Այս մտածումները Սարաֆեան գետեղած է արձակյին հերոսին մէջ, որ իր արտաքին եւ ներքին ալեկոծումին մէջ կը ձգտէր մնալ կայուն: Եւ իր փափաքը ի հարկէ, բանի մը կառչելու կարօտը, որ գոհացած չէր գտներ աւելի անկայուն կը դարձնէր զինք: Այսպէս, Տիգրան Ժիրայրեան մեր ամբողջ ժողովուրդին խտացումն էր, յարձակողական հայ մը, որուն մէջ կը շարունակուէր Մեծն Տիգրան մը եւ որուն համար գաղափարները պէտք է ծառայէին հայրենիքի զարգացման, եւ ոչ թէ իրենց անձնական շահերուն համար փոխէին իրենց «գոյնը»: Սարաֆեանի եւ իր հերոսին գերագոյն ցաւը Սփիւքը չկարենալ կարգաւորելու եւ փրկելու ամլութիւնն է, որ տեղ գտած է նաեւ արձակի խորագիրին մէջ:

Սարաֆեան, նման ամէն հայու, կը տառապէր ստորագգայութենէ եւ կը վախճար որ ժողովուրդին մէջ յառաջացած երկպառակութիւնը աւերներ գործէ եւ սերունդները առաջնորդէ ձուլումի: Կ'անդրադառնար իր տառապանքին եւ կը շեշտէր թէ «*օլտարամութիւնը, ստորագգացութիւնը, անբուժելի ախտեր են մեր մէջ. չրեւութիւնը, միամտութիւնը, դատողութեան պակասը, զգայնութիւնը մեր դարաւոր թշնամիներն են, սխալները սխալներու վրայ բարդեցինք, հայրենիք մը ունինք, յոյսով կը նայինք անոր եւ կասկածը կը սահի մեր նայուածքին մէջ: Կը նայինք մեղադրանքով, մենք որ սիրել կ'ուզենք զայն, կ'ըմբռնենք իր վերելքը հպարտ ենք իրմով եւ ստրկութիւն կը տեսնենք*»³⁵:

Կը տուայտի յոյսին եւ յուսահատութեան միջեւ: Կը կասկածի, որ հանճարեղ ու շինարար ժողովուրդ մը՝ հայուն նման, դիւրին ձուլուի, կամ անհետանայ, մանաւանդ որ պատմութիւն ունինք եւ հայրենիք: Երբ կը գիտակցի, թէ ամէն անհատ պիտի տայ իր տալիքը ժողովուրդին, յաջորդ սերունդին, այսինքն ունենայ թոռ եւ կեանքը շարունակուի անով, տէր ըլլայ իր կէս ձգուած գործին եւ դարձեալ կէս ձգելով անցնի աշխարհէն, զայն փոխանցելով յաջորդին: Այսպիսով դժուար պիտի ըլլայ ձուլումը, երբ շարունակող սերունդներ ըլլան, որոնց այնքան կարիքը կար սփիւքի մէջ, ուր քարէն հաց հանեցին, տունի եւ կառքի տէր եղան, համոզուելով որ օտարութիւնը կը զօրացնէ մեզ: Իբրեւ օրինակ այս յոյսին, վերջաւորութեան կը նկարագրէ Ժիրայրեանի մղած պայքարը ալիքներու դէմ, որ խլել տանիլ կ'ուզէր զինք, մինչ ինք կառչելով ժայռին, կը մաքառէր եւ յաղթելով դուրս կուգար ու կը կանգնէր իր պարթեւ հասակով, գոհ իր յաղթանակէն:

35 Նոյն, էջ 124:

36 Նիկողոս Սարաֆեան, «Հսկում», «Հայրենիք», Պոսթըն, 1933, Հոկտ., էջ 1:

37 Նոյն, էջ 8:

38 Նոյն, էջ 10:

ԱՆԷԱՑՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍԸ

«Ամբողջ մարմինս կը չգտի դէպի հոյակապ անէւացում մը... կը քաշէ երկինքը զիս»³⁶: Այս յաճախ կ'ըսեն իմաստասերներէն անոնք, որոնք նիրվանա մը կ'ունենան իրենց մտածումներուն վրայ իշխող: Ն. Սարաֆեան չունէր այդ, ինչո՞ւ պիտի ձգտէր անոր իր «Հսկում» արձակին մէջ: Չափազանցած չենք ըլլար, եթէ ըսենք, որ մեր ազգային եւ մարդկային դժբախտութիւններով շատ աւելի տառապած է Սարաֆեանի հոգին, քան իր անձնականներով:

Հսկումը պիտի ըլլայ այն պահը, երբ մեր պապերը իրենց բարձրաձայն աղօթքը պիտի ընեն առ Աստուած աւերակներուն եւ թաց հողերուն տակէն, որոնք կը բարձրանան քիչ-քիչ կեանքի կարօտով: Իրենց աղօթքով պիտի տանջեն իր հոգին, պիտի անդրադառնայ որ իրմէ ու իր անցեալէն մեծ մաս մը, զոր կարելի չէ վերագտնել, հոն են, կը զգայ հզօր ձգողութիւն մը, բայց չի կրնար միանալ անոնց: Գլխաւոր երեք գրուցակիրներ անուղղակիօրէն կ'արթնցնեն անէւանալու ձգտումը, իրենց դժբախտութիւններու պատկերով: Մէկը՝ Սարաֆեանի ենթագիտակիցի ձայնն է կեանքի վերլուծումներով, միւսը՝ Թաթոսը, իր ունայնութեան քարոզով եւ երրորդը Տիկին Հայկուհին՝ հաւատարմութեան եւ զոհողութեան տիպարը՝ իր ապերախտ զաւակով: Արձակագիրը իր ենթագիտակիցին հետ կը պայքարի, կ'ուզէ հոգեկան սպիտակ աշխարհ մը, ուր չըլլան զիրար սպաննողներ, ուրիշի երջանկութեան ու յաջողութեան նախանձողներ, չըլլայ ցաւոտ անցեալ... եւ կարելի ըլլայ խաղաղեցնել մակընթացութիւններու խոյանքը եւ տեղատուութիւններու ձգած ահաւոր մերկութիւնը, ուր սերը ձգտի ազատիլ իր կապանքներէն, լացէն, իր սպառիչ սպառումներէն, ուր պիտի չզգայ իբրեւ հայ առանձին մնալու վախը, պիտի չտեսնէ հայ նոր սերունդներու ծուլումը, ազգային ամէն ինչի կործանումը:

Տող առ տող կը խտանան միտքերը եւ երեսան կու գան Սարաֆեանի մտավախութիւնները եւ ազգային ցաւերը, որոնց պատճառով թերեւս կը փափաքէր անէւանալ, բայց պիտի շարունակուի այդ փափաքը... «Ամբողջ օրը հայու մը երես եթէ չլրեսնեն կը խենթանամ»³⁷, այսպէս պիտի ըսէր Սարաֆեանի ենթագիտակիցը եւ պիտի ուզէր, որ իր այդ շարունակ փնտռած հայը չըլլար միայն մտաւորական կամ զինուորական, ըլլար ՀԱՅ մարդ, որ կարենար ազգի նոր սերունդը ազատել փտածութենէն, մղել որ «մէկդի դնեն խենթ ու խելառ գրքերը եւ յարաբերութեան մէջ մտնեն մեծ ազգերու տղոց հետ»³⁸, բանան իրենց պատուհանները, որ ազգը «չհոտի», որ կարի-

քը չունենայ օտարին, սփիւռքի մէջ, եւ ռուսին հայրենիքի մէջ: Այն ատեն, վստահելով նոր սերունդին բարձրաձայն պիտի ըսէր. «*Ձգեցէք որ ժողովուրդի զաւակը առաջնորդէ իր ժողովուրդը*»³⁹:

Հետզհետէ պիտի երեւի, որ այդ ներքին ձայնը՝ ենթագիտակիցը, ցեղին ձայնն է, ամբարտաւած ցասումը ժողովուրդի մը, որ կը զգայ թէ դառնագին ու ամօթալի պարտութիւն մըն է իր ներկայ պատմութիւնը, երբ չի կրնար իր արդար իրաւունքները ձեռք բերել եւ ըլլալ ինք իր տէրը: Երիտասարդ սերունդը, որ չի գտներ յոյս մը զինք խանդավառող, երազ մը, որ բարձրացնէ իր նայուածքները, բարոյական աջակցութիւն մը, որ սատարէ իր թռիչքներուն, կամ հայրենական հսկողութիւն մը, որ սրտանց հետեւէր իր քայլերուն, միաժամանակ պէտք է ըսել, որ յաջորդական համաշխարհային պատերազմներու պատճառով ամբողջ աշխարհի երիտասարդութիւնը կը տառապէր նմանօրինակ ցաւերէ, դարը պղտոր էր, բայց չէր համեմատուեր մեր ազգի, այդ սերունդի զաւակներու ցաւին հետ:

Թաքոսը ունէր ընտանեկան դժբախտութիւն. կինը կ'ուզէր ամուսնալուծուիլ եւ ամուսնանալ ուրիշի հետ: Հայ տղամարդը ինչպէ՞ս թոյլ տար, ո՞ր էր հայ կիներուն բարոյական վարքը, այդքա՞ն արագ պիտի ձուլուէին օտար բարքերու մէջ: Անճնական վիշտը մէկդի դրած նախանձով կը նայէր օտար աղջիկներու եւ տղոց, որոնք իրարու ձեռք բռնած կ'անցնէին ողողելով փողոցը: Ցաւով կը հառաչէր. «*Է՛, մենք ազգ ենք... Աս լսկուրները երկիր ունին, տէր ունին, առաջնորդներ ունին, ասոնք բոլորն ալ վաղը մէյ-մէկ մարդ պիտի դառնան... իսկ մե՞նք...*»⁴⁰:

Ինչո՞ւ «հսկում» եւ «անէացում»: Հսկում մեր մեռելներուն, եւ հսկում նոր սերունդի պայքարող հոգիին, իսկ երբ կարելի չէ, կայ մէկը երկինքի մէջ որ կրնայ հսկել բոլորին, բայց հասնելու համար անոր պէտք է դառնալ հոգի ու անէանալ:

Տիկին Հայկուհին, թուրքին չյանձնուելու համար ինքզինք սպաննած հերոսի մը կինը, օտարութեան մէջ ուրիշներու տունները մաքրելով մեծցուցած է իր մէկհատիկ զաւակը, որ արդէն օտար աղջկան հետ կ'ապրի, հազուադէպօրէն կու գայ մօրը քով, երբ անօթի է կամ հիւանդ, ծեծով կը խլէ մօր ձեռքէն անոր լումաները, զայն ենթարկելով անօթութեան, յաճախ զայն անարգելով ուրիշներու առջեւ, կը վշտացնէ մինչեւ այդ տարիքը իրեն համար աշխատող պատուաւոր մայրը, որ ամուսնոյն յիշատակը կը պահէր հաւատարմութեամբ: Արձակագիրը ականատես կ'ըլլայ մօրը խոշտանգումին, երբ զաւակը ոչ միայն մարմինը կը սեւցնէ ծեծի

39 Նոյն, էջ 8:

40 Նոյն, էջ 17:

41 Նոյն, էջ 18:

տակ, այլև բռնացքով աչքը կը հարուածէ, արիւնելով արդէն լացէն զատ ուրիշ բան չտեսած մօր աչքը...: Ինչպէ՞ս չփափաքէր արձակագիրը անէանալ այս ցաւերուն ի տես, մանաւանդ երբ ձայնը կը շարունակէ *«որ հոն է մեր իրական կեանքը. մեր ապրումները, մեր աշխատանքները, մեր վայելքները ոչինչին մէկ մասն են՝ այն իրական եւ հեռաւոր կեանքին, որ կ'աշխատի, կը հսկէ, կը պարտաւարտի մեր ընդգրկած եւ սիրած նպատակներէն քարքեր բանի մը»*⁴¹:

42 Նոյն, էջ 19:

Բայց ո՞վ է որ կը յանձնուի անէացման, ճիշդ էր որ ան ամէնէն դիրքին միջոցն էր, բոլոր անլուծելի հարցերէն, վիշտերէն, կարօտներէն ազատելու, ինչպէս ըրած են շատ մը մտաւորականներ, բայց ըստ Սարաֆեանի քաջութիւնը անոր մէջ չէր: Այդ պարտականութենէ խուսափելու ամէնէն աժան միջոցն է: Քաջութիւնը գոյատեւելով, տանջուելով, պայքարելով բոլոր հարցերը լուծելն էր, եթէ չլուծուէին իսկ, նուազագոյնը քայլ առ քայլ անոնց հետ մնալ, հսկել, որ աւելի չխորանան վիշտերը, անդիմադրելի կացութիւնները: Ան համոզուած իր այս տեսակետին, կը նախընտրէ մնալ ու հսկել հայու վայել քաջութեամբ, քան անէացմամբ տիրանալ իր երագներուն ու կարօտներուն. *«կը սուրար սիրտս. փրկելի մը պէս իր չարչարանքներէն ու անչնական հրդեհներէն վերածնիլ ուզող հոգիի մը հեղքերը, որքան կ'առաջանար այնքան կը թեթեւանար... այնքան աւելի կը խաղաղէր»*⁴²:

43 Նոյն, էջ 65:

Ասոնցմէ զատ կար ինքնասիրութիւնը, որ կրնար անէացման գաղափարին յաղթահարող մղիչ ուժը դառնալ, նաեւ յոյսը, ամէն սպասումէ ետք լոյս գտնելու. ահա թէ ինչպէս պիտի պատասխանէր ունայնութեան եւ անէացման գաղափարախօս՝ իր ենթագիտակիցին. *«Պիտի սպասեմ, որովհետեւ սպասում մըն է կեանքը, մեծ եւ դժնդակ հսկում մը: Պիտի սպասեմ, մինչեւ որ ծերանաս, այնքան հեղաքրքիր եմ քու վերջնական արտայայտութեանդ: Պիտի նայիմ, պիտի նայիմ շարունակ, այնպէս որ կարենամ տեսնել քեզ երկար ապրելն դեռ՝ գոնէ, մեր բաժանումէն վերջ: Կը սիրեմ քեզ եւ միայն քեզ է որ կը սիրեմ, որովհետեւ կեանքն ես դուն, գոյութեանս ապացոյցը, ամբողջ տիեզերքի մը շրեմարանը... վեր ես դուն ինծի համար, վեր ամէն բանէ: Ո՞վ է որ չի սիրեր ինքզինքը, մօտեցիր, ով կարող է ինէ զայր հասկնալ քեզ, միացիր ինծի, ոչ մէկ պարտար թող մնայ քու եւ իմ միջեւ»*⁴³: Գրողը վերլուծելէ ետք անէացման ձգտումին դրդապատճառները ու հետեւանքները, կ'որոշէ հսկումով յաղթել, որովհետեւ իր պարտականութեան գիտակից հայ մտաւորականն էր:

ՎԱԽԸ ԱՐՄԱՏԸ ԼԻՆԵԼՈՒԹԵԱՆ

«Ապրած հասած եմ տեղ մը, ուր պէտք է քակուիմ այլեւս գերութեան բոլոր կապանքները»⁴⁴: Ի՞նչ բանի գերին էր Սարաֆեան, ինչէ՞ն կ'ուզէր ազատիլ, ի՞նչն էր որ շարունակ անհանգիստ կ'ընէր զինք: Յաճախ կը հանդիպինք վախի զգացումին: Վախ՝ միակութենէ, ծուլումէ, պարտականութեան թերացումէ. ձեռով մը իր այս վախերուն գերին դարձած էր ան, եւ կ'ուզէր ազատիլ անոնցմէ: Այս հոգեվիճակը լաւագոյնս դրսեւորուած է «Եղիր» արձակին մէջ, զոր գրած է իր հասուն տարիքին, երբ ալ կ'ուզէր ձերբազատիլ տկարութեան ամէն զգացումէ ու զգալ որ իր մէջն ալ կայ մեծութիւն մը եւ «կը զգամ զիս Արարիչն ու տիեզերքը իմ մէջս պարփակող մեծութիւն մը, երբ կը համարեմ զիս անոնցմէ վեր բան մը, զօրաւոր ու ամենակարող կը գտնեմ զիս»⁴⁵, բայց այդ զգացումին զուգահեռ չ'ուզէր իսկապէս այդքան մեծ ըլլալ, որովհետեւ կը զգայ որ ան կաշկանդումներու կրնայ ենթարկել զինք, այդ աստիճան մեծ ըլլալու համար պէտք էր բնագոյնին՝ սեռային վայելքներէն, արուեստի ու սիրոյ երջանկութիւններէն զրկուիլ: Այդ զգացումը «կը մատն(ուիմ)է (զինք) քիչ-քիչ խորունկ յուսահատութեան մը», կ'անդրադառնայ որ իրեն նման տխուր մանկութիւն ու պատանեկութիւն ունեցող անձի մը համար անհրաժեշտ են վայելքի ու երջանկութեան զգացումները, իսկ մեծութիւնը իր օրէնքներուն գերին կրնայ դարձնել զինք, բառ մը որմէ կը վախճար: Ուստի պիտի նախընտրէր ըլլալ մեծութիւն մը իբրեւ մարդ, հայ ազգին վայել, արժանի ՀԱՅ մարդ:

Վախը կ'արտայայտուի. «Կը սաստկանայ վախը: Անսահման վախ մը մանկութեան, որ կը մեծցնէ ամէն արար, զանազները կը վերածէ հրէշներու: Դաժան ու սհաբեկիչ սարսափ մը մանկութեան օրերուս պէս: Լուռ սահմնկում մը՝ անցեալին առջեւ: Սարսափ մը գալիքէն, մարդերէն ու երկիւնքէն... վախ մը բոլոր սխալներէս զորս կրնամ գործել տակաւին... բոլոր չարիքներէն, որոնցմէ զգուշացած եմ միշտ...»⁴⁶: Վերլուծելով այդ զգացումը, կ'ըսէ. «Գիտեմ թէ թշուառութիւն մըն է այս վախը, բայց գիտեմ նաեւ անհիկա արմատն է ամէն բանի: Ան աղբիւրն է քաջութեան եւ մեծութեան»⁴⁷: Այս արդէն ինքնին վախի փարատումն է, որ տեղի պիտի տայ, աւելի խորունկ մտածելու իր հոգիին անհանգստութեան դրդապատճառներուն մասին, եւ կ'ենթադրէ թէ անպայման ցանկութիւն մը, ձգտում մը կայ իր ներսիդին, բայց որովհետեւ ըստ գիտութեան մարդոց կարելիութիւնները կու գան արգանդէն, այ-

44 Նիկողոս Սարաֆեան, «Եղիր», «Նալիւրի», Պէյրութ, 1948, էջ 513:

45 Նոյն, էջ 515:

46 Նոյն, էջ 515:

47 Նոյն, էջ 515

48 Նոյն, էջ 516:

սինքն սահմանափակ է մեր պատասխանատվությունը, այդքան միայն որքան կրնանք, մինչ այս անգոր մխիթարություն մը կը սեպտե՛ Սարաֆեան, որովհետեւ կը զգայ ու զիտէ որ ինք պատասխանատվություն մը ունի, ու կը հարցնէ՝ դարձեալ վախով. «Ո՞վ է որ կ'ուզեն ըլլալ միշտ եւ միշտ ու ըլլալ չեն կրնար...»⁴⁸:

49 Նոյն, էջ 518:

Այս կ'անհանգստացնէ Սարաֆեանի հոգին. «Ըլլալ, բայց ի՞նչ», որ կարենայ մարդը պահել արդար ու հոգուով լեցուն: Համոզուած է, թէ պէտք է ըլլան կիրքն ու դառնությունը, ցան ու քէնը, կեանքի պայքարը, որպէսզի ըլլանք լեցուն, առաքաշեռն ու արդար, բայց ինք «խոնջ(է) այս բոլորէն», հանգիստ չի զգար ինքզինք, դեռ կայ անանուն վախ մը, իսկ անդին «եղի՛ր» չայնը ատելի կը հալածէ զինք, մղելով այս անգամ խորհելու թէ «միմակ ես(է) Արլանյանի այս ափին, կը խորհի(ս), մնալ այս մենութեան մէջ՝ ուր միակ հայն ես(է): Մայրդ աշխարհ քերած է քեզ պանդխտութեան ճամբաներուն վրայ: Չունիս հայրենիք, չունիս պարմութիւն, հայրենիքդ կ'ուրանայ քեզ... մոլար ու թափառական ես... կը խորհիս հանգչիլ, կը զգաս քիչ-քիչ սերունդներու կամքը մէջդ...»⁴⁹:

50 Նոյն, էջ 519:

Ի՞նչ ըլլալ. այս վիճակով հանդերձ, ձգտումը կայ լոյս մը ըլլալու եւ լուսաւորելու իր մէջ ապրող հայութիւնը, «որովհետեւ ցեղս եմ(է), իր մաքառումներէն ու վհարութիւններէն վեր եկող իր անսպառ յոյսով: Ունիմ անոր ծարաւը լոյսին»⁵⁰:

51 Նոյն, էջ 519:

Իր հոգիին մէջ վշտոտ ու մութ հայութիւն մը կար եւ այդ էր որ կ'ուզէր՝ լուսաւորել: Կը գիտակցի, թէ կեանքը առասպել մըն է եւ գեղեցիկ է անոր համար, մեր հրճուանքը կու գայ մեր տուայտանքներէն, թէ ուրախութիւնը պտուղն է մեր տխրութեան եւ «վսեմ է հայրենասիրութիւնը երբ միմակ ես Արլանյանի ափին, եւ կը զլանան քեզի հայրենական հողդ, կ'ուրանան քեզ իբրեւ հայ եւ կը սրբապաշտ վերջին այդ հայութիւնը պաշտպանել սրահակներու դէմ»⁵¹: Կ'որոշէ՝ «երբ փակուին բոլոր դռները առջիդ, կը պահես միշտ բաց՝ անոնցմէ մէկը: Ան լուսաբացն է ամբողջ էութեանդ: Ազգութիւնդ է: Պիրի օրհնես նոյնիսկ քեզ հալածողները, ազգակից կամ օտար, անոնք որ իրենց խեղճութեամբ, սնամարտութեամբ, չարութեամբ եւ դաժանութեամբ կ'արթնցնեն այդ հայութիւնը մէջդ»⁵²:

52 Նիկողոս Սարաֆեան, «Կախ ա ռ օ ա ն ք», «Հայրենիք», Պոսթըն, 1932, Մարտ, էջ 3:

Վախը, որ կը զինք մղէր լինելութեան, հայ ժողովուրդի վիճակն էր՝ բաժնուած ինչպէս հին օրերուն, հռոմէացիներու եւ պարթեւներուն միջեւ, այսօր ալ՝ Սփիւքի եւ հայրենիքի: ճակատագիրը հայուն կարծէք սկիզբէն վճռուած է, ըլլալ միշտ բաժնուած երկուքի, ապրիլ վախով՝ յանկարծ մէկ թելը կորսնցնելու վտանգով: Ասոր ի պատասխան, ինք կը գտնէ «եղի՛ր» հնչող ձայնին իմաստը. հայ ըլլալ նոյնիսկ հոն «ուր միակ հայն ես»: Այս գիտակցութիւնը ամե-

նամենձ կամքի արտայայտիչն էր, որ կրնար ազատել Սարաֆեան հայր, օտար զգացումներու գերութենէն, յաղթահարել վախը, ծնունդ տալով լինելութեան անընկճելի քայլին: Այս թեման կը գտնենք նաեւ երկու այլ արձակներու մէջ, «Կախարդանքը» եւ «Ողբը»: «Կախարդանքը» ինչպէս յիշած եմ «Ն. Սարաֆեանի կեանքը» բաժնին մէջ. պատանի Սարաֆեանի առանձին քալելով ճամբորդութիւնն դէպի Վառնա:

Հոս նկարագրած վախը, տարբեր է, քան ինչ որ էր հասուն տարիքին: Տասնըվեց տարեկան պատանին, սահմանին վրայ, ֆրանսացի զինուորներու կողմէ խոշտանգուելէ եւ բանտարկուելէ ետք, ռուս զինուորի շինէլ հագած կը հասնի սրճարան մը, ուր կայ թուրք մը. պարտասուն պատանին աթոռներուն վրայ կ'ուզէ քնանալ, մինչ «*չար մտածումներ կը թեւածէին, կը շարժէին, կերպարանք կ'առնէին շուրջ(ս)ր: Օտարութիւնը, դրամի պակասը, անցագրի եւ ճամբու արգելքները կը հալածէին զիս(զինք), մինչ արդէն մխրճած դիւային, կախարդական ոլորտներու մէջ՝ կը տառապէր հոգիս(ն) ու ահաբեկիչ կը գտնէր ամէնէն անմեղ տեսարաններն անգամ: Կը չարչարուէր հասարակ բաներու շփումէն վախճալով աղարարուիլ կամ ստրկանալ: Կը վախճալի կեանքէն՝ քաշած ու տեսած ըլլալով ռուսական յեղափոխութեան զարհուրելի օրերը, կը սիրէի կեանքը, իմս մանաւանդ...*»⁵³:

Պատանի Սարաֆեան երկար ճամբորդութենէ մը անօթի ու հիւծած հասած էր ահաւոր զգայնութեան մը. սրճարանի գոց փեղկերուն ետեւէն անցնող ամէն մէկ քայլ կը հարուածէր իր սիրտը «որ շղթայուած թռչունի մը պէս կը թեւածէր ու կ'իյնար վերստին իր խաւար աթոռին վրայ»: Իր անձով ներկայացուցած է թուրքին հանդէպ պատանի հայուն հոգեվիճակը, որ հակառակ իր վատառողջ վիճակին, կը մերժէ թուրքին հրամցուցած գաւաթ մը թէյը, աչքերը սեւեռելով անդին դրուած կացիներն, զգացնելով թուրքին իր գեղին ատելութիւնը անոր հանդէպ:

Վախը աւելի կ'ամրացնէ իր մէջ հայութիւնը, քունը աչքերը կը տանի, բայց ինք յամառօրէն կ'ուզէ բաց պահել զանոնք եւ հսկել ինք իր վրայ: Ինչպէս կը տեսնենք հզօր կամք կը ծնի վախէն դարձեալ, սակայն տեսնելէ ետք թուրքին բացառաբար խնամեալ մօտեցումը, վախը կը զիջի քունին հսկայ տառապանքէ ետք: Տարիներ ետք, իր այդ տառապանքը յիշելով եւ բաղդատելով այդ օրերը իր ներկային, Սարաֆեան հարց պիտի տայ. «Ինչո՞ւ արդարեւ, չկրնամ քնանալ հիմա, որ յոգնած եմ նոյնքան եւ որ ոչ մէկ սարսափ կը չարչարէ զիս»⁵⁴: Պարզ է, որ հոս նոյնիսկ կ'ուզէ շեշ-

53 Նոյն, էջ 8:

54 Նոյն, էջ 8:

55 Նիկողոս Սարաֆեան, «Ողբը», «Նայիրի», Պեյրուք, 1947, էջ 247:

տել հոգեկան տագնապը, ցաւը որ կը գտնուէր իր մէջ եւ պիտի ըսէ «*ես պիտի չկրնամ փոխուիլ, վայելել խաղաղութիւն մը: Գերին եմ ես օրար եւ անծանօթ ուժի մը: Կախարդուած եմ ես...*» ակնարկելով իր ժողովուրդին լուսաբացը տեսնելու եւ ազգին մէջ լոյս մը դառնալու կախարդանքի տագնապին:

«Ողբը» վախը յաղթելու մէկ այլ տարբերակը ցոյց կու տայ, կը նկարագրէ պատերազմի ընթացքին իւրաքանչիւր ռումբի պայթումէ ետք, մահ սպառնացող վախին ի հակադրեցութիւն ֆրանսուիի մը սիրոյ երգի մը մեկնաբանութիւնը: Այս արձակին մէջ ան կը փոխանցէ կեանք խորհրդանշող սիրոյ ազդեցութիւնը, լինելութեան ձգտումը եւ կամքը ունենալու գծով: Վախէն յառաջացած այդ երգը մշակոյթն է եւ մարդկային յառաջադիմութիւնը, յոյսի մը յուզիչ ձայնը, ողբը մարդկութեան, լացը արարք դառնալու անկարողութեան, տրտունջը ներքին արքային ազատագրուելու անգորութեան, կարօտը՝ կեանքը փոխելու եւ տեսիլին հասցնելու որոնումը նիւթին եւ հոգիին միջեւ, հոգիէ հոգի, մարդէն Արարիչ: Համոզուած է, որ կան երգեր, որոնք կ'ըսեն, թէ պէտք է հակադրել իրականութեան եւ ոչ թէ երեւոյթներուն: Այսինքն՝ ընդունիլ առօրեան իր պատրանքներով եւ չմտածել երեւակայական իրականութիւն մը, որովհետեւ կը մեռնին անկէ անդին արուեստն ու գեղեցկութիւնը. «*Երեսոյթ է լոկ կեանքն, ըլլամ լի վեհ ու հեզ / Ծըշմարտութեամբ մեր վերացման...*»⁵⁵: Կը հաւատար, որ վախէն կրնար ծնիլ լինելութեան ձգտումը, որ կրնայ բարձրացնել անձնականութիւնը, որ պէսզի առանց ստրկանալու, խաբուելու, մեռնելու հոգեպէս, կարենան ըլլալ հաւաքականութեան մէջ եւ իրենք իրենց մէջ: Զգայուն ու խելացի: Վերանան բոլոր անարդարութիւնները եւ էակաները իրապէս ապրին, ըլլան ազատ ու ստեղծագործ:

Սարաֆեանի գրիչը բազմակողմանի է, տիրական են ազգասիրութիւնը եւ հայրենասիրութիւնը: Նոյնիսկ երբ բնութիւնը կը գովերգէ, ալիքներուն, ժայռերուն ու սառոյցներուն ընդմէջէն կը տեսնէ հայը, անցեալը, ազգային վիշտը, ներկան ու ապագան, բնութեան լռութենէն ետք տեղի ունենալիք երկունքը, որ «*պիտի կատարուէր, բոցերու, լոյսերու ու ծուխերու ետին, գուշակութիւններու եւ յայրնութիւններու մթնոլորտի մը մէջ*», անշուշտ դրախտին մէջ «*ուր կ'երեսային անհամար ծառերու ուխտագնաց քափօրներ, ճիւղներ՝ ճերմակ նժոյգներու պէս, գերբնական դարաւանդներ՝ ուր հրեշտակներ կը քալէին, լուսավառ աշտարակներ ու սանդուխներ*», հոն՝ ուր պէտք էր ըլլալ հայը, իր տառապանքներէն ետք: Կը տեսնէ նաեւ Հայաստան աշխարհի ապագայի երազը,

ուր սերունդները կ'աճին ու կը տարածուին հսկայ ծառերու նման եւ «առասպելական քաղաքի մը պղինձէ պատերը» իրենց շողքը կ'երկարեն ամէն ուղղութեամբ «փռելով հսկայ ստուերներ»: Ան ամէն առիթով կը յիշէ Հայաստանը, իբրեւ հսկաներու տանթէական երկիր, եւ աստուածային սրբութեամբ, վայրագ ու վեհափառ զեղեցկութիւն ունեցող:

Սարաֆեան ներկայ է իր արձակներուն մէջ, յաճախ կենսագրական նոթի պէս. «ՎԷՆԱՆԻ անտառը» եւ «Կախարդանք»ը: Կը փորձէ անցեալի յամառ ու կենդանի վերապրումը, կեանք, փիլիսոփայութիւնը աշխարհէն ու կեանքէն դառնացած գրողի: Երբեմն, ոճի առումով, խորքի պակասով կը ծանրանան տողերը, բայց միտքը լուսաւոր է, խուզարկող ու անհանգիստ հոգիին զգայնութիւնը կը պահէ իր թարմութիւնը, եւ երեսն կը բերէ իր անտաշ ինքնատկութիւնը: ՎԷՆԱՆԻ անտառի առանձնութիւնը կազմաւորեց միտքի իր անկախութիւնը ու ազատութիւնը:

Պէյրութ, 2013

«Այսօրոք օրը ՀԱ-
ՅՈՒ ՄԵ ԵՐԵԱՆ ԵԹԵ ՉՏԵՆՆԵՄ
ԿԸ ԽԵՆԹԱՆԱՄ»

* * *

«Է՛, յենք աճգ ենք... Աս լսկոսե-
րը երկիր ուսին, ՏԵՐ ուսին, ԱՄԱՋ-
ՆՈՐՈՍԵՐ ուսին, ԱՍՈՒՔ ԲՈՂՐՐՆ ԱՂ
ՎԱՂԸ ՄԵՅՄԵԿ ՄԱՐԴ ՊԻՏԻ ՂԱՌ-
ՆԱՆ... ԻՍԿ ՄԵ՛ՆՔ...»

ՍԵՊԱՐԳԻՐ

ԸՆԹԵՐՑՈՒՄԸ ԹԱՐՄԱՑՆԵԼՈՒ ՅԱՆԿՈՒԹԵԱՄԲ

«ՆԱՐԵԿ»Ի ՅԱՆԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1002-էն 2013, Գրիգոր Նարեկացիի «Նարեկ» աղօթամատեանը տակաւին կը մնայ քննարկման, մեկնաբանման եւ միաժամանակ հիացման գրական կոթող մը: Իրականութիւն մը, որ միայն հանճարի մը արգասիքը կրնայ ըլլալ: Իսկ մինչեւ ներկայ թուական, «Նարեկ»ի գոյատեւման, յատկապէս քննարկման նիւթ դառնալու իրականութիւնը, անպայմանօրէն մտածել կու տայ գործին այժմեական ըլլալուն մասին: Այլ խօսքով, «Նարեկ»ը գլուխ գործոց ըլլալէն անկախ, եթէ անոր մէջ այժմեականութիւնը պակսի, ապա նաեւ ան կը դադրի համբաւի ու հիացումի արժանանալէ: Թէ ինչպէ՞ս եւ ո՞ր կը կայանայ գործին այժմեականութիւնը, աւելի ուշ պիտի անդրադառնանք:

Կ'արժէ նկատել տալ «Նարեկ»ի այլ մէկ յատկութիւնը, անոր մեծ ժողովրդականութիւնը: Այնքան մեծ համակրանք գոյութիւն ունի «Նարեկ»ի եւ անոր սուրբ հեղինակին հանդէպ, որ հաւատացեալի, թէ ոչ հաւատացեալի, ուսեալի, թէ անուսի մօտ կարելի է գայն գտնել: Շատերու ներշնչարան դարձած է «Նարեկ»ը եւ անբաժան ուղեկից: Այլ խօսքով կարելի է պատկերացնել, որ «Նարեկ»ը իր առջեւ խոնար-



հելու ամպիոն մը ունի: Ամէն անձ, երբ ուզէ մօտենալ, սիրոյ ճնշումին տակ կը խոնարհի, հակառակ այն իրողութեան, որ «Նարեկ»ը ունի բարձրորակ ոճ, լայն ու խորհրդաւոր երեւակայութիւն եւ մեծ թիւով ընթերցողին անձանօք բառեր:

Յաճախ կը մտածենք, թէ արդեօ՞ք ս. Գրիգոր Նարեկացի կը գիտակցէ՞ր, որ իր աղօթքներու հաւաքածոն, կամ ի

խորոց սրտե բխած «խօսք ընդ Աստուծոյ»ն, դարերու երկար տետողութեան վրայ տարածուած, հսկայ ժողովրդականութեան արժանի պիտի ըլլան եւ կամ իրենց այժմեականութիւնը պիտի պահեն մինչեւ ԻԱ դար: Ո՞ր է այս մեծ յաջողութեան գաղտնիքը եւ ո՞ր եմ «Նարեկ»ը վեր պահող արժէքները:

Յստակ երեւոյթ է «Նարեկ»ի երկու ակնյայտ յատկութիւններն ու արժէքները,- գրականն ու հոգեւորը,- որոնք մեզի առիթ կու տան այժմեականութիւնը փնտռել երկու անդաստաններու մէջ՝ առանց իրարմէ անջատելու: Ան ներդաշնակ կերպով կը համատեղէ գրական եւ հոգեւոր ապրումները, որոնք զիրար ամբողջացնելով աւելի գեղեցիկ ճամբորդութեան մը կը վերածեն դէպի երկնայինը ընթացքը:

Աղօթքը ինքնին պարան մըն է, որ մարդը կը կապէ Երկնաւորին: Մանաւանդ, երբ մարդ կը յոգնի երկրայինէն ու նիւթականէն. կ'ուզէ եւ կը փնտռէ ձեւ մը շօշափելու համար երկնայինը: Մարդ կ'ուզէ թռիչք մը, որ կարենայ զինք հեռացնել տաղտուկէն եւ ապրիլ խաղաղութիւնը: Ան կ'ուզէ ուժ մը, որ յաջողի զինք հոգեպէս զօրացնել եւ պատրաստել կեանքի մարտահրաւերներուն: Ուստի, աղօթքը այս բոլորին խաչմերուկն է, որ նաեւ երկար ընթացք մը կ'ենթադրէ: Եւ «Նարեկ»ը այդ ընթացքն է, որ քայլ առ քայլ եւ աստիճան առ աստիճան մարդը կը մօտեցնէ Բարձրեալին՝ իր 95 աղօթքներով:

Ի՞նչ է այս աղօթական ընթացքը, գոր ս. Գրիգոր Նարեկացին ստեղծած է:

Պատկերացնենք զսպանակի օրի-

նակը: Ան եթէ լաւ չարկուի ինքն իր մէջ, չի կրնար թռիչք առնել. նոյնն է աղօթքի երեւոյթը. եթէ ոեւէ մէկը լաւ թռիչք մը պիտի ուզէ ունենալ դէպի աստուածային եթերներ, պէտք է ինքն իր անձը «ճնշում»ի ենթարկէ. այլ խօսքով՝ սխալները ճանչնալ, խոստովանիլ ու զղջալ, ինչ որ «Նարեկ»ի մէջ լայնօրէն կը գտնենք: Ան իր խոնարհ հոգիով, աղօթքներու միջոցաւ, մարդկային մեղանշող իր անձը կը դնէ «ամէնուն կենդանարար Աստուծոյ եւ շնորհաձիր բարերար»ին դիմաց: Ան կ'ուզէ ինքզինք մուստացնել եւ իր փոքրութիւնը ցոյց տալ, իսկ միւս կողմէ գովերգել եւ մեծարել Աստուծոյ սէրն ու ողորմութիւնը, որովհետեւ եթէ մէկը իր անձին փոքրութիւնը չտեսնէ, պիտի չկարենայ ըմբռնել Աստուծոյ մեծութիւնն ու զօրութիւնը: Հետեւաբար, իր աղօթական ընթացքը կը սկսի իր մարդկային տկարութիւնները ճանչնալով, խոստովանելով եւ անոնց մէջ զղջում դնելով:

Ճիշդ է, որ ս. Գրիգոր Նարեկացին ընդհանրապէս իր աղօթքներն ու խօսքերը կ'ուղղէ ուղղակիօրէն Աստուծոյ, բայց ան երբեմն տարբեր ձեւ կ'որդեգրէ խոստովանելու կամ իր մարդկային տկարութիւնը ճանչնալու համար: Ան փոխանակ խօսքը Աստուծոյ ուղղելու՝ կը սկսի ինքն իր անձին հետ խօսիլ: Օրինակ մը պարզելու համար, կարդանք բան Բ.-ը.

«Ու հիմա, ո՛վ իմ յանցաւոր անձս, որովհետեւ շրթունքով եւ խօսքով կը կանչես բարձրեալն Աստուծոյ, որ գործերով միայն կը գրաւուի եւ ստեղծաբանութեամբ չի կաշառուիր, որովհետեւ սիրտդ միշտ դէպի Եգիպտոս ուղ-

ղած ես, այս մասին քեզի նմանագոյն եւ յարմարաւոր ի՞նչ օրինակ դնեմ հոս» :

Կամ՝

«Ուստի, ա՛լ միտքս դրի, ո՛վ անպիտան անձս, խօսքի քարերով անողորմաբար քարկոծել քեզ, ինչպէս վայրենի գազան մը» :

Ինքն իր անձին հետ խօսելու այս ոճը, աւելի մտերմութիւն կը ստեղծէ, որովհետեւ ամէն մարդ միայն ինք իր անձը լաւ կը ճանչնայ եւ կրնայ ամենայն անկեղծութեամբ արտայայտուիլ: Ան նաեւ այս ձեւով ընթերցողին առջեւ դուռ մը կը բանայ, որպէսզի ընթերցողը ինքն իր անձին հետ մտերմութեան մէջ մտնէ եւ ինքզինք Աստուծոյ դիմաց դնէ:

Երկրորդ երեւոյթը վերեւ յիշուած տողերուն մէջ՝ իր խիստ վերաբերումն է իր անձին հանդէպ: Այնքան վարկաբեկիչ խօսքեր կ'ուղղէ իր իսկ անձին հանդէպ, որ նաեւ դաստիարակիչ պատգամ մը կը կրեն: Իմաստուն խօսք մը կ'ըսէ. «Ուրիշներուն ներէ՛ իրենց յանցանքները, բայց խի՛ստ եղիք քեզի դէմ, եւ դուն քեզի ո՛չ մէկ բան ներէ»: Եւ ահա այս խօսքն է, որ սուրբը կ'իրականացնէ՝ Աստուծոյ հանդէպ իր նախանձախնդրութեան պատճառով: Ան չ'ուզէր հանդուրժել մարդկային տկարութեամբ գործած իր մեղքերը եւ ամէն գնով ինքզինք կը վարկաբեկէ՝ չկրկնելու նպատակը ունենալով. այլապէս գիտենք, թէ Աստուծոյ մեծ սէրը պատրաստ է ներելու զոջացող սիրտին ու ներողութիւն խնդրող անձին: Նարեկացիին համար, իր գործած մեղքերը այնքան մեծ են, որ իր իսկ բառերով՝ «[իր] մեղքերու[ն] բացած վերքը ա՛լ



իրեն նմանը չունի...» :

Իսկ միւս կողմէ, ինքզինք վարկաբեկելու կողքին ուրիշ բեւեռ մը կը բարձրանայ, Նարեկացիին իր աղօթքներուն մէջ գովերգութեան ու մեծարութեան ճամբով կը ներկայացնէ Աստուծոյ սէրն ու բարութիւնը: Հայերէն հարուստ բառապաշարի օգտագործումով, ան հարազատօրէն կը ներդաշնակէ Աստուծոյ սիրոյ եւ ողորմած պատկերը: Իրականութիւն է, թէ հարազատութիւնը կը ծնի հոգիէն, սրտէն, առանց յաւելեալ ճիգի: Աւելի յստակ տեսնելու համար՝

«Ամէն բանի տէր Աստուած, ամէն բանի մէջ զօրաւոր, անպարագիւր եւ անբովանդակելի տեղ ամէնքին. ամբողջ իսկութեամբդ ամէնուն մօտ. ո՛չ մէկ վայրի մէջ չես սահմանափակուիր Դուն, բայց առանց Քեզի ալ տեղ մը

չկայ. առանց Քու ծագումիդ՝ ո՛չ մեկ բան լուսաւոր չ'երեւիր»:

«Նարեկ»ը լաւ միջոց է զԱստուած ճանչնալու: Բնականաբար ոչ ոք կրնայ իր մարդկային բնութեամբ ամբողջապէս ճանչնալ զԱստուած, բայց մարդկային կարողութեան սահմաններէն ներս, գեղեցիկ առիթ մըն է հրաշակերտ բառամբերքէն անդին տեսնելու Աստուծոյ կերպարը: Իսկ այս մարզին մէջ յաջողութիւն գտնելու պատճառը Նարեկացիին առանձնական ճգնութիւնն ու Լոյսի որոնումն է: Մարդ որքա՛ն աղօթական, ապաշխարութեան ու հոգեւոր կեանք պէտք է ունենայ, որ կարենայ հարազատութեամբ ներկայացնել Աստուծոյ Լոյսը՝ լոկ բառերով: Ինչպէս ուրիշ ճգնաւորներ եւ սուրբեր եւս, կրցան իրենց առանձնութեան մէջ լաւապէս ճանչնալ Արարիչը, բայց զԱստուած ուրիշներու ճանչցնելու շնորհքը ունեցողները քիչ են, եւ անոնցմէ մէկն է ս. Գրիգոր Նարեկացին:

«Նարեկ»ի ուրիշ յատկանշական կէտերէն են իր աղօթքներուն մէջ նշուած աստուածաշնչական մէջբերումները: Յատկանշականը աստուածաշնչական համարները, դէպքերը կամ անձերը մէջբերելը չէ, որովհետեւ բազմաթիւ են այն գիրքերը, որոնք Աստուածաշունչի համարներ ունին, այլ՝ հեղինակին որդեգրած մէջբերելու ձեւը: Այլ խօսքով՝ ան չակերտներու մէջ առնելով բառ առ բառ չի մէջբերեր Աստուածաշնչական համարներ, այլ Աստուծոյ հետ խօսելու ժամանակ, կը յիշէ Աստուածաշունչէն անձեր եւ կամ դէպքեր՝ զուգահեռ բերելով իր կեանքը: Մէջբերենք.

«Այն նմանութիւնը զոր, Եսայի մարգարէն պարսիկ հրոսակներուն ձեռքով Երուսաղէմի եւ Սամարիոյ յանկարծադէպ կործանումը նկարագրելու համար գործածեց, սխալ պիտի չըլլար կրկնել իմ հոգիիս խորտակումը բացատրելու համար»:

Որովհետեւ Նարեկացին իր մարդկային տկարութիւնը կ'ուզէ պատկերաւոր ցոյց տալ, անոր համար օրինակներ կը բերէ Աստուածաշունչէն, որ նաեւ ընթերցողին առիթ կու տայ նախ սուրբին զգացած ապրումները պատկերաւոր կերպով ապրելու, ապա Աստուածաշնչական դէպքերուն եւ անձերուն մասին ծանօթութիւն մը կազմելու համար: Իսկ աւելի՛ն, հեղինակը ցոյց կու տայ Աստուածաշունչին մէջ գրուած դէպքերն ու անոնցմէ եկած պատգամները դիտելու եւ ըմբռնելու ձեւը: Ան ցոյց կու տայ ընթերցողին Աստուածաշունչը հայելի դարձնելու կերպը, որ իւրաքանչիւր հաւատացեալի պէտքն է: Անոնք որոնք Աստուածաշունչը լաւապէս ճանչնալու սէրը ունին, «Նարեկ»ը այդ հետաքրքրութիւնը կը ստեղծէ: Ծիշդ է, մէջբերումներուն քով չէ դրուած գիրքին անունը, գլուխն ու համարը, ինչ որ սովորաբար կը կատարուի, բայց համարին տեղը թուագրուած ու գրքին ետեւը նշուած է:

Վերջապէս, «Նարեկ»ի լեզուն, լեզամտածողութիւնը եւ ոճը իւրայատուկ եւ քաշողական են: Այնքան բառամբերքի շքեղութիւն եւ հաճելի ոճ մը ունի «Նարեկ»ը, որ ինքնաբերաբար հարկ եղած մթնոլորտը կը ստեղծէ: Յիշենք իր գրական մօտեցումները իրենց օրինակներով:

Տաղերգու մը չի կրնար խուսափիլ քնարական լարերով Լոյսը գովերգելէ եւ փառաբանելէ: Անպայման, բնութիւնը իր բոլոր տարրերով տեղ պիտի գտնէ հեղինակի գիրին մէջ, յատկապէս երբ ան բնութեան ծոցէն կը դիմէ Լոյսին (նկատի ունիմ վանքին դիրքը լեռներուն վրայ).-

«Եթէ փուշերէն քաղցր պտուղ արտադրուեցաւ, որչա՞փ եւս աւելի կեանքի ծառէդ պէտք է ելնէ անմահութեան ճաշակ...» :

Լսենք զինք.

«Ես, ժանտագործ եւ արժանապատիժ օտարական, անաստութեան ընթացքովս Բելիարի գունդը աճեցուցի. իմ ծուլութեամբս, գարշելի դեւերուն եւ ճարտար եւ խաբերայ խաղացողներուն առիթ շնորհեցի կայթուկաքաւի եւ ոստոստումի ձեւերուն»:

«Ամէն բանի տէր Աստուած, ամէն բանի մէջ զօրաւոր, անպարագիր եւ անբովանդակելի տեղ ամենքին. ամբողջ իսկութեամբդ ամենուն մօտ...»:

Առանձնայատուկ ոճ մը ունի Նարեկացին, զոր ամէն ընթերցող կը նշմարէ եւ կը տպաւորուի անկէ: Այդ ոճն է՝ ածականներու կցորդութիւնը: Այնքան գեղեցիկ կերպով կը կցորդէ բառերն ու ածականները յաջորդաբար, որ շէնք

շինելու պէս, քար առ քար, ընթերցողի սրտին մէջ սիրոյ աստիճաններ կը քարձրացնէ առ Աստուած.

«Ահեղ փառաւորութիւն, անհասութեան անուն, մեծութեան կոչում, անբաւութեան ձայն, անքննելի իսկութիւն, անմատչելիօրէն հեռաւոր, անընդմիջելիօրէն մերձաւոր, հեծութեան տեսնող, թշուառութեան նկատող, տրտմութեան այցելու, անճառութեան ամենաբոյժ ծագող, մխիթարութեան Աստուած»:

Ահա այս բոլոր յատկութիւններն են, որոնք կը պահեն գիրքին այժմեականութիւնը: Մինչեւ այն ատեն, երբ մարդը Աստուծոյ մօտենալու, ճանչնալու եւ ապրելու իղձը ունի. «Նարեկ»ին պէս ուժեղ աղօթքներ կրող գիրք մը կարելիութիւնը ունի լաւապէս այդ թռիչքը տալու: «Նարեկ»ը այդ գաղտնի ուժը ունի, մարդը միացնելու Աստուծոյ՝ հզօր կապով մը: Հետեւաբար «Նարեկ»ի աղօթքները վերծանելու համար էջեր կամ հատորներ բաւարար չեն: «Նարեկ»ը լայն եւ խոր հոգեկան ապրումներու մատեան է. որքա՞ն մարդ խորանայ, տակաւին աւելի խոր խորհուրդներ կան, ուր կ'արժէ սուգովիլ:

Լիքանան

ՅԱԿՈԲ ՊԱԼԵԱՆ

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

ԱՄՊՐՈՉ ՊԻԵՐՍ ԵՒ ՅԱԿՈԲ ՊԱՐՈՆԵԱՆ
ՆՈՅՆԱՏԱՂԱՆԴ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅՆԵՐ

Մեծ են այն ժողովուրդները որոնք կը տեսնեն, կը չափեն եւ կ'ըսեն իրենց ծիծաղելիութիւնը: Նաեւ այն գրողները՝ որոնք աչքի կապանքով չեն ապրիր եւ «իրենց լեզուն իրենց գրպանը չեն դնել», ինչպէս կ'ըսէ ֆրանսական առածը:

Ֆրանսական հրատարակչութիւն մը լոյս ընծայեց ամերիկացի լրագրող եւ պատմաւածքներու հեղինակ Ամպրոզ Պիերսի (1842-1913) անգլերէն թարգմանուած «Սատանայի Բառարանը» գիրքը: Այս գիրքը արժանացած է բազմաթիւ թարգմանութիւններու եւ հրատարակութիւններու:

Հաճոյքով դարձուցի էջերը այդ գիրքին, յիշելով մեր «Անմահ» Պարոնեանը (1843-1891), կ'ըսենք «անմահ», բայց այլեւս չենք կարդար անոր խորապէս ճշմարիտ եւ հատու ասացուածքները:

Չուգադիպութիւն. երկու գրողները իրարու գոյութենէն ապահովաբար անտեղեակ՝ իսկական ժամանակակիցներ են, ծնած՝ նոյն օրերուն. բաղդատել անոնց ծննդեան եւ մահուան թուականները:

Շատ մը բաներ կը թարգմանենք սնապարծութիւններու գոհացում տալու համար: Յակոբ Պարոնեան, իր երգիծական իմաստութեամբ անդրազգային դէմք է: Կարդացած ենք, կամ բեմի վրայ տեսած «Ազգային Տոջեր»ը, «Աբիսողով Աղա»ն, «Ատամաբոյժն Արեւելեան»ը, «Հոս հոսի ձեռատետրը», եւ այլ գործերը:

Դժգոհութիւն զգացի երբ Ամպրոզ Պիերսի «Սատանայի Բառարանը» տուն բերի, գիրք՝ որուն հեղինակը միջազգային ճանաչում ունի, թարգմանուած է տարբեր լեզուներու: Ինչո՞ւ Յակոբ Պարոնեան չի ճամբորդեր միջազգային ուղիներու վրայ:

Ո՞ր ամերիկացին, ֆրանսացին, ճաբոնցին, կամ չինացին, կը ճանչնայ «մեր» Պարոնեանը:

Կը ճանչնան ամերիկացի գրող եւ լրագրող Ամպրոզ Պիերսը: Ան ծնած է Միացեալ Նահանգներու Օհայօ նահանգը: Եղած է ինքնուր: Քաղաքացիական պատերազմին մասնակցած է: «Սատանայի Բառարանը» լոյս տեսած է 1906-ին: Առաջին անգամ ֆրանսերէնի թարգմանուած 1955-ին եւ Ժան Զոքթօ ներածական գրած է:

Մեր մենք մեզի դէմ գործած անարդարութեան (աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել անտարբերութեան մեղքին) դէմ բողոքելու համար, նախ կ'արտագրեմ փունջ մը Յակոբ Պարոնեանի արտակարգ եւ միշտ արդի ճշմարտութիւններէն, որպէսզի բաղդատենք, թարգմանաբար ներկայացնելէ առաջ Ամպրոզ Պիերսի «Սատանայի Բառարան»էն քաղուած «իմաստութիւններ»ը:

Երկու գրողները մեծ են, քանի որ իրենց «իմաստութիւնները» միշտ ժամանակակից են:

Յ.Պ.

Յակոբ Պարոնեան

*Ինչե՛ր կ'ըսէ «Մեր» Պարոնեանը
(Յիշեցման համար՝ գոհարներ)*

- Մեծ անուանց ներքեւ յաճախ պզտիկ բաներ կը պահուին:

- Ո՛վ շողորորթութիւն... ամէն տարիք կը սիրէ քեզ:

- Դժբախտաբար, մեր ազգին մէջ շատերու բարձրանալու գաղտնիքը բնական օրէնքով միայն կը լուծուի: Ծանրերը միշտ գետնաքարշ կը մնան:

- Երիտասարդութեան մէջ սիրելու համար կ'ապրինք, իսկ ծերութեան մէջ՝ ապրելու համար կը սիրենք:

- Երիտասարդ մը կարծելու չէ, որ հաճելի է, այլ կարծելու է, ինչ որ ճշմարտութիւն է, որպէսզի ուրիշները իր վրայ չխնդացնէ:

- Գիտուն ըլլալուն ամէնէն պարկեշտ եւ ուղիղ ճամբան իւր տգիտութիւնն ճանչնալն է:

- Յաւալի է, որ գիտունի գրչով լուծուելիք խնդիրները դերձակի մկրատով կը կտրուին շատ անգամ:

- Շատ անգամ ոչինչ չըսող խօսք մը նշանաւոր մարդու մը բերնէն ելած ըլլալուն համար իբրեւ պատգամ կ'ընդունուի, եւ շատ անգամ նշանաւոր խօսք մը աննշան մէկէ ըսուած ըլլալուն համար կարեւորութեան չ'առնուիր:

- Գիտութիւնը ժամացոյցի կը նմանի. զայն բանեցնելու համար միշտ լարել է պէտք:

- Չկայ մէկը, որ գիտութիւն վաճառող կատարեալ տգէտի մը ըսէ. - «Բարեկամ, դուք բան մը չէք գիտեր, քանի մը բարեկամներէդ քանի մը խօսք սորված էք եւ զանոնք կը կրկնէք միշտ, դուք այդ ընկերութեան մէջ խօսք առնելու իրաւունք չունիք. հրամեցէ՛ք սենեակէն դուրս»:

- Ոսկեղէն դարուն մէջ կաթին քիչ մը ջուր կը խառնէին, տասնըիններորդ դարուն մէջ ջուրին քիչ մը կաթ կը խառնէին :

- Օրէնքները հաստատողները այրերն են, իսկ բարքեր հաստատողները կիներն են:

- Կեղծ բարեկամները արեւու ժամացոյցի կը նմանին. երբ օրը պայծառ է՝ կը տեսնուին, երբ ամպոտ է՝ չեն տեսնուիր:

- Պարզութիւնն ու ճշմարտութիւնը այնպիսի գեղեցկութիւններ են, որ ամէն բանի մէջ կը փնտռուին ամէն բանէ առաջ:



Յակոբ Պարոնեան



Ամպրոզ Պիերս

Ամպրոզ Պիերս (Ambrose Bierce)

*Ինչե՛ր կ'ըսէ Ամպրոզ Պիերս
(Երգիծողի աչքը եւ լեզուն ընկերային ախ-
տերու դարման են)*

- Արտագաղթող. Անձ՝ որ կը մտածէ որ եր-
կիր մը միսէն լաւ է:

- Քաղաքավարութիւն. Կեղծաւորութեան
ամէնէն ընդունելի ձեւը:

- Սէր. Ժամանակաւոր խենթութիւն զոր
կարելի է բուժել ամուսնութեամբ կամ հիւան-
դը հեռացնելով անհանգստութեան պատճառ
հանդիսացող ազդեցութեան դաշտէն:

- Հակակրանք. Չգացում ներշնչուած բա-
րեկամի մը բարեկամէն:

- Դաշնակցութիւն. Միջազգային քաղաքա-
կանութեան մէջ երկու գողերու միութիւն,

որոնց ձեռքերը այնքան խոր գացած են իրարու գրպանները, որ իրենց համար շատ
դժուար է առանձին փորձուիլ երրորդով մը:

- Իրականացում. Ճիգի վերջը եւ սկիզբը ձանձրոյթի:

- Ծանօթ մը, անձ՝ զոր բաւական լաւ կը ճանչնանք անկէ փոխ դրամ առնելու հա-
մար, բայց ոչ բաւարար չափով՝ անոր փոխ տալու համար:

- Ժուժկալ. Տկար անձ՝ որ տեղի կու տայ փորձութեան առջեւ ինքզինքին մերժե-
լով հաճոյք մը:

- Սահման. Քաղաքական աշխարհագրութեան մէջ երեւակայական գիծ մը երկու
ազգերու միջեւ, որ կը զատէ մէկուն երեւակայական իրաւունքները միւսին իրա-
ւունքներէն:

- Համբերութիւն. Յուսահատութեան կրտսեր ձեւը՝ ծպտուած որպէս առաքինու-
թիւն:

- Նախագահութիւն. Քաղաքական դաշտի ամէնէն պարարտ խոզը:

- Գեղանկարները երկու եզրերով ներկացումներն են երեք եզրերով անկարելոյ
առարկաներու:

- Եսասէր. Անճաշակ մը, աւելի հետաքրքրուած ինքն իրմով՝ քան ինձմով:

- Ապորիժէններ (Աստրալիոյ բնիկները). Նուազ կարելորութեամբ անձեր որոնք
կը խանգարեն նոր գտնուած երկրի մը համայնապակերը: Շուտով կը դադրին խճո-
ղելէ, եւ կը պարարտացնեն հողը:

- Անհեթեթութիւն. Հաստատում՝ բացորոշ կերպով անհամապատասխան սեփա-
կան կարծիքին:

- Ընդհանուր ներում. Երկրի մը վե-
հանձնութիւնը յանցաւորներու նկատ-
մամբ, զորս պատժել շատ ծախսալից
պիտի ըլլար:

- Ինքնագոհութիւն. Միսալ արժեւորում:

- Ճակատում. Չեւ մը՝ ատամներով քա-
կելու քաղաքական հանգոյց մը, որ չ'ու-
զեր տեղի տալ լեզուով:

- Գեղեցկութիւն. Կարողութիւն՝ որ կը-
նոջ մը թոյլ կու տայ հմայելու սիրահար
մը եւ սարսափեցնելու ամուսին մը:

- Աղմուկ. Ականջին մէջ՝ զարշահոտու-
թիւն: Ոչ ընտանի երաժշտութիւն: Գլխա-
ւոր արտադրութիւն եւ վաւերական նշան
քաղաքակրթութեան:

- Ուղեղ. Սարք՝ որուն հետ մենք կը
մտածենք որ կը մտածենք:

- Քրիստոնեայ. Անձ՝ որ կը հաւատայ
որ Նոր Կտակարանը աստուածային
ներշնչումով գիրք մըն է, հրաշալիօրէն
պատշաճ իր հարեւանի հոգեկան կա-
րիքներուն: Անձ՝ որ կը հետեւի Քրիստո-
սի ուսուցման այնքան որ անոնք անյարիր չեն մեղքի կեանքի մը:

- Կրկէս. Վայր՝ ուր ձիերուն, երիվարիկներուն եւ փիղերուն արտօնուած է տեսնել
այրեր, կիներ եւ մանուկներ որպէս ապուշներ:

- Բանախօս. Մարդ՝ որ ձեռքը կը դնէ գրպանը, լեզուն՝ ձեր ականջը եւ իր հաւատ-
քը՝ ձեր համբերութեան մէջ:

- Հասկցող. Մասնագէտ՝ որ ամենագէտ է բանի մը մասին եւ ոչինչ գիտէ ամբողջ
մնացեալին մասին:

- Պահպանողական. Քաղաքագէտ՝ որ կը սիրէ գոյութիւն ունեցող ցաւերը, զոր
պէտք չէ շփոթել ազատականի հետ՝ որ կը ցանկայ զանոնք փոխարինել ուրիշնե-
րով:

- Ծովահէն. Ծովերու քաղաքագէտ:

- Զննադատութիւններ. Մին այն բազմաթիւ եղանակներէն, զորս տխմարները կը
սիրեն իրենց բարեկամները կորսնցնելու համար:

- Լիրք. Կոպիտ անձնաւորութիւն, որուն ձեւագեղծուած տեսողութիւնը կը տեսնէ
իրերը ինչպէս որ են, եւ ոչ այնպէս ինչպէս պէտք է ըլլան:

- Յուսալքում. Վարակ՝ բարեկամի մը բարգաւաճման ի տես:


- Դիւանագիտութիւն. Հայրենասիրական արուեստ՝ սեփական երկրին համար
ստելու:



- Շնորհատրանք. Նախանձի քաղաքավարություն:
- Յիմար. Անձ՝ որ վարակուած է մտաւորական բարձր անկախութեամբ, որ չի պատշաճիր մտածման, խօսքի եւ գործելու ընդունուած չափանիշներուն, սահմանած իրենք զիրենք նկատի առած, դատաւորներու կողմէ, որ տարբեր է մեծամասնութենէն, ամփոփելով՝ անսովոր: Հարկ է նկատել, որ անձերը յիմար յայտարարած իշխանութիւնները պարտաւոր չեն փաստելու, որ իրենք կատարելապէս առողջ են:
- Երեւակայութիւն. Գաղափարներու պահեստանոց, որուն տէրերն են բանաստեղծները եւ ստախօսները:
- Ընթոստութիւն. Յեղափոխութիւն՝ որ ձախողած է: Ապարդիւն փորձ՝ խառնակութեամբ մը փոխարինելու գէշ կառավարութիւն մը:
- Երկարեկեցութիւն. Մահէն վախի անհանգիստ շարունակութիւն:
- Ամուսնութիւն. Վիճակ կամ կացութիւն համայնքի մը՝ տէր մը, տիրուի մը եւ երկու ստրուկ ունեցող, միասնաբար երկու անձ կազմող:
- Լիկէոն. 1./ Հնադարեան վարժարան՝ ուր կը զրուցէին բարոյագիտութեան եւ իմաստասիրութեան մասին: 2./ Արդի վարժարան ուր կը վիճին ոտնագնդակի մասին:
- Ուղղագրութիւն. Գիտութիւն՝ որ կը հեզէ աչքով ականջի փոխարէն:
- Իմաստասիրութիւն. Բազմաթիւ ուղիներ ունեցող ճանապարհ, որ կը տարածուի ոչ մէկ տեղէ ոչինչ:
- Քաղաքականութիւն. Մեծ սկզբունքներու քողի տակ շահերու պայքար: Հանրային գործերու ղեկավարում սեփական առաւելութեան համար:
- Խորամանկութիւն. Ինչ որ կը փոխարինէ ուղեղը յիմարներու պարագային:
- Աշխատանք. Ընթացքներէն մին, ըստ որուն Ա-ը ինչք ձեռք կը բերէ Բ-ի համար:
- Ծերութիւն. Կեանքի ժամանակաշրջան, երբ կը հանդուրժենք մոլութիւնները զորս կը շարունակենք սիրել, միաժամանակ սարսափով վանելով անոնք զորս ի գործ ածելու կարողութիւնը չունինք:
- Լրագրող. Գրող՝ որ կը փորձէ իր ճամբան գտնել ճշմարտութեան մէջ, եւ զայն կը ցրուէ բառերու փոթորիկի մը մէջ:
- Ճշմարտութիւն. Իրաւախոհութիւն՝ երեւոյթի եւ ճշմարտութեան միջեւ:
- Վիուկ. 1./ Քստմնելի եւ վանողական ծեր պառաւ մը, որ խոտոր գործեր ունի սատանային հետ: 2./ Գեղեցիկ եւ քաշողական երիտասարդ անձ, որուն խոտոր գործերը կը գերազանցեն սատանան :
- Գերյոգնութիւն. Ծանրակշիռ խանգարում՝ որմէ կը տառապին հանրային բարձր պաշտօնատարները, երբ ուզեն ձկնորսութեան երթալ:
- Խոնարհում. Մարդու կեցուածքը աստուծոյ մը նկատմամբ, շան մը՝ մարդուն նկատմամբ:

(Ֆրանսերէն թարգմանութենէն
քաղուած եւ հայացուած)

Երբ հայ գրող կը դադարապարտէին, վճիռներ կ'արձակէին: Վաւերաթուղթերը յիշողութեան պարունակողն են եւ ճշմարտութեան փաստեր: Դատարանի վճիռը կը վերաբերի երգիծագիր Լեւ Կամսարին:



2.

դուժ է Հայկական ՍՍՌ-ի Գերագույն դատարանը հատուկ կոլեգիայի 4/3-1936 թվի դատավճիռը Արամ Ֆելժե Թովմասի Թովմասյանի նկատմամբ բեկանել և գործը կարգել հանցակազմի քաջակայության պատճառով: Պատժադրանքով, որ Արամ Թովմասյանի արարքի մեջ Քր.օր. 67.հ. 1-ին մասը նշանակակներ չկան, Հայկական ՍՍՌ-ի Գերագույն դատարանի նախագահությունը քննության առնելով գործի նյութերը և հսկողական բողոքը, գտնում է, որ հսկողական բողոքի հետ պետք է համաձայնել հետևյալ հիմունքներով:

Վերջինից երևում է, որ Թովմասյանին կալանավորելու համար հիմք է ծառայել գործով հարցաքննված կալանավորներ Վարդգես Դերոյանի և Հիֆսիկ Մուշեղյանի ցուցմունքները /գ.թ.1,43,60/, իսկ խուզարկության ժամանակ նրա բնակարանից հայտնաբերվել է անտիպ երկու աշխատություն, այսպես կոչված, ,,Պլենար նիստ,, , որը պետական ապարատի գտված մի մարդու պատմություն է՝ որոնք դատաքննչական օրգանների կողմից դիտվել են որպես հակասովետական փաստաթղթեր: Այսպես Վարդգես Դերոյանը դատաքննության ժամանակ հրաժարվել է Թովմասյանի նկատմամբ նախաքննության ժամանակ տրված իր ցուցմունքներից, իսկ կալանավոր Մուշեղյանի Դիֆսիկը դատարանում Թովմասյանի օրոգով չի հարցաքննվել: Ինչ վերաբերում է նախաքննության ժամանակ տված նրա ցուցմունքներին, ապա Մուշեղյանը ցույց է տվել, որ Թովմասյանը հակասովետական արտահայտություն չի արել, այլ այդ արտահայտությունները ինքն է արել Թովմասյանի ներկայությամբ:

Այսպիսով այս ապացույցների հիման վրա չի կարելի Թովմասյանի կատարած հանցանքը Քր.Օր. 67.հ.1-ին մասի նշանակակներով հաստատված համարել: Իսկ ինչ վերաբերում է Թովմասյանի բնակարանից հայտնաբերված երկու անտիպ աշխատություններին, դրանք նույնպես չեն կարող հանդիսանալ Թովմասյանին դատապարտելու համար:

Քանի որ Թովմասյանը զրակնագետ է, նրա ժանրը երեխաբանությունն է, շատ հավանական է, որ նրա աշխատությունները եղել են պուր ծաղր այս կամ այն հիմնարկի կամ անհատի մասին, սակայն պետք է նկատի

3.

ունենալ, որ դրանք դեռևս մշակված և ավարտված գործեր չեն եղել և չեն հրապարակվել և այդ աշխատություններում եղել են իդեոլոգիական խորթ տարրեր, ապա այն չպետք է դիտել որպես հակասովետական գործ, մանավանդ որ Թովմասյանը դատաքննություն ժամանակ առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ծանաչել:

Եթե Թովմասյանի մոտ եղել են իդեոլոգիական խորթ տարրեր և առանձին արտահայտություններ, ապա դրանք նրա մոտ կրել են պատահական բնույթ և չի կարելի դիտել այդ հակասովետական արտահայտություններ:

Թովմասյանն ունի, այսպես կոչված, «Ազգային այլընտրանք», աշխատությունը, որտեղ 1918-20թվերին սուր ծաղրի է ենթարկել դաշնակցությունը, Արևմտյան Եվրոպային և ամերիկյան իմպերիալիստներին /այս գիրքը գ.թ. 107/: Բացի այդ, լրացուցիչ ստուգման ժամանակ գործին կցված է մի քանի քաղաքացիների կողմից տրված բնութագրեր, որոնք Թովմասյանին բնութագրում են դրական:

Վերոհիշյալի հիման վրա Հայկական ՄԱՌ-ի Գերագույն դատարանի նախագահությունը դեկավարվելով Բր. դատ.օր. 297 հոդվածով

Ո Ր Ո Շ ՈՑ

Համաձայնել Հայկական ՄԱՌ դատախազի հսկողական քողոքի հետ, բեկանել Հայկական ՄԱՌ Գերագույն դատարանի հատուկ կոլեգիայի 4/3 1936 թվի դատավճիռը Արամ Թովմասի Թովմասյանի նկատմամբ գործը կարճել՝ հանցանքը չապացուցված լինելու պատճառով:

ՀԱՍՈՒ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱԼԵԽԱՆՑԱՆ

ՈՐՈՇՈՒՄ ՆՈ. 3/141

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-ԳԵՐԱԳՈՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՆ

1/10-1955 թուի

Նախագահություններ – Ալեքսանեանի
 Անդամակցություններ – Առաքելեան, Խաչատրեան, Ամիրխանեան, Խուրշուդեան
 Դատախազի տեղակալ – Մաքսուդեան
 Զարտուղարություններ – Հախնազարեան

ՁԵԿ. ԸՆԿ. Շ. ԽԱՉԱՏՐԵԱՆ

Հայկական ՍՍՌ- դատախազի հսկողական բո-
 դոքը ըստ մեղադրանքի Արամ Թովմասի Թով-
 մասեանի / Լեռ Կամսար/. Քր.օր.67 Հ. 1-ին մա-
 սով:

Հայկական ՍՍՌ-ի Գերագույն դատարանի յատուկ կոլեգիան 1936 թուի մարտի 4-ին դա-
 տավճռով Քր.օր.67.հ.1-ին մասով դատապարտել է ազատազրկման 3 տարի ժամանակով:

Արամ Թովմասի Թովմասեանը 1988 [1888, «Բ.»] թուի ծնունդով, ծնունդով է Թուրքիայում,
 Վան քաղաքում, ազգությամբ հայ, անպարտիական, գրագետ: Մինչև կալանաւորուելը
 զբաղուել է գրականագիտությամբ, գրական անունն է «Լեռ Կամսար»: Կալանքի սկիզբը
 հաշուած է եղել 1935 թ.ի Նոյեմբերի 28-ից, պատիժը կրել է ազատուել է:

Թովմասեանը դատապարտուել է այն բանի համար, որ լինելով մացիոնալիստ [ազգայ-
 նական, «Բ.»] իւր մի շարք գրական աշխատութիւններում խցկել է բացարձակ հակասովե-
 տական տեսակէտներ, փորձել է դիսկրիտացիայի ենթարկել կոմունիստական պարտիային
 [համայնավար կուսակցութեանը, «Բ.»] եւ Սովետական կառավարութեանը, գրաւոր կապ է
 ունեցել Հայկական բուրժուական պարտիայի ներկայացուցիչների հետ, իւր նամակներում
 դժգոհութիւն է յայտնել ՀՍՍՌ-ի գոյութիւն ունեցող կառուցումաբից, մասնակցութիւն է ունե-
 ցել Վարազդատ Դերոյեանի տանն ունեցած հակասովետական խօսակցութեանը, դաշնակ-
 ցական Հոփսիսիկ Մուշեղեանի հետ եւ այլն:

Այժմ հսկողական բոդոք է բերել Հայկական ՍՍՌ-ի դատախազը միջնորդում է Հայկա-
 կան ՍՍՌ- Գերագույն դատարանը յատուկ կոլեգիայի 4/3-1936 թուի դատավճիռը Արամ
 Թովմասի Թովմասեանի նկատմամբ բեկանել եւ գործը կարճել յանցակազմի բացակայու-
 թեան պատճառով: Պատճառաբանելով, որ Արամ Թովմասեանի արարքի մէջ Քր.օր. 67.հ. 1-
 ին մասը յանցակազմի [ձեռագիր յաւելում «Բ.»] նշանավակներ չկան, Հայկական ՍՍՌ-ի
 Գերագույն դատարանի նախագահութիւնը քննութեան առնելով գործի նիւթերը եւ հսկողա-
 կան բոդոքը, գտնում է, որ հսկողական բոդոքի հետ պէտք է համաձայնել հետեւեալ հիմունք-
 ներով:

Գործի տուեալներից երեւում է, Թովմասեանին կալանաւորելու համար հիմք է [եւ, «բ.»]
 ծառայել գործով հարցաքննում կալանաւորներ Վարազդատ Դերոյեանի եւ Հոփսիսիկ Մու-
 շեղեանի ցուցմունքները /գ.ր.1,43,60/, իսկ խուզարկութեան ժամանակ նրա բնակարանից

յայտնաբերուել է անտիպ երկու աշխատութիւն, այսպէս կոչուած «Պլենար Նիստ», որը պետական սպարատի զտուած մի մարդու պատմութիւն է, որոնք դատաքննչական օրգանների կողմից դիտուել են որպէս հակասովետական փաստաթղթեր: Սակայն Վարազդատ Դերոյեանը դատաքննութեան ժամանակ հրաժարուել է Թովմասեանի նկատմամբ նախաքննութեան ժամանակ տրուած իր ցուցմունքներից, իսկ կալանաւոր Մուշեղեան Հռիփսիկը դատարանում Թովմասեանի գործով չի հարցաքննուել: Ինչ վերաբերում է նախաքննութեան ժամանակ տրուած նրա ցուցմունքներին, ապա Մուշեղեանը ցոյց է տուել, որ Թովմասեանը հակասովետական արտայայտութիւն չի արել, այլ այդ արտայայտութիւնները ինքն է արել Թովմասեանի ներկայութեամբ:

Այսպիսով այս ապացոյցների հիման վրայ չի կարելի Թովմասեանի կատարած յանցանքը Քր.օր. 67.հ.1-ին մասի նշանակներով հաստատուած համարել: Իսկ ինչ վերաբերում է Թովմասեանի բնակարանից յայտնաբերած երկու անտիպ աշխատութիւններին, դրանք նոյնպէս հիմք չեն կարող հանդիսանալ Թովմասեանին դատապարտելու համար:

Քանի որ Թովմասեանը գրականագէտ է, նրա ժանրը երգիծաբանութիւնն է, շատ հաւանական է, որ նրա աշխատութիւնները եղել են սուր ծաղր այս կամ այն հիմնարկի կամ անհատի մասին, սակայն պէտք է նկատի ունենալ, որ դրանք դեռեւս մշակուած եւ աւարտուած գործեր չեն եղել եւ չեն հրապարակուել եւ այդ աշխատութիւններում եղել են, իդէոլոգիական խորթ տարրեր, ապա այն չպէտք է դիտել որպէս հակասովետական գործ, մանաւանդ որ Թովմասեանը դատաքննութեան ժամանակ առաջադրուած մեղադրանքում իրեն մեղաւոր չի ճանաչել:

Եթէ Թովմասեանի մօտ եղել են իդէոլոգիական խորթ տարրեր եւ առանձին արտայայտութիւններ, ապա դրանք նրա մօտ կրել են պատահական բնոյթ եւ չի կարելի դիտել այդ հակասովետական արտայայտութիւններ:

Թովմասեանն ունի, այսպէս կոչուած, «Ազգային Այբբենարան» աշխատութիւնը, որտեղ 1918-1920 թուերին սուր ծաղրի է ենթարկել դաշնակցութեանը, Արեւմտեան Եւրոպային եւ ամերիկեան իմպերիալիստներին / այս գիրքը գ.թ.107/: Բացի այդ, լրացուցիչ ստուգման ժամանակ գործին կցուած է մի քանի քաղաքացիների կողմից տրուած բնութագրեր, որոնք Թովմասեանին բնութագրում են դրական:

Վերոյիշեալի հիման վրայ Հայկական ՍՍՌ-ի Գերագոյն դատարանի նախագահութիւնը ղեկավարուելով Քր. Դատ.օր. 297 յօդուածով

ՈՐՈՇԵՑ

Համաձայնել Հայկական ՍՍՌ դատախազի հսկողական բողոքի հետ, բեկանել Հայկական ՍՍՌ Գերագոյն դատարանի յատուկ կոլեգիայի 4/3 1936 թուի դատավճիռը Արամ Թովմասի Թովմասեանի նկատմամբ գործը կարճել՝ յանցանքը չապացուցուած լինելու պատճառով:

ՀՍՍՌ ԳԵՐԱԳՈՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ

ՄԱՀ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԱՔՐԱՀԱՄ ԱԼԻՔԵԱՆԻ

**Ծն. 21 Մայիս 1928, Ալեքսանտրէթ (այժմ՝ Թուրքիա)
Մահ՝ 15 Յունիս 2013, Պէյրութ, Լիբանան**

Արրահամ Ալիքեան յաճախած է Ալեքսանտրէթի Նուպարեան վարժարանը: 1939-ին, երբ Սանճաքը յանձնուեցաւ Թուրքիոյ, շրջանի հայութիւնը գաղթեց միջինարեւելեան այլ երկիրներ, եւ Ալիքեանի ընտանիքը եկած է Պէյրութ, ուր ապագայ բանաստեղծը աւարտած է Նշան Փալանճեան ճեմարանը: Երկրորդ Աշխարհամարտի աւարտին, 1947-ին, ներգաղթած է Հայաստան: Եղած է միջազգային գրականութեան դասախօս, Մոսկուայի մէջ: 1970-ականներու վերջերուն դուրս եկած է Խորհրդային Միութենէն, եւ շրջան մը Ֆրանսա մնալէ ետք վերադարձած է Լիբանան: Ընդարձակ ստեղծագործական եւ թարգմանական գրականութիւն ունի: Յիշենք՝ «Հորիզոն» (բանաստեղծութիւններ, Պէյրութ, տպ. ճեմարանի, 77 էջ), «Նախերգանք»՝ (Երեւան, Հայպետհրատ, 1951, 70 էջ), «Նախերգանք» (Երեւան, Հայպետհրատ, 1952, 72 էջ), «Կանաչ սօսափ» (բանաստեղծութիւններ, Երեւան, Հայպետհրատ, 1959, 168 էջ), Բարեյուսոյ հրօսանդան (բանաստեղծութիւն, Երեւան, Հայպետհրատ, 1965, 103 էջ, լոյս տեսած է նաեւ դասական ուղղագրութեամբ, Փարիզ), «Աչքեր» (բանաստեղծութիւններ, Երեւան, Հայաստան հր., 1968, 175 էջ), «Նժար» (բանաստեղծութիւններ, Երեւան, Հայաստան հր., 1974, 128 էջ), Արեւամաղ (բանաստեղծութիւններ, Երեւան, Սովետական գրող հր., 1983, 220 էջ), «Հանդիպակաց ակեր» (յօդուածներ, Երեւան, Սարգիս Խաչենց հր., Երեւան, 2009):



ՐԱՋՏՏԻ ԹՈՔԱԹԵԼԱՆԻ ՏԱՐԲԵՐ ՔԱՆԴԱԿՆԵՐԸ Ի՞ՆՉ ԿՐ ՅՈՒՇԵՆ

ՄԲՈՒՄ



Կեդրոնացե՛ք այն ինչին վրայ որ կը կատարե՛ք, եւ այն ինչին վրայ որ պիտի կատարե՛ք: Դուք էք տերը ձեր որոշումներուն, ոչ ոք տեղի լաւ կը մտածէ քան դուք: Յաջողութեան քանալին՝ կամքն է. հզօր կամքն ու տփնաջան աշխատանքը հիմքն են յաջողութեան:

ՐԱՋՏԻ ԹՈՔԱԹԵԼԱՆ

2013, ՄԱ. ՏԱՐԻ, ԹԻՒՂ

Արուեստագէտներու եւ արուեստասէրներու սեղմ շրջանակի ընդունելութեան մը ընթացքին ծանօթացայ Րաֆֆի Թորաթեանի. գեղանկարչուի մը, գեղագէտ քննադատ մը, լուսանկարիչ մը, գեղարուեստի ծանօթացումով խանդավառուող մը եւ ինք:

Ժամադրուեցանք: Եկաւ «ԲԱԳԻՆ»-ի խմբագրատուն, բերած էր իր գործերէն ալպոմ մը: Դասական չեղող քանդակներու պատկերներ: Անտարբեր չէք կրնար մնալ: Կը մտածէք: Առեղծուած եւ յարափոփոխ իրականութիւն, ինչպէս դիցաբանական առասպելները:

Ի՞նչ ըսել կ'ուզէ, արդէն այլ խնդիր է: Դիտել քանդակը, լսել: Պեղել քանդակագործը:

Ինք ալ սկսած է գծել մանկութենէն, բաւարարութիւն չէ զգացած, միշտ ուզած է քանդակագործ ըլլալ: Ներշնչման աղբիւր եղած են եգիպտական արձանները, որոնք զինք տպաւորած են իրենց մեծութեամբ: Գացած է Լուքսոր, ազդուած, երեւակայուած իրականութեան այդ համամարդկային ժառանգութենէն:

Ժամանակին հետ, հասունացումով, գտած է իր հորիզոնը, ստեղծած է իրեն յատուկ հաւասարակշռութիւն անցեալի, ներկայի եւ ապագայի տեսիլքի միջեւ, հինի եւ նորի միջեւ:

Ալպոմ մը՝ քանդակներու նկարներ:

Նկարը խորութիւն չունի եւ կարելի չէ դարձնել: Քանդակին շուրջ պէտք է դառնալ, աջ եւ ահեակ, նայիլ վարէն եւ վերէն: Տեսնել տարածութեան մէջ: Այն ատեն կը սկսի արուեստագէտին հանդիպելու արուեստասէրին «արկածախնդրութիւնը»:



«Կեանքին Գեղեցկութիւնը»

Քանդակներու նկարները կը նախապատրաստեն քանդակագործի խաղին մասնակցութեան. ձգողութենէն անջատուիլ՝ ինչպէս տիգերագնացները, անճարակ բժշկական ուսանողներու հետ մտնել մարդակազմութեան դասին, Պուշոյի պարուհիներուն եւ պարողներու օղին մէջ կանգնելու վերսկսող փորձը տեսնել: Օդէն կախուած մնալու եւ սաւառնելու երազը:

Ո՞ր կը սկսի առասպելը: Անոր յաջորդող իրականութիւն մը կա՞յ: Մեր անկատարութեան կամ սկզբնական բնական

կատարելութեան կորուստի ողբերգութիւնը կը պատմուի: Կիսաբոն զառանցանքէ՞ն կու գան այս քանդակները, սկսած չաւարտածի թելադրականութեամբ, Շէքսպիր կ'ըսէ, որ «կեանքը յիմարի մը կողմէ ըստած պատմութիւն մըն է, որ ոչինչ կը նշանակէ»:

Ի՞նչ բան սկսած է Բաֆֆի Թոքաթեան: Կ'ուզէ՞ աւարտել: Աւարտի հասնելու ցանկութիւն ունի՞: Այս քանդակները իր ներաշխարհի տակնուվրայութեան պատկերներն են, թէ՞ բնագանգական հարցում մը առաջի եւ վերջի, իրականութեան եւ ցնորքի մասին:

Թէ՞ պարզապէս զառանցանք:

Այս մտորումներով կը մտնեն Բաֆֆի Թոքաթեանի քանդակներով բնակուած աշխարհը: Կամ մետաղեայ գիծերու ետին թաքնուած ներաշխարհը:

Նկարիչները երբեմն կ'ընդգծեն, որ ԳԻԾՆ է էականը, որպէս մեկնակէտ, թէ՞ գումարուելով պատկեր: Բ. Թոքաթեան ի՞նչ կ'ըսէ ԳԻԾի մասին, քանի որ գիծը մակերեսի վրայ է, իսկ քանդակը տարածութեան մէջ:

«Ինծի համար սրեղծագործական առաջին քայլն է գիծը, ան ամէն ինչ է: Քանդակը գիծին մէջ է, քանի որ ուրուագիծը (սքէչը) գիծերով տեսնելու պատրաստութիւն է, արուեստագէտը իր պատկերացումները գիծերով կը կազմէ, մէկէ ատելի ուրուագծումներ: Կ'ընտրէ մին, այն՝ որ կը համապատասխանէ իր սրեղծագործական ակնկալութեան, որ իր մէջ էր, որ չէր պիտի սրանայ»:

Ներկայացուած քանդակներուն մէջ ինքնատիպ ձեւեր կան, խտացեալ գիծեր, անոնք կարծէք քանդակի առարկային հետ կապ չեն ուզեր ունենալ, այլ

առանձին ապրիլ, բայց նիւթը կը զսպէ անոնց խաղ եւ երազ դառնալու ցանկութիւնը:

Բ. Թոքաթեան կը խօսի: Չի բացատրեր.

«Իմ արշաններս մարդկութեան պատմութիւնն են, սկիզբէն մինչեւ մեր օրերը, եւ դեռ նաեւ վաղուան պատմութիւնը, անոնք կը բացուին ապագային վրայ: Քանդակներուս համար ընտրեցի պրոնզը, թէն սկսած էի քանդակել մարմարով: Մարմարը պաղ նիւթ է: Մանրամասնութիւններ կան, որոնք միայն մեղադրով կը տրուին, մեղադր թոյլ կու տայ արտայայտել ներշնչման թռիչքը:



«Նիւթին Պայքարը Ոգիին Դէմ»



«Le Joker»

Պրոնգր Կաթ ճիւղ մըն է, մարմարին եւ պրոնզին միջեւ Կարթերութիւնը մեծ է: Մարմարի պարագային կարելի չէ կարգ մը մանրամասնութիւններ քանդակել: Մարմարը կը սահմանափակէ, կը զսպէ սրեղծագործական թափը: Մերազը լայն կարելիութիւններ կ'ընծայէ, գոյներով, խաղով, կրակով»:

Արդարեւ, ցուցասրահին մէջ կան թռչելու կացութիւններ, անկարելի թուացող հաւասարակշռութիւններ: Եթէ չզիտնանք, որ քանդակներ են մեր դիմացը, կրնանք խորհիլ որ բժշկական համալսարանի դիարանին մէջ դրուած մարմնի մասեր կան, կտրատուած, ջարդուած:

Ի՞նչ կը պատմեն անոնք մեր ներաշխարհին եւ մեր ժամանակին յարաբերաբար: Ի՞նչ կապ կայ անոնց եւ գեղագիտական վայելքի ու փնտռտուքի միջեւ: Ի՞նչ կը բերեն քանդակողէն դիտողին:

Րաֆֆիի մտածման գիծը նոյնն է:

«Մարդիկ արհեստագիտութիւնը հնարեցին, առաջ չգացին, բնութեան ներդաշնակութիւնը խանգարեցին, գեղեցիկը ձեւագեղծեցին, դէպի գէշը գացին: Ինչ որ կայ բնութեան մէջ, մեզ զարմացնող, ցնցող, մաս կը կազմէ բնական ներդաշնակութեան: Մարդիկ, արուեստասէրներ, կը հասկնան քանդակներու պարմած ներդաշնակութիւնը: Արուեստասէրներ քանդակներս կը գնեն, որովհետեւ կը սիրեն, անոնց առթած զգացումները իրենց հարագաւր են,

անոնց մէջ մարդկային կացութիւնը կը տեսնեն: Չեն գներ որպէս զարդ կամ գեղոր: Այս կէտը կարեւոր է»:

Դիտելով շարուած քանդակները, գործնապաշտութենէ խզուելով, կարծէք ներկայ կ'ըլլանք նիթականի եւ աննիթականի միջեւ պայքարի մը, կամ երազն է որ չ'ուզեր թանձրանալ, նիթ դառնալ: Հոգեբանութի՞ւն, բնագանցութի՞ւն, թէ՞ ինչպէս այդ կը տեսնենք կարգ մը հոգեկան տագնապներու պարագային՝ երկրորդ վիճակ մը, *état second*: Կը հարցնեմ, որ արուեստասէրը շփոթի չի՞ մատնուիր:

Նայումաձքս կ'երթայ մէկ քանդակէ միւսը, մինչ Բաֆֆի Թոքաթլեան կը շարունակէ մենախօսելու պէս.

«Ճիշդ է, գործերուս յարկանիշներէն մէկն ալ գերբնական ըլլալու մէջ կը կայանայ, անոնք կը պատմեն չիրականացող երազներու մասին, կը քելադրեն անմիջականէն, տեսնուածէն եւ ապրուածէն անդին քան մը, ներկան գերանցող, եւ այդ քանը նոյնը չէ քոլորին համար, այսինքն, իւրաքանչիւր անձ իր ուզածը կը տեսնէ, խառնուածքի եւ պահու հարց է: Արուեստի գործը մտածման եւ զգացումի տանող միջոց մըն է: Երբեմն մտածումներս կը գրեմ, կամ թուղթի վրայ կ'արձանագրեմ ներշնչումս, եւ ապա քանդակը կը շարունակէ մտածումս, գրածս»:

Ներկայացուած քանդակներու տրորուած մարմինները, կմախքաձեւ մարմիններէն քերծուած միսերը, ցաւագին են: Մարդկային հաճոյքի կամ գեղագիտական վայելքի համար միսը եւ մորթը գրգիռ կը յառաջացնեն: Իսկ ի՞նչ բանի հրաւեր են տրորուած մարմինները, կամ ի՞նչ բանի խոստովանութիւն:

«Կ'սկնարկէք ալպումի քանդակներու: Այդ գործերս Վենետիկ ցուցադրուած են: Ինչպէս սկզբնական ներշնչումս, անոնք մարդը եւ մարդկութիւնը կը ներկայացնեն, սկիզբէն մինչեւ մեր օրերը: Ինչպէս ըսի, մենք խանգարած ենք եւ կը խանգարենք, կ'աղմարենք բնութիւնը, հերետաքար նսեմ մարդը, որ բնութեան



«Երրորդ Աչք»

մաս կը կազմէ: Արհեստագիտութիւնը քարիք չեղաւ, ապականութիւնը աւելցուց, այդ դժբախտութիւնն է որ կը պատմեն»:

Քանդակները, պրոնզի ընծայած կարելիութիւններուն նպաստով, թռիչք ունին: Բայց անոնց ետին կա՞յ ապրում մը, ցաւ մը, որ լացի չվերածուելու համար կը փորձէ ըլլալ տեսակ մը հոգիի փրկութեան երգ:

Բաֆֆի Թոքաթլեան կ'ըսէ. «Ես մարդկութեան ըմբռնումս կ'արտայայտեմ իմ շեւովս: Ինչպէս որ կը տեսնեմ, կը զգամ: Միշտ մօտ կը մնամ սկզբնական մաքրութեան: Մարդուն ներքին

ապրումներուն եւ փոթորիկներուն մասին կը վկայեմ, կը վկայեմ նաեւ մարդուն եւ ժամանակի մասին, մարդը ժամանակին մէջ, մարդը իր գործած չարով եւ բարիով, վերիվայրումներով, նուաճումներով»:

Չարմանքով կը դիտեմ քանդակները: Ամբարտաւանութիւն մը չկա՞յ անոնց խոստովանութեան մէջ, կարծեք կ'ուզեն լրացնել մեծ ստեղծագործութեան անկատարութիւնը: Այս ցանկութիւնը խենթութիւն չէ՞, ինչպէս կ'ըսեն՝ սրբազան, կամ պարզապէս խենթութիւն:

«Բնութիւնը միշտ կը յարգեմ, կը պաշտպանեմ: Միշտ պէտք է կրկնել, որ

բնութիւնը կատարեալ է: Իսկ մենք կ'աղճապենք բնութիւնը: Քանդակներու մէջ կայ բարկութիւն բնութեան դէմ գործուած նախայարջակումներուն համար: Սրբագրել անհատաբարմութիւնը: Պէտք է մնալ բնութեան հետ, չհեռանալ անկէ: Կ'ուզեմ որ այս լսուի»:

Մէկդի դնելով կարգ մը շրջանակներու յատուկ ոչինչ նշանակող ձեւականութիւնները, քիչ մըն ալ կեղծիքը, չէ՞ք խորհիր որ արուեստասէրը կը դնէք անհասկընալիութեան պատին առջեւ: Կամ ձեր գործերը կը սահմանէք ընտրանիի մը, որ գիտէ հասկնալ, վերլուծել:

«Նման միտում չունիմ: Կը փափաքիմ որ մարդիկ գան, դիտեն, դատեն, խօսին: Խօսին գործին հետ: Արուեստի գործը, այդ ձեւով, ինքզինք կը վերաբեղծէ իւրաքանչիւրին հետ: Եւ իւրաքանչիւր անձ կը հասնի գեղագիտական եւ մտածման վայելքի: Այդ արուեստագէտին վարչարարութիւնն է»:

Երբ կը ստեղծագործէք, արուեստասէրին ապրումը կամ կարծիքը նկատի կ'ունենա՞ք, ան ինչպէս կրնայ թրթռալ ձեզի հետ, կամ անմիջական ներկան նշանակութիւն մը ունի՞ ձեզի համար, թէ՞ պարզապէս դուք ձեզ կը դնէք համամարդկային եւ ապագայի սահմանագիծին վրայ:

«Արուեստասէրին կարծիքը եւ գնահատանքը բնականօրէն կը քերեն հասկցում ըլլալու գոհունակութիւնը, բայց նաեւ աւելին, բան մը փոխանցած ըլլալու ուրախութիւնը, քանի որ գործերու մէջ մարդը, մարդկութիւնը եւ ժամանակը կան, որպէս գերիրականութիւն, կամ կայ մեր գոյութեան առասպել-



«Կեանքին Պարը»

լը, հերեւաբար դիրողը, արուեստասէրը, երբ նոյնիսկ դէմ առ դէմ չենք եղած, երբ քափանցէ, գոհունակութիւն կը պարճառէ»:

Բաֆֆի Թոքաթեանի գործերէն կան Հայաստանի Հանրապետութեան մախազահական պալատին մէջ, Արդի Արւեստի ցուցասրահը եւ Յունաստանի Մարաթոնի թանգարանը: Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանի թանգարանին մէջ կը գտնուի իր «Յարութիւն» թելադրական քանդակը, որ կրկին, նիւթէն աննիւթական անցում մըն է, երկրի ձգողութենէն անջատում մը:

Ճիշդ կամ սխալ, Բաֆֆի Թոքաթեան կ'ըսէ, որ հայերը քիչ կը գնահատեն արւեստը: Այս մտածումը ուրիշներ ալ արտայայտած են: Ի հարկէ, հայ արուեստագէտը բնական է որ ճանաչում ակընկալէ իր ազգակիցներէն, բայց նաեւ եթէ խորհինք հայ արուեստասէրներուն տոկոսի մասին, մեր համրանքին բաղդատած, անոնք աւելի՞ կամ նուա՞զ են ֆրանսացիներէն, անգլիացիներէն, գերմանացիներէն, ամերիկացիներէն:

Դրական երեւոյթ մը. դպրոցականներ կ'այցելեն ցուցասրահ եւ կը շփուին արւեստի գործերուն: Այդ շփումէն կրնան ծնիլ եւ արուեստագէտներ եւ նոյնքան կարեւոր՝ արուեստասէրներ, մանկավարժական մօտեցում մը, որպէսզի արւեստ գնահատողներու տոկոսը աճի:

Եթէ Մոսկուա, Վենետիկ, Նիւ Եորք, մարդիկ կ'երթան տեսնելու այս ինքնատիպ քանդակները, յաւելեալ պատճառ չկայ, որ դրացնութեան իրաւունքով, մենք ալ չտեսնենք:

Այս քանդակները վաղուան հորիզոնն են: Երեւակայութիւն. ծերացած քան-



«Գաղտնիքը Դիմակին Ետեւ»

դուող մոլորակէն թռիչք առնելով՝ անդին տեսիլք մը:

Եւ առասպելը կը վերածնի իւրաքանչիւր արուեստասէրի հետ:

Յ. Պ.

29 Մարտ 2013
Պէյրութ



ՀԱՅՏՆԱԳՐԵԱԼ ՇԱՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՅ


Դ. Խատոր
Անթիլիաս - 2012




ՎԵՐԱԴԱՐՁ ԴԵՊԻ ԱՆՑԵԱԼ Յեղիսակ՝ ԳՐԻԳՈՐ ԳՐԱՄԵԱՆ Պէյրուք, 2013




ՎԿԱՅԱՐԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ Գիրք Ե. Պատրաստեց՝ ՅԱՐՈՒԹԻՆ ԻՍԿԱՅԱՏԵԱՆ Պէյրուք - 2013



ԵՐԳԻ ԾԱՆԿԱՐՆԵՐ Յեղիսակ՝ ԳՐԻԳՈՐ ԲԵՍՏԵԱՆ 2013



ԱՆԹՈԼՈԳԻԱ 18-33 Կազմեցին եւ խմբագրեցին՝ ԼԻԼԻԹ ԳԱԼՍՏԵԱՆ ԱՐՔՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ



ՀԱՄԱՍԿՈՍՅՈՒՄԻ ՄԻՅԻԱՐԻՆ ԵՐԳԵՐԸ Խմբագիր՝ ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ Երեւան - 2013





ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ԲԱԳԻՆ *Pakine*

ԾԱ. տարի, քիւ 2



Գրականություն - արուեստ - իմացական աշխարհ

Ապրիլ / Մայիս / Յունիս 2013

ՎԱՐԻՉ ԽՄԲԱԳԻՐ
Յակոբ Պալեան

ԸԱՐՏՈՒՂԱՐ
Նադո Գեորգեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ

Սարգիս Կիրակոսեան	(Ա իրանան)
Մովսէս Հերկեղեան	(Ա իրանան)
Շուշիկ Տառնապետեան	(Ա իրանան)
Յակոբ Տէր Պալեանեան	(Ա իրանան)
Զարսր Բէշիշեան	(Ա իրանան)
Անուշ Թրումնյ	(Հայաստան)
Արթմնիկ Նիկողոսեան	(Հայաստան)
Հրանդ Մարգարեան	(Մ. Նահանգներ)
Անտիս Համան	(Մ. Նահանգներ)
Յարութիւն Պէրպէրեան	(Գամատա)

ԷԶԱՂՐՈՒՄ՝
Անի Փէիլիվանեան-Սարգիսեան

Հասցէ՝
Պուրճ Համուտ
Շաղղոյեան կեդրոն
Բ. յարկ
E-mail:
pakin@hamazkayin.com
Հեռ. 00961-1-241072

Տպագրութիւն՝
Համազգայինի
«Վահէ Ալթեան»
տպարանի

Յրուումի կեդրոն՝
Համազգայինի
Գրատարած,
Շաղղոյեան կեդրոն,
Պուրճ Համուտ
Հեռ. (01) 241263/4
Ֆաքս՝ (01)260329
Փոստարկը՝ 80-1096 Պ.
Համուտ
E-mail:imphamaz@inco.com.lb

Բ | Զրատարակութիւն՝
Համազգայինի
Կեդրոնական Վարչութեան

ԲԱԳԻՆ

ԱՊՐԻԼ, ՄԱՅԻՍ, ՅՈՒՆԻՍ 2013

ԾԱ. ՏԱՐԻ, ԹԻՒ 2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

■ ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ, ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԸՆԿԱՐԱՅԻՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՌԸՆՉՈՒԹԻՒՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏ - Յ. Պալեան	1
■ ԱՐՉԱԿ ԱՐՏԱՇԻՆ ԼԵՉՈՒՆ - Ի. Զիֆթեան ՔԵՌԻ ՄԱՍԻՍԸ ԿԱՄ ՉՍՏԱՑԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ - Արմինէ Պետրոսեան ԱՆՍԵՂՈՒԹԵԱՆ ԿԱՆԽԱԿԱՐԿԱԾ - Սուսաննա Յարութիւնեան	4 9 16
■ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ ՕՐՀՆԵՐԳԵԼՈՎ ՀԱՍԿԵՐԸ ԿՐԱԿԻՆ՝ ԿԸ ԾՆԻՄ ԱՆԶՐՊԵՏԸ ՏԱՂԻՆ - Ս. Կիրակոսեան	20
■ ԱՐՉԱԿ ՍՓԻՒՈՔ(ՆԵՐ)Ի ԱՐՁԱԿ(ՆԵՐ)Ի ԽՆԴԻՐՆԵՐԸ - Յ. Պալեան ՆՈՐԱՅՐ ԱՂԱԼԵԱՆԻ ԱՐՁԱԿԸ - Լեւոն Մուլաֆեան ՎԷՊՆ ՈՒ ՎԻՊԱԿԱՆԸ՝ ԸՍՏ ՅԱԿՈՐ ՊԱԼԵԱՆԻ - Լեւոն Մուլաֆեան «ԿԱՆԳ ԱՌ, ԵՍ ԱՅՍՏԵՂ ԵՄ» ՀԵՆՐԻԿ ԷՂՈՅԵԱՆԻ ԲԱՆԻ ԱՇԽԱՐՀԸ - Յ. Պալեան ՆԻԿՂՈՍ ՍԱՐԱՖԵԱՆ ԾՆԱԴԵԱՆ 100 ԵՒ ՄԱՐԴԱԼ 40-ԱՄԵԱԿ - Դոկտ. Սեդա Զիլեճեան «ՆԱՐԵԿ»Ի ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ - Սեպարգիր	24 30 38 41 50 73
■ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԱՄՊՐՈՉ ՊԻԵՐՍ ԵՒ ՅԱԿՈՐ ՊԱՐՈՆԵԱՆ ՆՈՅՆԱՏԱՂԱՆԴ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐ - Յ. Պ.	78
■ ԱՐԽԻ ԼԵՌ ԿԱՄՍԱՐԻ ԴԱՏԱԿԾԻՈՐ	85
■ ՄԵՐ ԿՈՐՈՒՄՆԵՐԵՆ ՄԱՐ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԱՐԱՋԱՄ ԱԼԻԶԵԱՆԻ	88
■ ԱՐՈՒԵՏ ՐԱՖՖԻ ԹՈՔԱԹԼԵԱՆԻ ՏԱՐԵՐ ԲԱՆԱԿՆԵՐԸ ԻՂՉ ԿԸ ՅՈՒՇԵՆ - Յ. Պ.	89

ՎՐԻՊԱԿ

«Բագին» 2012-ի 4-րդ թիւին՝ 50-ամեակին նուիրուած
բացառիկին բովանդակութեան մէջ (ներքին կողք),
Մովսէս Այնթապեանը կարդալ Մացակ Այնթապեան:

ԿԱՐԵՒՐՈՒԹԵԱՄԲ ՄԵՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՈՒ
ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ
ԿԸ ՅԱՆՉՆԵՆՔ ՀԵՏԵՒԵԱԼԸ.

ԿԸ ԽՆԴՐԵՆՔ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՉՂԿԵԼ
ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՐՈՆՔ ՆԱԽԱՊԵՍ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԵՆ ԳԻՐՔՈՎ,
ՍԱՍՈՒԼՈՎ ԿԱՄ ՀԱՄԱՑԱՆՅՈՎ:

Կողքի նկարը՝ «Յարութիւն»
Րաֆֆի ԲՆԵՐԱՅԵԱՆԻ




ԱՊՐՈՂ ԾԱՌ ՄԸ
Հեղինակ՝ ԱՐԱՍ ՀԱՅԿԱԶ
Կազմող՝ ՄԱՐԳԱՐԻՏ ԽԱՉԱՏՐԵԱՆ
Երեւան-2012

ՃԻՂԵՐ ՏԱՐԵՒՆԵՐ
Հեղինակ՝ ԱԼԻՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ



ՀԱՃՆՈՅ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 90ԱՄԵԱԿԻ
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆԻԹԵՐ ԵՒ
ՎԱԿԵՐԱԳՐԵՐ ՈՒ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ
Կազմեց եւ խմբագրեց՝ ԴՈԿՏ. ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԵՍԵԱՆ
Haigazian University Press

ԿՈՆԴԱԿՆԵՐ, ՊԱՏԳԱՄՆԵՐ
ԵՒ ԶԱՐՈՉՆԵՐ
Հեղինակ՝ ԽՈՐԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
Անթիլիաս - 2013



ՄԵՐՄԱՆԵՍ
Հեղինակ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՎՐԴ. ԿՈԱՆԵԱՆ
2013



ՏԻԳՐԻՍԻ ԱՓԵՐԷՆ
Հեղինակ՝ ՄԿՐՏԻՉ ՄԱՐԿՈՍԵԱՆ

